

491.99-8

2-55

4159

F - unapp.

7. 1920



2010

11761

ԿԱԶՄԵՑԻՆ
ԱՐՇԱԿ ԶԻԼԻՆԿԱՐԵԱՆ
ՏԻԳՐԱՆ ՌԱՇՄԱՃԵԱՆ
ԱԻԵՏԻՔ ԴՍԱՀԱԿԵԱՆ

2-554

Բ. ՏԱՐԻ 491.99-8
2-55

9988



Ինքնուրույն, փոխադրած յօդածների և ուսման նպատակով
համար իրաւունքը վերադառնում է:

28-242
13-2

491.542-82
2-61

ՏԱՍՆԵԿԵՐՈՐԴ ՏԻՊ

2002

Ե Ր Ե Ի Ա Ն

Ճգարան, (ՌՅՍ), Զաւարեան (նախկ. Բէկբուղեան) փող. № 12
1920

Ե Ր Կ ՈՒ Խ Օ Ս Ք

(Ա. հրատարակութեան)

1. Ձեռագիր յօդաձևներն արտագրութեան համար են. զբանով կարելի է գրել կարգաւ աւելի հիմնաւորել, աւելի խորացնել և հեշտութեամբ ուղղագրութեան վարժեցնել երեխաներին (տես «Դասընկեր» Ա. տ. Համառօտ բացատրութիւն գործադրողներին): Ձեռագիր յօդաձևները (ինչպէս և տպագիր) անպատճառ պէտք է արտագրութեան նիւթ դառնան այն ժամանակ, երբ դաստաւի ղեկավարութեամբ յօդաձև ըմբռնել են և վարժ կարգում են:

2. Յանկում ձեռագիր յօդաձևների հանդէպ փտկազօրում նշանակւած հնչիւնները, ածանցները և այլ բացատրութիւնները ցոյց են տալիս, որ իւրաքանչիւր արտագրութիւն պիտի ունենայ որ և է նպատակ և պէտք է գործնականապէս իւրացնել տայ ուղղագրական որոշ կանոններ:

3. Ընդհանուր պատկերները լինելու են ղեկողութեան, զրուցատրութեան և պատմելու նիւթ:

4. Յօդաձևների տակ գրւած պարզ գծերով պատկերները նկարելու համար են: Նախ իրական, ապա պատկերը պիտի դիտեն ու յիշողութեամբ նկարեն: Այս միջոցով անցած իրերը մանուկների համար ամբողջացած և կօնկրէտ կը լինեն:

1910 թ. Երևան:

1. Վեր կաց

Վեր կաց, մանուկ, խորունկ քնից,
Արևն արդէն ծագել է:

Վեր կաց փափուկ քո անկողնից,
Հաւը վաղուց խօսել է:

Վեր կաց, նայիր պատուհանից
Դէպի հեռու մեր դաշտեր.

Այս թէ ինչպէս մեզմ գեփիւռից
Սըւսւում են լիք հասկեր:

Դէ, շուտ վեր կաց, էլ մի քնիր
Ծոյլ ու անհոգ անկողնում.

Առ գրքերդ, առաջ դիմիր,
Որ բաղդ գտնես դու կեանքում:

2. Քաջ մանուկներ

221
2-081

Բարձր, անտառոտ սարի լանջին երկու երեխայ մորի էին քաղում: Յանկարծ մի արծիւ իջաւ, սուր ճանկերով բռնեց փոքրերից մէկին և վեր բարձրացաւ: Քաջասիրտ մանուկն երկու ձեռքով բռնեց արծւի բկից և բոլոր ուժով սեղմեց:

Արծիւը թուլացաւ, կամաց-կամաց ցած իջաւ և շնչասպառ վայր ընկաւ գետնին: Միւս ընկերը վրայ հասաւ, վերարկուն ձգեց արծւի գլխին ու իր գօտիկով կապեց նրա թևերը: Փոքրիկ բաջերն ահագին որսն ուսերին՝ դարձան տուն:

3. Աշուն

Աշուն է...

Ամառն անցաւ, եկաւ աշուն՝

Խաղողի լաւ ժամանակ,

Թէև տեսքով շատ չէ նաշխուն,

Բայց պտղաբեր եղանակ:

Չաշխուն է...

Մէկ էլ տեսար՝ արև կ'անի,

Խառնաշփոթ եղանակ,

Յանկարծ մէկ էլ՝ անձրև կ'անի

Մի բանի օր շարունակ:

Չան, ջան, ջան...


Ամբարները լիքը ցորեն,

Տարին առատ, գինին շատ.

Տես, բոլորը հնց են ուրախ,

Տարին կ'անցնի անաբատ:

4. Արեւն ու ծիածանը



Անձրևից յետոյ ամպերի տակից դուրս նայեց փայլուն արևը. երկնքի վրայ երևաց գունաւոր գեղեցիկ ծիածանը: Նա գեղեցիկ էր, այնչափ գեղեցիկ, որ ամեն մարդ կանգնած նայում էր ու հիանում: Ծիածանը հպարտացաւ և պարծեցաւ, թէ ինքն արևից էլ գեղեցիկ է:

— Ծձմարիտ է, դու գեղեցիկ ես, առաջ արևը. բայց ո՞վ է տալիս բեզ այդ գեղեցկութիւնը: Ծիա-

ծանր չհասկացաւ արեւին ու ծիծաղեց նրա վրայ:
Արեւը բարկացաւ, մտաւ ամպերի տակ, ծիծառնն
էլ անհետացաւ:

Էն ինչն է՝

Խալի ունեմ, թափ տալ չի լինի,
Ոսկի ունեմ, համբել չի լինի:

5. Գիւղացու ձիւն

Մէկը բազարում ձին ծախեց վեց թումանի:
Գնողները երեք հոգի էին, նրանցից մինն ասաց.

—Այ մարդ, ձիդ շատ թանգ ծախեցիր. ինչ կը լի-
նի, մի թումանը որդոցդ արեւին ինձ՝ բաշխես:

—Բաշխեցի, ասաց մարդը սրտաբաց:

—Տեսնում եմ, որ շատ բարի մարդ ես. բեր՝
երկու թումանն էլ ինձ բաշխիր, մէջ մտաւ երկ-
րորդը:

—Երկուսն էլ քեզ բաշխեցի:

—Դէ, որ այդպէս է, ախպէր ջան, Աստուած կեանքդ
երկարացնի. եկ՝ մի երեք թուման էլ ինձ բաշխիր,
խնդրեց երրորդը:

—Երեքն էլ քեզ փէշքէշ:

—Բա քեզ ինչ մնաց, ծիծաղելով հարցրեց մի
չորրորդը:

—Էլ ինչ պէտք է մնայ, ինձ էլ՝ իմ ձին, ասաց
մարդը:

6. Կռեկչի Կարօն

Առաւօտ լուսածէգին ոտքի վրայ է վարպետ Կարօն: Աշուն
է, հազար ու մի պակաս կայ. քուն ու դադար չունի: Օջախը կը-
րակ է անում, ա-
ման-չաման հաւա-
քում է և կամա-
ցուկ քթի տակին
խօսում.

—Հոգիս էլ դուրս
գայ, մինուճար տը-
ղիս, Մացակիս,
ուսումից չեմ զըր-
կի. աւելի խեղճ
կապրեմ, պանիր
հացի տեղ չոր հաց
կ'ուտեմ, թող Մա-
ցակս զըել կարգալ
սովորի, ինձ պէս
անճար չմնայ:

Յանկարծ Մա-
ցակն ուրախ-ու-
րախ ներս վազեց:

—Ապի, ուսում-
նարանի փողը, հա-
յերէն զըքի փողը
տուր, վարժապետն
ուզում է:

—Քեզ ապին մատաղ, Մացակս, ահա երկու արասի զըքի
փող արա. ուսուցչարանի փողն էլ մի երկու օրից յետոյ



կողարկեմ: Դէ, Մացակ ջան, վագիր, չուշանա:

Հէջ գարգ չունիմ. Մացակս ինձ էլ մխիթարանք է, մօրն էլ, քոյրերին էլ. գործի ժամանակ գործ կ'անեմ, գործ չեղաւ, աշուղ կը դառնամ, սագիս հետ կը խօսեմ. սագիս ձէնին կը գան մուշտարիներ. սագիս բոլբոլ ձէնին մեռնեմ...

Ես վարպետ եմ՝ գարգ չունեմ,
Ես աշուղ եմ՝ ցաւ չունեմ,
Իմ դարդս ու ցաւս էն է,
Որ գիր կարդալ չգիտեմ:

Էն ինչն է՝

Արտը սպիտակ, սերժը սև,
Ձեռքով ցանեմ, աչքով հնձեմ:

7. Զուրակահարը

1.

Զուրակահար Կիրակոսը կոնծել, գլուխը տաքացրել էր. նա գնում էր անտառով, մէկ էլ յանկարծ թըրրմբ՝ փոսն ընկաւ:

—Օյ, Օյ, Օյ, կողքս կտուրեց, ինքն իրեն ասաց Կիրակոսը. այ դու անպիտան որսորդ, էս ինչ ես շինել:

—Էն ո՞վ է, փսփսաց Կիրակոսը, էն ո՞վ է, տէր Աստուած:

Նա տեսաւ երկու փայլուն աչքեր և սարսափեց. գայլ է, գայլ. հիմա որտեղ որ է, ինձ կտոր կտոր կ'անի, մրտաժուժ էր Կիրակոսը և վախից թուրը չորացել էր:

2.

Կիրակոսը վեր առաւ ջութակը և ամեց:



Գայլը նայում և հանգիստ լսում էր:

Կիրակոսը քանի գնում, աւելի ու աւելի սրտանց էր ամուժ. գայլը լսում և ունում էր: Մէկ էլ Կիրակոսը վերև նայեց և ինչ տեսաւ. մի քանի գայլեր փոսի շորս կողմը նստած լսում են:

—Ես կորայ, ես կորայ, մտածում էր Կիրակոսը: Յանկարծ ջութակի երկու թելը կտուրեց. Կիրակոսն ամուժ հաւածում էր. մի թելն էլ կտուրեց:

—Ախ, զոնէ էս մի թելը մնար, մտածում էր Կիրակոսը և նորից ամուժ: Զութակի ձայնը որսորդները լսեցին, մօտեցան փոսին և Կիրակոսին ազատեցին:

Քարօր տնակը

„Մեւ, տեւ Քարօ, ի՞մ նաւակն ինչ
հիւնակի է լողում՝ գրի երեսին. ի՞նչ դէ-
սը նայիր, տեւ ինչ բարչր սար էլ եմ
շննել. էլ չաւես, թէ ծայկը ծոյլ է,
թի բան չէ. հա, հա, հա. թի լաւ տեւ,
չորս աչքով նայիր նաւակիս „:



— Ժայկ, դու էլ ի՞՞մ գեղեցիկ տնա-
կին նայիր... տես փոփրիկ լուսամուտ
ներ, դռնակ, կտրին էլ նստած սի-
րուն արագիլ: Քեժ Քեժ թի բրդիր,
դէ՛, ասա, տեսնե՞մ. —

էն ինչն է,

Ան է ասթի նման, սիպտակ է
կաթի նման, կը շորորայ ըարդի նման:

9. Խուլի այծերը

Մի խուլ մարդ երեք այծ ունէր. մէկի պողը կոտրած
էր: Ինչպէս է լինում, մի օր այծերը կորչում են, տէրն էլ
ընկնում է այս և այն կողմ այծերը գտնելու:

Նա պատահում է մի ուրիշ խուլ մարդու, որ վար է
անում, հարցնում է նրան.

— Բարի յաջողում, ախպէր, այծերս չե՞ս տեսել:

— Լաւ է, այսպէս ցանեմ, ձեռը մի կողմ թափ տալով՝
պատասխանում է վար անողը:

Այծատէրը կարծելով թէ դէպի ցոյց տւած. կողմն են
գնացել այծերը, ասում է.

— Թո՛ղ Աստուած վկայ լինի, թէ գտայ այծերս, պողը
կոտրածը քեզ եմ տալու:

Ասում է և գնում է որոնելու. երբ գտնում է այծերն,
ուրախ-ուրախ առաջն արած՝ քշում բերում է վար անողի
մօտ և ասում է.

— Շնորհակալ եմ, ախպէր, այծերս գտայ. առ այս այծն
էլ քեզ. այս ասելով՝ պողը կոտրած այծը քշում է դէպի նա:

— Ես չեմ կոտրել զրա պողը, ես տեղեակ չեմ, գար-
մանքով ասում է վար անող խուլը:

— Ի՞նչ ես իօսում, ասում է այծատէրը. ես այս եմ
խոստացել, որ մեռնիս էլ, միւս այծերից տուողը չեմ:

— Չէ, ես չեմ կոտրել, բարկացած ասում է մէկը:

— Չէ, ես այս եմ խոստացել, բարկացած պատասխա-
նում է միւսը:

Սա նրան, նա սրան, բանը հասնում է տուր ու դմբո-
ցի. վերջն էլ գնում են տանուտէրին գանգատ:

Գիւղի մօտ սրանց հանդիպում է մի պառաւ, որ նոյն-
պէս խուլ է լինում և հարսի ձեռքից փախած:

Այ նանի, ասում է այծատէրը, իմ այծերը կորել
էին. գնացի, էս մարդուն հարցրի, սա էլ տեղը ցոյց տուաւ.
պողը կոտրած այծս տալիս եմ, չի վերցնում. ես էդ եմ

խոստացել, որ մեզին էլ, միւս աշտերից տուողը չեմ:

—Այ նանի, ասում է արտատէրը. էս մարդն եկել ասում է թէ աշտիս պողը դու ես կտարել. ես, Աստուած է վկայ, այդ բանից բոլորովին տեղեկութիւն չունիմ:

—Է՛, որդիքս, Աստուած ձեզ բարի տայ, պատասխանում է պառաւը. ինչ էլ ուզում է լինի, ես ձեր խնդիրքը չեմ կարող կատարել. բանի որ մեր չքոտ հարսը տանն է, ես էն տունը ոտ կսխողը չեմ:



Դիտեցէք, թէ ով ինչ է անում և պատմեցէք:

10. Ծառերի վեճը

1.

—Ես ծառերի թագաւորն եմ, ասում էր կաղնին. իմ աքմատները հողի մէջ շատ խոր են, իմ բունը հաստ է, իմ ճիւղերն երկաթի պէս ամուր, իսկ տերևներս փայլուն ու պինդ: Ես միշտ կուռում եմ փոթորիկի, քամու և կայծակի հետ:

2.

—Ի՞նչ ես պարծենում, ասաց խնձորենին. դու ինչի՞ ես պէտք, միայն խոզերն են քեզ այցելում. իսկ ես տալիս եմ մեծ-մեծ խընձորներ, անուշ, թթւաշ համեղ պտուղներ. ինձ մօտ գալիս են ծեր ու ջանէլ, աղջիկ ու տղայ, հարուստ ու աղքատ. իմ պտուղներն ամեն սեղանի զարդարանքն են:




3.



—Մի քիչ սպասեցէք, ասաց մայրին. երբ ձմեռ գայ, այն ժամանակ ես ձեզ հետ կը խօսեմ. դուք բոլորդ տերևազուրկ կանգնած կը լինիք, իսկ ես իմ ասեղներով կանաչ կը մնամ: Ամեն նոր տարուն մարդիկ ինձ զարդարում, տօնածառ են անում: Իմ իւղոտ փայտից տներ են շինում, յատակ, առաստաղ պատրաստում, վառարան ու թոնիր վառում, փափուկ հաց թխում:

11. Խոզն ու կաղնին



Մի դարևոր կաղնու տակ
Խոզը ագահ ու անյագ
Էնքան կաղին զըխտեց,
Որ ցած ընկաւ ու փռեց,
Փըռեց, չըռեց ու քնեց,
Քնեց, քնեց, որ զարթնեց,
Դունչը տարաւ ու մէկից
Ծառը փորեց պինդ տակից:
— Քո արածը, սպասէ,
Չէ որ ծառին վնաս է.
Նա կը չորանայ արևից,
Ագռաւն առաւ վերևից:
— Չորանում է՝ չորանայ,
Ինձ ինչ օգուտ, որ մնայ,

Իսկի էլ չեմ ափսոսում,
Տակից էն խոզն էր ասում.
— Միայն կաղին ունենամ,
Ուտեմ, ուտեմ գիրանամ:
— Ա՛յ ապերախտ խոզենի,
Ով քեզ նման վիզ ունի,
Իր կոյր աչքով չի տեսնի,
Որ կաղինը հիւթալի
Կանաչ ճիւղերս են տալի,
Ասաւ կաղնին խոզուկին՝
Էն կախգլուխ կուզիկին:



12. Չար սկնիկը

1.

— Միտո՛ւ, միտո՛ւ, պատէպատ էր թռչկոտում կատուն մա-
ռանում:

Ա՛խ, եթէ ձեռքս ընկնէս,
Էս քո հոգին կը հանեմ, ասում էր
կատուն:



Էդպէս կը դաղեմ, էդպէս
հոգիդ կը հանեմ, ասում էր մու-
կը և առաստաղից կախած մրգերի կախանների վրայ ծըծըւալով՝
դէս ու դէն վազվզում:

Կատուն բարկացաւ, բայց ինչ օգուտ. նա մի անկիւն քաշեց
և քնած ձևացաւ:

— Վախկոտ, վախկոտ, ո՛ւր փախար, ասում էր մուկը:

Կատուն բարկացաւ, բայց տեղից չշարժեց. նա աչքի տակով
նայում էր ու մկան արածները տեսնում:

2.

Մուկը գնաց կառւի գլխի վերև կախած տանձի շարանների
վրայ նստեց և արագ արագ տանձի պոչից սկսեց կրծել. թը-
րըմբ... մէկ էլ տանձն ընկաւ կառւի գլխին:

Կատուն վեր թռաւ, դժւածի պէս այս ու այն կողմն ընկաւ,
մլաւեց, կանչեց:

Հա, հա, հա, ծիծաղեց մուկը վերևից, քունդ անուշ, ինչ լաւ
քնեցիր:

3.

Կատուն համբերեց, շաքաթներ համբերեց: Շատ կախաններ՝
տանձ, խնձոր, խաղող, սերկիւլ մուկը կերաւ, փչացրեց: Մի ան-
գամ էլ նա խնձորի վրայ նստած կրծում էր, կեղևներն ու կորիզ-
ները կառւին էր գցում և ասում.

Կեր, մի կեր, տես ինչ համեղ է:

Բայց մէկ էլ յանկարծ խնձորի պոչը կտրւեց, մկան հետ
թըրըմբ կառւի գլխին:

Կատուն վեր թռաւ, ծըծըւանին առաւ իր թաթերի մէջ,

պինդ սեղմեց և հանգիստ եկաւ, իր տեղը նստեց:

— Դէ գնա, որտեղ քոնը կ'ասես, այնտեղ էլ իմն ասա, ասաց
կատուն և սկսեց անուշ անել մկան թարմ միսը:

Կատուի խաղը մկան մահ է:

13. Հովիի ցուպը

Մէկ հովիւ հօտ էր արածացնում լճի ափերին. մի օր
երբ ուզում էր, որ ոչխարը յետ դառնայ, ձեռքի ցուպը
ձգում է: Ոչխարը դառնում է, բայց հովիի գաւազանը լճի
մէջն է ընկնում և ջրի պտոյտքի մէջ կորչում է: Անցնում
է մի քանի ժամանակ, մէկ օր էլ այդ հովիւն իր ցուպը
տեսնում է ուրիշ հովիի ձեռքին, պահանջում է, բայց պա-
տասխան է ստանում, թէ հաստատիր, որ ցուպի տէրը դու ես:
Փնում են գիւղի դատաւորի մօտ. ցուպի տէրն ասում է.

«Յիսուն տարի է հովուութիւն եմ անում. ամենայն տա-
րի մէկ ոսկի վարձ եմ ստացել և իմ ցուպը փորելով՝ ոս-
կիներս մէջն եմ լցրել»:

Ցուպը տալիս են իրան և նա իր փայտէ բսակի բերա-
նը բաց է անում, իսկոյն 50 ոսկին գետին է թափում. և
այսպէս դարձեալ տէր է դառնում իւր ցուպին:

Գտնող հովիից էլ հարցնում են, թէ այս գաւազանը
ճրտեղից է ձեռք բերել. պատասխանում է.

«Փետի բերանին արածացնում էի ոչխարներս, մէկ էլ
տեսայ, շուրջ իր փորից հանեց այդ գաւազանը»:

Կատու .

ժօխիկ, փխիկ. դու չար փխիկ,
Ծաւ սիրուն ես, խորամանկ ես,
Քեռախապաւ քաթեր ունես,
Աուր եղունգով ծաւներ ունես:
Ահկան զներդ շուտ եմ լսում,
Քեժ ալկերդ մթնում փայլում,
Երկար բեխերդ ոլորած,
Եւտե՛ Բկներին ծախ ես տալիս:
Քո ընկերիդ երբ տեսնում ես,

1007

Այո՛ղ այս ու այն կողմն ես շարժու՞մ,
 Քէ՛զի՛ր ծալու՞մ, կռայնու՞մ,
 Անքնի՛րդ փակ ծռռայնու՞մ.
 Բայց թէ յանկարծ մի խեղճ մկրկ
 Մի անկիւնից դուրս է ընկնու՞մ,
 Բո՛ւ պողպատէ քարթկնւտով
 Գլխին խփու՞մ ես, ապակու՞մ :



14. Տերեւները

1.

—Մենք ծառերի զարդն ու զարդարանքն ենք, ասացին տերեւները. առանց մեզ ինչի՞ նման կը լինին ծառերը. մենք սիրուն ենք, կանաչ ենք, մեր ստուերի մէջ մարդիկ, կենդանիները հանգիստ են առնում. մեր ստուերի մէջ ամեն մի թռչուն իր բունն է շինում, իր բունն է շինում, ուրախ երգ երգում:

Մենք ենք ծառերին կեանք տւողը, զարդն ու զարդարանքը:

—Ինչ էլ որ ասէք, իրաւունք ունիք, ասացին արմատները. մենք ձեզ խնդրում ենք, մի քիչ ցածրացէք, քիչներքև նայեցէք և դուք կը տեսնէք, թէ մենք ինչ բան ենք, ձեզ ինչ ենք տալիս: Աշնան վերջերին դուք էլ կը թափւէք, ձեզանից յետոյ եկող տերեւներին էլ կեանք կը տանք, էլի կը պահենք և այսպէս շատ շատ տարիներ: Հիմա էլ կ'ասէք, որ միայն դուք էք զարդ ու զարդարանք ու կեանք տւողը:

15. Հանելուկ

1.

Փոքրիկ Արմիկն ամեն առաւօտ շուտ վեր էր կենում, շուտ վեր էր կենում, իր փոքրիկ հօտը միշտ դաշտ էր քշում, արածեցնում. մի օր էլ նրան տէրն ասաց. —Արմիկ, բո՛ւ հօտն այսօր տար քաղաք, բոլորը ծախիր, միայն մի պայման՝ փողն

էլ բերես, հօտն էլ բերես և ոչ մի ոչխար չպակասեցնես:

2.

Արմիկը զարմացաւ. նա մտածում էր, հա մտածում. վերջն երբ տեսաւ, որ հնար չկայ, սրտիցաւից լաց եղաւ:

— Ինչո՞ւ ես լալիս, Արմիկ, հարցրեց մի աղջիկ:

— Դա շատ հեշտ բան է, քո ոչխարներին խուզիր, բուրդը ծախիր բաղաքում, փողն էլ, հօտն էլ առ՝ տուն տար:

— Այ բեգ լաւ խորհուրդ, ասաց Արմիկն ու ալդպէս արաւ:

Պատիկ է, բայց ճատիկ է:

16. Սրամիտ մուլան

Փաշի որդին միշտ ծաղրում էր մուլին. մուլան չկարողանալով համբերել՝ ասաց.

— Յիմար մի լինիր հօրդ պէս, խելացի եղիր:

Փաշան լսեց, բարկացաւ և բացատրութիւն պահանջեց:

Տէր, ես քո որդուն լաւ խրատ եմ տւել, ես ասել եմ. յիմար մի լինիր, հօրդ պէս խելացի եղիր:

Լեզուն դանակից սուր է:



Դիտեցէք, վերնագիր դրէք և պատմեցէք:

Ուռենի.

Աիրուն ուռենի,
 Կանաչ ուռենի,
 Եիւղերդ կախ կախ,
 Ինչու լես ուրախ:
 Աիրոդ է ծարաւել,
 արեւն է վառել,
 որ էդ քան զաւել
 Գլխիկդ ես ծռել,
 վտռոտ ես դառել.
 Ծնկիդ ես խփում,
 արցունք ես թափում:

17. Ճանճը

1.

— Օգնեցէք, օգնեցէք, խեղդում եմ, կանչում էր կաթի մէջ ընկած ճանճը. թևերս չեմ կարող շարժել, ազատեցէք, քոյրիկներ:


Ճանճի ընկերներն ուշք չէին դարձնում:

— Տը՛գ, տը՛գ, տը՛գ:

— Մեղու, ա՛յ մեղու, օգնիր ինձ, ազատիր այս նեղ զրուծիւնից, աղաչեց նրան ճանճը:

Մեղուն ուշք չդարձրեց, հեռացաւ, գնաց:


— Է՛յ, բարեկամ, մեծ կապոյտ ճանճ, ազատիր ինձ, խեղդում եմ:



— Շատ ծիծաղելի ես. ինչ յիմարութիւն է գալ կաթի մէջ ընկնել, պատասխանեց ճանճը. այսօր հինգ խոհանոց եմ մտել, ոչ մի տեղ միս չեմ գտել, որ ձերս ածեմ այնտեղ:

2.

— Ի՛նչ գժւար է մեր կեանքը, տրտնջում էր ճանճը. որ կողմը դառնաս, որ կողմը շարժես՝ վտանգ է. մէկ թէյի մէջ ես ընկնում, մէկ ջրի, մէկ կաթի, մէկ կերակուրի, որ մէկն ասեմ. Ճանից էլ դուրս գաս՝ ծտերն ու ծիծեռնակներն են քեզ բռնում՝ ուտում: Գիշերն անգամ հանգիստ չունիս, չղջիկների ձեռքից չես պրծնում:



3.

Խեղճ ճանճն ինչո՞ւ է կաթի մէջ ընկել, ասաց տանտիրոջ փոքրիկ աղջիկը, ճանճը հանեց, մի կողմ ձգեց:

Ճանճը հանգստացաւ, ոտքերով մաքրեց թևերը, փորը, կուրծքը ու թուաւ, գնաց՝ ձիու մէջքին նստեց: Այնտեղ մի ուրիշ ճանճ լաց լինելով պատմում էր և ասում.

— Բակի աղբի մէջ վաթսուենից աւելի ձու էի ածել, որ ձագերս տաք տեղ և լաւ սնունդ ունենան. նրանք արդէն մեծ մեծ սպիտակ օրգեր էին դարձել. ես շատ ուրախ էի, որ նրանցից մեծ մեծ և ուժեղ ճանճեր պէտք է դուրս գային, բայց մի օր էլ... ճէ, ի՞նչ ասեմ, աքաղաղն ու հաւերը քշուջ արին, նրանց կերան:

Այս խօսքերի վրայ ձին պոչով խփեց, ճանճերին ներքև գլորեց: Երբ մեր ճանճն ուշքի եկաւ, տընքտընքալով մի

տեղ հասաւ, հանգստացաւ, թռաւ, մտաւ մի խոհանոց:

4.

Այստեղ ճանճերն իրար խառնեցին, խօսույմ էին:

—Ի՞նչ է պատահել, հարցրեց մեր ճանճը:

—Մի՞թէ չես իմանում, ասաց մէկը. տանտիկինը թա-
կարդ է սարքել. ով այնտեղ է գնում, կաշում, մեռնում է.
մեզ ուզում են կոտորել, ոչնչացնել:

—Բայց չէ՞ որ մենք նրանց վատ բան չենք անում, աս-
աց մի ուրիշը, և այնչափ էլ քիչ ենք ուտում որ...

—Ի՞նչ չար են մարդիկ, ինչո՞ւ են մեզ չարչարում,
վրայ բերեց երկրորդը:

—Կարո՞ղ էք մտածել, քոյրիկներ, տանտէրը մէկ օր
պատմում էր, իբր թէ մենք ճանճերս մարդկանց վնասում
ենք, կեղտ, հիւանդութիւն ենք տալիս:

—Ես առաջարկում եմ հեռանալ այս տնից, ասաց մի
ուրիշ ճանճ:

—Ո՛հ, ո՛չ, տգտգացին ամեն կողմից. այստեղ լաւ է,
այստեղ ուտելիք շատ կայ:

—Իսկ ի՞նչպէս ազատենք թափարդից:

—Մենք բոլորին կասենք, որ թափարդին չմօտենան:

—Գեղեցիկ միտք, ասացին բոլորը և մնացին:

Ճանճը մի բան չէ, բայց սիրտ է խառնում:

18. Ճանճը

Խոնարհ ու հեզ

Մի յոգնած եզ

Արօրն ուսին,

Ճանճը պողին,

Մի իրիկուն

Գալիս էր տուն.

Մէկ էլ ճամբին

Մի ուրիշ ճանճ

Էն նստածին

Էսպէս ասաց.

«Էս եզան հետ

Ո՞րտեղից էդ»:

Քիթը տնկած

Ճանճն ասաց.

—Մենք հրտեղից,

Վարում էինք,

Վարատեղից:

19. Արծի սեյր

1.

Վո՛ւ, վո՛ւ, դո՛ւ, դո՛ւ, ճշում էր արծիւը վերեւից:

—Ո՞վ է հասել իմ բարձր բնին, ո՞վ է տարել իմ միակ
ձագին. ես նրան բզիկ բզիկ կ'անեմ, բարկացած ճշում էր
արծիւը և բարձր թռչելով՝ վո՛ւ-վո՛ւ անում: Նա առաջ
թռաւ, ամեն տեղ եղաւ, սրտես աչքերով ամեն ինչ տե-
սաւ, բայց իր ձագին ոչ մի տեղ չգտաւ:

Ճշում էր արծիւը, գիլ գիլ ձայներով դո՛ւ դո՛ւ կանչում,
էլի կրկնում, էլի կանչում, մինչև որ մի խուլ դո՛ւ դո՛ւ լը-
սեց:

—Որսորդի պարկիցն է այդ ձայնը գալիս, որսորդի
մօտն է իմ ազիզ ձագը, ասաց արծիւը:

Սրանից յետոյ արծիւը գիշեր ու ցերեկ էլ հանգիստ
չունէր, ամեն ժամանակ ձագին էր կանչում, որսորդի
կտրից նա չէր հեռանում: Սրտես աչքով նա շատ բարձրից
ամեն ինչ տեսնում, ամեն բան դիտում, ձագին էր փնտռում:

2.

Մի առաւօտ որսորդի կինը վանդակում դրած առձևի
ձագը՝ բակը դուրս բերեց. նոյնպէս դուրս բերեց իր միակ
որդուն, ծառի տակ դրեց:

Բայց մէկ էլ յանկարծ բակի հաւերը, բաղերն ու սագերը ճրղճղալով անկիւններ փախան. կատուն ու շունը ծակ ու ծուկ մտան:

—Արծիւն եկաւ, արծիւր հասաւ, ճրչացին ամենքը:

3.

Կայծակի նման՝ արագ թռիչքով, արծիւն իջաւ, արծիւն իջաւ, կեռ ուժեղ կտցով որսորդի փոքրիկ մանկանը բռնեց ու վեր տարաւ:

—Տարաւ, հայ տարաւ, մանկանը տարաւ, գոռաց մի աղջիկ: Մայրն իսկոյն վրայ հասաւ, աչքերը սեպցան, ոտքերը ծալեցին, երբ նա իր մանկանն արծւի կտցում բարձրումը տեսաւ:

Մայրն արծւի ձագին իսկոյն դուրս բերեց:

—Ահա քո ձագը, կանչեց մայրը ու ազատ թողեց:

—Իմ որդուս յետ տուր, արծիւ, այ արծիւ, կանգնած կանչում էր մայրը:

Արծիւն իջաւ, հանգիստ՝ շատ հանգիստ՝ մանկանը գրեց գետնի վրայ և ուրախ ճիչով իր ձագուկի հետ սուրալով գնաց:

Էն ինչն է՝ սև սալա, սիպտակ սալա, խաթուն մէջը կը սլւլւլայ:

20. Մանուկը ձորում

Սարի տակից բխչալով

Ձուրն է վազում ոլոր-մոլոր,

Ձուրն աղբիւրի վճիտ ու զով,

Գնում, թափւում ձաղկունանց ձոր:

Հէյ, աղբիւրի սիրուն ջրեր,

Ես էլ լինեմ ձեզ հետ ընկեր.

Տեսէք՝ ձեզ հետ ծաղկաձորում
Ինչպէս եմ ես ուրախ պարում:

Ձուրիկ-մուրիկ,

Անուշ քուրիկ,

Ախպէրդ եմ ես,

Սիրում եմ քեզ:

Դու բըշբըշն, ես տաղ ասեմ,

Քեզ հետ մէկտեղ ձորը վազեմ.

Իրար գրկած սարի լանջով

Գնանք, իջնենք ծաղկունանց ծով:

21. Խելացի դատաւորը

1.

Մի հովիւ և մի մսավաճառ իրար օձիք քաշ տալով մտնում են դատարան:

—Դատաւոր, արդար վճիռ կտրէ, ասում է հովիւը. այս մարդը մի քանի օր առաջ եկաւ սարը, քսան ոչխարս գնեց, մօտը փող չկար, խոստացաւ էսօր տալու, հիմա կանգնել ասում է թէ՛ ոչ քեզ եմ ճանաչում, ոչ տալիք ունիմ:

—Դատաւոր, էսպէս էլ փորձանք կը լինի, ասում է մսավաճառը. էս սարի մարդն եկել, օձիքս բռնել, բաց չի թողնում, ոչ խօսք է հասկանում, ոչ լիզու:

—Դատաւոր, գլխիդ մատաղ, ես սուտ չեմ ասում, երկինք, գետինք, Աստուծո՛վ կայ, քսան ոչխարս ասել է ու բան չի տւել:

—Սուտ է ասում. երկինք, գետինք, Աստուծո՛վ կայ, սուտ է ասում, սրտ երեսը չեմ տեսել:

Դատաւորը մտածում է, մտածում ու յետոյ դառնում, ասում է նրանց.

— Ես չգիտեմ, որ մէկիդ հաւատամ. երկուսդ էլ Աստծուն էք վկայ բերում. լաւ, Աստծուց զատ այնտեղ ուրիշ վկայ չկար:

— Ի՞նչ վկայ, սարի գլուխն ես էի, ինքն էր, քսան ոչխարս, վերին էլ Աստուծ, էլ վկայ չկայ, պատասխանում է հովիւը:

— Աստծուն չենք կարող հարցնել, ոչխարներդ էլ չկան, էլ ուրիշ բան չկար այնտեղ, այ հովիւ, լաւ միտք արա, նորից հարցնում է դատաւորը:

Հովիւը կանգնել միտք է անում:

— Բան չկար, թէ կուղես, մէկ էլ էն քարը կար, որի վրէն նստել առնտուր էինք անում, պատասխանում է հովիւը:

— Ասացիր, որ քար կար էնտեղ, դէհ գնա, էն քարը բեր, ես կը հարցնեմ:

Հովիւը զարմացած, ծոծրակը քորելով գնաց...

2.

Դատաւորն ուրիշ դատեր էր տեսնում: Անցաւ մի ժամանակ, մասվաճառը խնդրեց դատաւորին, որ թոյլ տայ իրեն՝ տուն գնայ:

— Ի՞նչ է, համբերանքդ կտրե՞լ է, սպասի՞ր՝ քարը բերէ:

Ներողութիւն, դատաւոր, ասում է մասվաճառը. ինչպէս կարող է նա էն քարը բերել, իսկի չի էլ կարողանալու ժաժ տալ, էնպէս մի ահագին ապառաժ է՝ հողի մէջ թաղւած...

Դատաւորն իսկոյն հրամայում է մասվաճառին բանդ դնել, եւ կ'սնչել հովւին, ոչխարների գինը լրիւ առնել ստախօս մասվաճառից և տալ ճշմարտախօս հովւին:

Ասած է՝ ինչ որ ցանես, էն կը հնձես:



22. Կռուկներ

Ուր էք գնում շարան-շարան,
Հէյ, դուք, սիրուն կռուկներ,
Ուր էք թռչում այդպէս արագ
Մեր աշխարհից հիւրասէր:

Ձրլնի՞ արդեօք մեր դաշտերը
Դուք նեղ դտաք ձեզ համար,
Եւ շտապով դուք թռչում էք
Մի երջանիկ նոր աշխարհ:

— Եւ պիտի գաք դարձեալ շտապ
Այս դաշտերը մեր սիրուն,
Երբ հեռանայ ցուրտ ձմեռը,
Երբ որ բացւի նոր գարուն...

Խելժ Բարդ

Ֆանապարհին աւազակները ուլուխին ղէկին
բռնել: Արանց շտափից ազատւելու համար,
Բարդը փախաւ. բայց երբ տեսաւ, որ աւա-
զակները ծօռնուած են՝ ուլուխաւ բազկենալ
Ծօռիկ այրի ղէջ: ղէկ էլ յանկարծ նայեց,
տեսաւ, որ փարայրի բերանին սարդը ուտայն
էր հիւսել. նա Բոաժեց, գոյշ կերպով ուտայ-
նի տակից սողալով Բոաւ այնտեղ:

— Աերս Ծոռեմիկ այս այրը, ասաց աւազակ-
ներից ղէկը, գուցէ նա այնտեղ է բազնւել:

— Ասա այդտեղ չէ Ծոռը, չէս տեսնուած, սար-
դի ուտայնն անկաւս է Բնայել: Այսպէս
Բոաժելով նրանի հեռացան և Բարդն ազատ-
ւել

1.

Ծուղրուղո՛ւ, զո՛ւ, զո՛ւ, զո՛ւ, ձայն տւեց աքաղաղն իր թա-
սից:

Հաւերը զարթնեցին, գլուխները հանեցին թևերի տակից:

— Այս գիշեր մի՛ լաւ երազ եմ տեսել, ասաց մի հաւ. զարու-
անձրեւ էր գալիս և մեր բակը լցւել էր զարով:

— Իսկ ես մի մեծ, շատ մեծ թրթուր էի գտել, ասաց ու-
րիշը. ես բոլորիդ կանչեցի, որ միասին ուտենք, բայց նա շուտ
փախաւ:

Ինչ լաւ երազներ էք տեսել, ասաց մի վառեկ. իսկ ես մի
վատ, շատ վատ երազ տեսայ. խոհարարն ինձ շամփուրի վրայ խո-
րովում էր:

— Շամփուրի վրայ, կրկնեցին ամենքը սարսափած:

— Զարմանում եմ, ուրիշ խօսելու բան չունիք, ասաց մի ծեր
հաւ. երազն ինչ է, որ հաւատում էք:

Հաւաքունը բացին. բոլոր հաւերը դուրս գնացին: Սպասեցէք,
սպասեցէք, ասաց աքաղաղը. ես ձեզանից դժգոհ եմ. ինչո՞ւ էք
մտնում բանջարանոցները, ինչո՞ւ էք հարեանների սոխը, համեմը,
կոտեմն ու թարխունը կտկրտում. ուզում էք, որ ամեն տեղից
մեզ դուրս քշեն: Զգոյշ կացէք, միւս անգամ այդպէս բան չանէք,
ապա թէ ոչ՝ ես իմ կոցով ձեզ կը պատժեմ:

— Դու էլ, սիրուն վառեկ, շատ ազահն ես. երէկ ձեր մայրը
քեզ և քոյրիկիդ համար թրթուրներ էր գտել, որ միասին բաժա-
նէիք, բայց դու մենակ ես կերել. այդ լաւ չէ, բլիկներին մենք
չենք սիրում:

Դու էլ, կոլոտ վառեկ, ինչո՞ւ քո ձևերը խոտի դէզի վրայ ես
ածում. հաւաքնում տեղ չկայ, ինչ է:

— Աղախինն իմ ձևերը վեր է առնում, չի թողնում, որ ես
թուխս նստեմ, ասաց կոլոտը:

— Շատ լաւ է անում, դու դեռ ջահէլ ես, քսանմէկ օր չես
կարող ձևերի վրայ նստել:

Մի բան էլ ասեմ, հաւեր, վերջին օրերս ձեզանից միքանիսը թոյլ կեղևով ձւեր են ածել. ո՞վ է մոռացել կրի կտորներ, սպիտակ քարեր ուտել. չէ՞ք իմանում, որ ձւի կեղևը նրանցից է կազմւում:

Այժմ գնացէք, ձեզ լաւ պահեցէք:



2.

Խոլորը դուրս եկան. մի քանի հաւեր բարձրացան աղբի վրայ քջուջ անելու, մի քանիսն էլ թրթուրներ գտան, լաւ նախաճաշ արին:

Ուրիշներն էլ աքաղաղի հետ գնացին. սա իր սուր և բաժեղ մագիլներով հողի տակից հատիկներ ու որդեր հանեց. հաւերը մեծ ախորժակով կերան:

Մէկ էլ ջու ջու ջու կանչեց ջանել աղջիկը և դեղին գարին շաղ տւեց:

Քաղցածն երազում փլաւ է տեսնում:

էն ինչն է՝

Մի բան տեսայ զարմացայ,

Ինքը կայ, մարմին չկայ.

Պօսեցի, խօսեց անբառ,

Ոչ ջրին է, ոչ չորին է,

Ողջ աշխարհը վախենում է,

Ինքը կայ, մարմինը չկայ:

25. Աքլորն ու մարգարիտը

Օրւան մէկը մի աքլոր

Քջուջ-մջուջ անելիս՝

Տեսաւ մի հատ մարգարիտ

Աղբի միջին փայլելիս:

Կոցեց, ասաւ. «Այս ինչ է.

Ինձ հարցնես, ոչինչ է.

Այ վա՛յը տամ էն մարդին,

Որ գին կը տայ մարգարտին.

Իսկ ինձ համար մի գարին՝

Արժէր այսպէս հազարին»...

26. Խեղօք մրջիւններ

— Ի՞նչպէս ազատւեմ այս անպիտան մրջիւններից, ասում էր մայրը որդուն. հագիւ կարողացայ մեղրի ամանից հեռացնել. զգւելի են, ամբողջ տան մէջ տարածւել են: Որդին վեր առաւ մեղրով ամանը, թելով կապեց և առաստաղից կախեց. Ամանի մէջ մի մրջիւն էր մնացել. երբ սա կերաւ, կշտացաւ, ուղեց դուրս գալ, այս ու այն կողմը նա-

յեց, իջնելու տեղ չգտաւ: Շուտով նա գլխի ընկաւ, թելի վրայով բարձրացաւ, առաստաղին հասաւ, այնտեղից էլ պատի վրայով իջաւ:

Քիչ յետոյ մըջիւնները շարան-շարան պատի վրայով բարձրացան, առաստաղից կախած ամանը մտան:

Ինքը չկայ թիզ ու կէս,
Արարմունքը գազ ու կէս:



Դիտեցէք, վերնագիրը դրէք և պատմեցէք:

գրիկ տօլման

Գրիգոր պապը իր քոռնիկի հետ եկաւ խնամուկ տուն: Մատաւ Աուսանք որ տեսաւ: դէ՞ զայն: -

— Բարձր եկար, հազար բարի, ինչպէս ես, ինչպէս է Նապիկ Նանը: ինչպէս են տղերիք, հարսները, աղջիկները, երեխաները: -

— Յնորհակալ եմ, շնորհակալ, լաւ են լաւ:

— խնամի Գրիգոր, բաղդի վրայ ես. հէնց հի՛մի պիտի եաշնեմ. համեցէ՛ք, համեցէ՛ք:

Ճաշը պատրաստեցին . Գրիգոր պապը որ
զրիկ տողման տեսաւ , զարնայաւ :

— Եսնամի Սուսան , գիտես ինչ . ի՞նչ Բէրս կե-
րակուրը քոնրից հանու՞մ , մի աման սառը
զուր էր լցնու՞մ ու յետոյ բերու՞մ . էդպէս
չստ համեղ էր փնու՞մ :

— Քո արեւը , եկեց նոր մի աման զուր լցրի

28. Ուղտն ու եղը

1.

Ասում են , որ մի ժամանակ,
էլ չգիտեմ սուտ թէ շիտակ,
Ճամբից մօտիկ մի անտառում
Գիւղից փախած էլ էր ապրում:

Մարդուց հեռու , բերից ազատ,
Սիրան ուրախ , ինքը հպարտ
Բէֆ էր անում մէն ու մենակ,
Մոռցած փախան , գոմ ու մարագ:

Օրւան մի օր էս էշի մօտ
Յոգնած , զաղրած , նիհար , փոշոտ,
Այլանդակ ու երկարավիզ

Մի ահագին ուղտ է գալիս:

— Գալի՞ բարի , ծուռտիկ ախպէր,
Նստիր , շունչ առ , ի՞նչ ես կանգնել:
Ինձ էլ վաղուց մի պատուական
Ընկեր էր պէտք ճիշտ բեզ նման:

— Շնորհակալ եմ , զոռան ախպէր,
Անտէր բերից եմ ես փախել:

— Լաւ ես արել , ես իմ հոգին,
Ինչո՞ւ տանջւենք բեռան տակին:
Ու էն օրից անտառի մէջ
Ընկեր եղան ուղտն ու էշ:
Եւ շատ օրեր յօժար , սիրով
Ապրում էին քէֆ քաշելով:

2.

Մի օր էշը մեր գիրացած
Իր ընկերին եկաւ , ասաց.

— Ծուռտիկ ախպէր , վաղուց է որ

Տաղ չեմ ասել: Կուգեմ էսօր

Անուշ խնդամ , ձայնս զլեմ:

Մի տաղ ասեմ , տրտինգ անեմ:

— Վայ , ինչ ափր , զոռան
ախպէր,

էդ ինչ գէշ բան ես մտածել:

Ախր չէ՞ որ ձէնդ լսեն ,

Մարդիկ կը գան , մեզ կը տանեն:

Օրի , լսիր խօսքը ծերի ,

Թէ չես ուզում , դառնանք գերի:

Տաղ ու տրտինգ չեն հարկաւոր ,

Թող էդ միտքդ վտանգաւոր:

Բայց իշուկի քէֆը տեղն էր ,

Ինչ էլ լինէր , երգել կուգէր ,

Ականջ չարաւ ընկեր ուղտին:

Վիզը ձգեց , ձայնով ուժգին

Տաղը զլեց: Էդ ժամանակ

Մօտիկ ճամփին , անտառի տակ

Հանգստանում էր մի քարւան:

էդ քարւանի մարդիկ եկան ,

Անտառ մտան , էշին , ուղտին

Շուտով գտան , բեռնոտեցին:

Ու քիչ յետոյ փշոտ ճամփով

Բեռան տակին տնքտնքալով ,

Ուղտն ու էշը տխուր , տրտում

Դէպի քաղաք էին գնում:

3.

Ամառւայ տաք այրող կէսօր ,
Ճամփէն քարոտ , ոլոր մոլոր ,

Ուժ կը մնայ էլ էշի մօտ ,

Գերի ընկած , սիրտը վշտոտ ,

Մի քիչ էլ անց , ճամփի միջին

Ուժը հատաւ , փուկեց գետին:

Հրճեցին զէսից , զէնից ,

Քաշքշեցին զլսից , պոչից ,

Հնար չեղաւ: Վերջը բերին՝

Խեղճ ծուռտիկին չոքացրին

Ու իշուկին իրա բեռով

Ուղտի մէջքին դրին զօռով:

Ուղտը ծանր բեռան տակին

Անիծում էր ընկեր էշին ,

Որ չլսեց ծերի խօսքին ,

Փորձանք բերաւ իրենց զլսին:

4.

էդպէս անցան սարեր ու ձոր ,

Քարոտ ճամբէք ոլոր-մոլոր ,

Շատն ու քիչըն էլ յայտնի չի՝

Վերջը հասան մի կամրջի:

էստեղ ուղտը ձայնով կամաց

էշ ընկերին ցածից ասաց.

--Մի ինձ լսիր , զոռան ախպէր ,

Վաղուց է որ ես չեմ պարել ,

Հիմի որ ես էս կամրջի

Վրէն պարեմ՝ հօ չի՛ փլուչի:

— Ծուռտիկ ախպէր ,

խելքի արի ,

Ո՞վ է լսել ուղտը պարի:
 Փորձանք կը գայ, մտքիցդ հան,
 Թող ողջ հասնենք մեր օթևան:
 Բայց ուղտն իր բանը գիտէր,
 Փոխադարձն անել կուզէր.
 Ոտը դրաւ էն կամրջին

Ու սկսաւ իր վերվերին:
 Էշն ինչքան լեզու թափեց,
 Ուղտը կարծես հէշ չսեց.
 Մին էլ շրջմփ...մեր խեղճ էշին
 Տեսան ձորի ջրի միջին:

Բարձր նստի ուղտատէրը,
 Ճամփայ կտրի ջորատէրը,

Միջից դուրս գայ ձիաւորը,
 Հա չո՛ւ, հա չո՛ւ իշատէրը:

Էշն ի՞նչ գիտէ՝ նուշն ի՞նչ է:

29. Մուշի գրագր

— Ես քեզ ջուրը կը տանեմ, ծարաւ յետ կը բերեմ, ասաց մուլան հարևանին:

— Չես կարող:

Նրանք գրազ եկան և գնացին: Երբ գետին հասան, մուլան ասաց.

— Այս չեղաւ, այս չեղաւ, երբ վերադառնանք, ես պիտի ասեմ՝ չխմեցիր, դու պիտի ասես՝ խմեցի. ո՛ր է մեր վկան, որ հաստատի:

— Եթէ այդպէս է, գնանք, վկայ բերենք, ասաց հարևանը:

Նրանք վերադարձան, մի մարդու պատահելով, մուլան կանգնեց, հարցրեց հարևանին.

— Մենք գետը գնացինք:

— Գնացինք:

— Դու ջուր խմեցիր:


— Ոչ:

— Ուրեմն ես տարայ, տո՛ւր գրագր:

— Հարևանը միայն որ գլխի ընկաւ, որ մուլան իրեն ջուրն է տարել, ծարաւ յետ բերել:

30. Մայր

1.



— Ես դողում եմ, ես մրսում եմ, լալով կանչում էր փոքրիկ կապիկը: Նա որք էր մնացել: Հարևան կապիկն երբ այս տե՛սաւ, մօտեցաւ նրան, գիրկն առաւ ու տաքացրեց:

— Լաց մի լինիր, սիրելիս, ասում էր նա. ես քեզ կը պահեմ, ես քեզ կը մեծացնեմ:

Մայր կապիկն ամեն օր փոքրիկի համար պտուղներ, միջատներ էր բերում ու կերակրում. երբեմն էլ նրան գիրկն առած՝

Ժառից ծառ էր թռչկոտում, թռչունների բնից ձևեր հա-
ւաքում, նրան տալիս: Փոքրիկ կապիկը փաթաթում էր
մօրը, համբուրում և ուրախ-ուրախ խաղ անում: Մայրը
նրան հարազատ որդու պէս սիրում էր:

2.

Մէկ անգամ կապիկները ծառերից իջան, որ ջուր
խմեն, յանկարծ թփերի միջից մի շուն դուրս պրծաւ և
հաչելով՝ կապիկների վրայ յարձակւեց: Բոլորը թռան ծա-
ռերի վրայ և թաք կացան: Փոքրիկ կապիկը չկարողացաւ,
նա ցատկեց մի մեծ քարի վրայ և վախից դողում էր. շունն
ատամները բաց՝ ուզում էր նրա վրայ յարձակել:

3.

Մայր կապիկն հրե տեսաւ, որ որսորդը հրացանով մօ-
տենում է իր որբիկին, կայծակի արագութեամբ յետ դար-
ձաւ և կատաղի կերպով շան վրայ յարձակւեց: Շունը վա-
խեցաւ, յետ յետ քաշւեց: Անվախ կապիկը թռաւ, ձագին
հասաւ, գրկեց նրան ու ելաւ ծառը:

Կապիկի քաջութիւնը և սէրը որսորդին դուր եկաւ.
նա հրացանն էլ չարձակեց:

31. Կապիկն ու ակնոցները

Ծերացել էր կապիկը,
Լաւ չէր տեսնում պապիկը.
Առաւ ակնոց
Մի ողջ կապոց.
Ակնոցները փոքր ու մեծ
Ձեռքերին էսէնց, էնէնց,

Մին գնում է իր գլխին,
Մին էլ պոչի մէջտեղին,
Ծին լիզում է, թքոտում,
Մին էլ սրբում, հոտոտում,
Հա փորձում է, հա փորձում,
Բայց ակնոցը չի գործում...
էն պապողեն ապակին
Լոյս չի տալիս պապիկին:
«Կորչեն, գոռաց, ջուխտ ու
կենտ,
Նա է յիմար, նա է խենթ,
Ով լսում է հետհետին
Մարդկանց հազար մի ստին.
Սրանց մասին
Ինչ որ ասին,
Սուտ է, սո՛ւտ.
էս ապակին
Խաւար աչքին
Ի՞նչ օգուտ»:
Ու կապիկը՝
Ծեր պապիկը
Խորը վշտով ակնոցները
էնպէս խփեց չոր քարին,
Որ ջուր կտրած փշրանքները
Կանաչ-կարմիր կապեցին:



Արեւիկ հայրիկ

Քո գեւորաց յետոյ շատ բան սովորեցի. փառէս
 հայրիկ ես սովորել եմ սիրուն սիրուն հէֆեաթներ
 ժիւաղելի առակներ, փոքրիկ, լաւ պատմութիւն-
 ներ: Ես հիմա նկարում եմ ինչոր, տանջ, խաղող,
 սեղան, արոռ և էլի՝ շատ բաներ: Ես գրից ար-
 տագրում եմ, կարդում եմ, նամակ էլ եմ գրում.
 Ես սովորել եմ քաւթանութիւն, երգ, որ մէկն
 ասեմ հայրիկ զան, ես շատ շատ բաներ փորեմ:

Իսկոյն շատ լաւ է, բայց երբ Աստիկը, Արմիկը,
 դու և Տայրիկը միտքէք ընկնում՝ լացա գալիս է:
 Երբ պիտի գաս ինչ տանես, տօներին եկ տար,
 հա՛ հայրիկ զան. շուտ գրիր, որ իմանամ: Յատ-
 բարե բոլորին, ասա՛ ամենքին էլ կարօտցել եմ:
 Աստիկին ու Արմիկին լաւ լաւ բաներ պիտի
 պատմեմ:

1910 թ. 2 մայիսի
 Երևան

Քո որդի Ժբանտ

33. Քեռի կառապանք


1.

— Էս ինչ անուշ գաթի հոտ է գալիս էդ սայլակից,
 մըրթմըրթում էր բակում նստած արջ-քեռին:

Արջը գնաց, սուսիկ փուսիկ սայլի վրայ բարձրացաւ,
 որ համեղ գաթան գտնի: Երբ սայլի ձիերը յանկարծ տեսան
 մեծ անճոռնի արջին՝ խրտնեցին, իջևանի մեծ դարպասից
 դուրս փախան:

Քեռին գոռաց. — Կանգնեցէք, ձիերը խիստ վախեցած՝
 արջին առան, քարով-քոլով փախցրին:

Սայլը ճօճւեց, վեր-վեր թռաւ, արջին կողքից-կողք
 զցեց:



2.

Արջը տեսաւ՝ բանը բուրդ է, քիչ քիչ ուղղւեց, յետին ոտքերի վրայ կանգնեց, սանձը բռնեց...

Գոռաց, հարմայ տւեց. իսկ ձիերը շատ կատաղի չափ ընկան, սայլը թոցրին, տուն հասան:

3.

—Ա՛յ անիծած սայլապան, ինչո՞ւ էդպէս իմ ձիերը չարչարել ես, տըքտըքալով, փընթփընթալով ասաց տատը ու դուրս եկաւ բակը և ինչ տեսաւ:

—Հողը գլխիս, էս ինչ բան է, էս ինչ արջ է. ո՞ւր է մեր փուշ սայլապանը, ասաց տատը, վախից մտաւ իր տընակը:

34. Ո՞վ է ցանում

1.

—Վարժապետ, դուք ցոյց տւի՞ք, որ գարին, ցորենը, կորեկն ու հաճարը մարդիկ են ցանում. իսկ հապա ո՞վ է ցանում անտառի ծառերը, դաշտերի խոտերը, ծաղիկները՝ հարցրեց Արամը:

2.


—Արշակ, վագիր, բռնիր այն հովանոցի նման մեծ չոր բոյսը, ասաց վարժապետը:

—Արշակը բռնեց և բերեց:

—Տղէք, ինչն էր տանում այս բոյսը:

—Քամին, քամին, կանչեցին ամենքը:

—Հապա, նայեցէք և ասացէք, ինչ կայ սրա ծայրերին:



—Սերմեր, սերմեր:

—Երբ քամին այս չոր բոյսը գլորելով տանում է, ինչ են լինում նրա վրայի սերմերը:

—Թափւում են, պատասխանեցին աշակերտները:

—Ո՞րտեղ:

—Այստեղ, այնտեղ:

—Ուրեմն քամին սերմերն ինչ է անում:

—Քամին սերմերը ցանում է:

—Այժմ ասացէք, երբ խոտերի, ծաղիկների սերմերը հասնում են, քամին ի՞նչ է անում նրանց:

—Քամին քշում, տանում է նրանց, ամեն կողմ ցանում:

—Ուրեմն բացի գիւղացուց էլ ո՞վ է ցանում:

—Քամին, քամին, կանչեցին աշակերտները:

3.

Մանուկները մտան անտառ:

—Աստղիկ, տես ի՞նչ է անում այն թռչունը:

—Խնձոր է կտցում, խնձոր ուտում:

—Տես, տես, վարժապետ, էն մէկն էլ խնձոր տարաւ:

—Այո, նունիկ, նրանք ուտում են նոյնպէս տեսակ-տեսակ պտուղներ՝ մոշ, մորի, հաղարճ և այլն:

—Արամ, այդ պտուղների մէջ ի՞նչ կայ:

—Կորիզներ:

—Ճիշտ է, թռչունները տեսակ-տեսակ պտուղներ տանում, ուտում են և շատ անգամ նրանցից կորիզներ են թափում, որոնցից թփեր են բուսնում:

—Այժմ հասկացայ, ասաց Բարկէնը. մեր գիւղի աւերակ վանքի գմբէթի վրայ մի մասրիթուփ կայ բուսած. նա ծաղկում է, կարմիր մասուր է տալիս. նշանակում է, այնտեղ կամ քամին և կամ թռչուններն են այդ սերմը տարել, այո, վարժապետ:


—Ճիշտ է, պատասխանեց ուսուցիչը:

—Այժմ ասացէք. ուրեմն էլ ո՞վ է ցանում:

—Թռչունները, թռչունները, ասացին աշակերտները:

4.

Մանուկները շարունակեցին իրենց ճանապարհը, հասան մի գետակի:



—Տղէք, տեսէք՝ ի՞նչ է բերում այս ջուրը:

—Սերմեր, սերմեր, գոչեցին մի քանիսը:

—Ուրեմն ջուրն էլ է ցանում, ասացին շատերը:

Մանուկները անցան խոտերի միջով:

—Միկիչ, էդ ի՞նչ է կպել շորիդ:

—Խոտի սերմեր, պատասխանեց Միկիչը:

—Ուրեմն մենք էլ ենք ցանում, հարցրեց Զարիկը:

—Ի հարկէ, ի հարկէ, ասաց Տիգրանը:

—Այո, վրայ բերեց վարժապետը. ապա մի անգամ էլ ասացէք, այսօր մենք ի՞նչ սովորեցինք:



Դիտեցէք, պատմեցէք և վերնագիր դրէք:

հօռսաղ շարդանը

Շարդանի հայրը գլուխն առաւ ու փնայ. փնայ հետ ու օտար աշխարհ, փող աշխատի, տուն պահի:

Փոքրիկ շարդանը հօռսաղ դառաւ, որ հայ եարի. առաւօտները շին փղով, գառների հետ ուրախանում էր. ամեն օր հանդիպ տուն յետ դառնալիս ծորը հարցնում էր.



Ապի, այ սպի, ապիս չեկաւ... շարդանը հանդուժ գառների հետ խօսում էր ու ստում.

— Արիտա վառւում, կրակւում է, ի՞նչպիսի գառներ, մուշ, մուշ կերէի, սառը զուրն ա մուշ արէի. ականգ դրէի շինիս չեկին. —
Դիւժ 15, 15, մի լուր տւի ի՞նչ փող, մի լուր...

36. Մողի մեղրը

1.

— Ինչ լաւ մեղր է, ասաց մողան և բերանը ջրով լցւեց:

Նա կանգնեց մրգավաճառի խանութի առաջ, պարկից հանեց հացը և այնպէս ձեացրեց, թէ մեղրի մէջ է թաթախում:

Մողան մեղրին նայելով, ախորժակով հացը կերաւ և ուզեց հեռանալ:

— Մողա, փողը, մողա, փողը. ձայն տւեց մրգավաճառը:

— Ի՞նչ փող, հարցրեց մողան:

— Կերածդ մեղրի փողը:

— Չէ որ ես քո մեղրից չկերայ:

—Իսկ եթէ իմ մեղըը չլինէր, կարող էիր դու քո հացն այդպէս լաւ, այդպէս ախորժակով ուտել, ասաց նա:

2.

Բանը հասաւ դատի:

Դատաւորը վճռեց, որ մոլլան պէտք է փողը տայ:

Մոլլան երկու մատը իրար քսելով՝ ձեռքնուձեռն էր, թէ փող է տալիս:

—Առ, այս մէկ, այս երկու, երեք...

—Ի՞նչ ես անում, մոլլա, փող տուր, ասաց մըր-գավաճառը:

—Այն տեսակ մեղրին այս տեսակ փողն էլ բա-ւական է, պատասխանեց մոլլան:

Էն ինչն է՝

Ոչ ցորեն եմ, ոչ գարի,

Որ հողագործն ինձ ցանի:

Առանց ձեռի հունցած եմ,

Առանց կրակ թխած եմ,

Թոնիր, ջաղաց տեսած չեմ,


Ձեր ամենիդ սիրածն եմ:

37. Ի Ժ ր

1.

Ես քոյրիկիս, մայրիկիս և երկու եղբորս հետ գնացի պարտէզ: Ի՞նչ լաւ է պարտէզն աշնանը:

Մենք բաղեցինք տանձ, խնձոր, դեղձ, տեսակ տե-սակ խաղող: Ուրախ ուրախ երգելով, մենք ցրե-ցինք պարտէզում:



Ես նստեցի սև խաղողի վաղի մօտ. մէկ էլ մի սառը բան ձեռ-քիս վրայով սո-ղաց. սարսա-փած վեր թը-ռայ:

Ախ, Աստուած ջան, ի՞նչ տես-նեմ. մի մեծ

սև իժ: Լեզուս բռնեց... Ես կորած էի: Յանկարծ մեր բաջ շունը իժի վրայ պրծաւ, նրան զգեց, գրգ-գրդեց, կտոր կտոր վար թափեց: Իժն էլ նրան կը-ծոտեց:

2.

Ես լաց եղայ և օգնութիւն կանչեցի. մայրս հասաւ և զարմացաւ:

Իսկ շճւնը. նա չկար. երկու շաբաթ յետոյ նա երևաց նիհարած, բաւական փոխւած:

—Նա գնացել մի տեսակ խոտ է գտել օձի թոյնի դէմ, կերել և առողջացել է, ասաց հայ-րիկը:

էն ինչն է՝
Աչքեր ունի՝ օտքեր չունի,
Մարդ կ'սպանէ՝ ձեռքեր չունի,
Հաւկիթ ունի՝ փետուր չունի,
Շորիք ունի՝ ար կար չունի:

38. Աշուն

Իաշտ ու այգի դեղին հագան,
Ծառ ու ծաղիկ մերկացան,
Քոչուններն երամ երամ
Մեր աշխարհից հեռացան:

Օրը մռայլ, ցուրտ ու տխուր,
Քարակ անձրև է մաղում.
Մէզն է պատել սար ու բլուր,
Էլ մարդ չկայ զաշտերում:

Չար ագռաւը ծառի վրից
Չմրան երգն է կոկոռում,
Մարդ, անասուն տուն ու բնից
Շերուկ հիւրին սպասում:

Անէջրև

Կայծակի փայլուն լոյսը մի ակնթաթ
Թուժ աթեն բան խաւարից հանեց ու
յետոյ էլի խաւարի մէջ թաղեց:



Քոյրիկ զան, օգնիր շորերս փոխելի. Այս-
րոյր. լաւ պրծանի. Մի ականգ դիր. լսում ես
զրի յայնը. հիմի ինչ դուրեկան է անջրևի լը-
պըրտոցը. տես, էն փոքրիկ կարիւններն իրար
գլխի դիպեցին, իրգեցաւցին. առուններ կապե-
ցին, իրար գրկած՝ փրոնա ուր գնաւցին:



40. Ժամկոչը եւ ուխտաւորը

1.

Օրւան մէկը կեռ պոչ շունը
Իր տիրոջից նեղացած՝
Մաքում գրեց տանից փախչել՝
Այ ու հացը մոռացած.
Բայց արի տես, ընկեր գտաւ
Մեր շատախօս աքլորին,
Դրին, վերցրին, խօսք մէկ արին,
Ճամբայ ընկան միասին:

2.

Գրաինք մտած աքլոր ու շուն՝
Մար ու ձորեր կտրեցին,
Իրիկնադէմ յոգնած, դադրած՝
Մի վանքի մօտ կանգնեցին:
— Է՛հ, հերիք է, ինամի աքլոր,

Արի քնենք, որ վաղ վարթենք.
Այս խօսքի հետ աքլորն ելաւ,
Թառեց վանքի կտուրին.
Շունն էլ մեկնեց չորս թաթերը
Վանքի դռան մեծ քարին:

3.

Լուսադիմին աքլորն ելաւ,
Կանչեց իրա կուկուրիկուն:
Որտեղից էր, հէնց էդ ժամին
Ձէնը լսեց մի աղւէս
Ու այդ ձայնին ուրախ-ուրախ
Մեր աքլորին եկաւ տես:
— Բարի լոյս քեզ, քաւոր աքլոր,
Խնդրեմ՝ ցած եկ ու դուռը բաց,
Վանքում կուգեմ աղօթել:

— Բարով եկար, սանհէր աղւէս,
Աչքիս վրայ տեղ ունիս.
Բայց խնդրում եմ՝ դռան կշտին
Մեր ժամկոչին տես, ասա,
Որ շտապի ու քեզ համար
Վանքի դռները բանայ...

4.

Ուխտաւորն ուրախ ուրախ
Դէպի դուռը շրտկեց,
Բայց երբ յանկարծ շանը տեսաւ,
Ոտքերը տակը ծալեց:
Իսկ բողարը տեղից թռաւ,

Վրայ հասաւ աղւէսին,
Պոչից բռնեց, բերանն առաւ,
Սկ ուխտ բերեց իր գլխին:
Շունչը կտրած, կազի տալով,
Աղւէսն հազիւ ազատւած
Արագ արագ վազվզելով
Ինքն իրան փրկեց թաց.

— Քանի վանքն այսպէս ժամկոչ
Իր դռան մօտ կը պահի,
Աստուած վկայ՝ նա իր օրում
Էլ ուխտաւոր չի տեսնի...

41. Ոգնին

1.

Ձատիկ էր: Արամն ու Լուսիկը շատ ուրախ էին. հայրիկը
նրանց ընծայել էր մի-մի գեղեցիկ պատկերազարդ գիրք. մայ-
րիկը համեղ գաթայ էր թխել, մօրաքոյրն էլ կարմիր, գեղին ձը-
ւեր էր ներկել, իսկ քեռի Պետրոսը մի ոգնի էր տւել իր փոք-
րիկ ձագերով:

— Տես, տես, Լուսիկ, ասաց Արամը. ոգնին գլուխը փշերի
միջից դուրս բերեց. տես, ինչպէս նա մտի և հացի կտորներ է
ուտում: Ա՛յ, էլի կուչ եկաւ, էլի գլուխը դուրս բերեց:

— Բ՛... հիմա էլ իր սուր փշերը ցցեց, գնդակ դարձաւ, աս-
աց Լուսիկը:

2.

Շուտով ոգնին նրանց ընտելացաւ, իր ձագերի հետ վազում

էր յետններից, նրանց ձեռքից հաց, միս էր առնում, մանուկներին ուրախացնում:

—Ապրի ձեր ոգնին, ասաց մի օր մայրը, մառանի մկները կերել, ոչնչացրել է:

—Պարտէզի խլուրդներին էլ փախցրել է, ասաց պարտիզպանը. հիմա մեր պարտիզի կարտօֆիլը, մատաղ ծառերի արմատ-



ներն էլ չեն փչանայ:

Մանուկները գարունն ու ամառը ոգնու հետ շատ խաղացին, ուրախացան. եկաւ աշունը. մի օր էլ ոգնին իր ձագերի հետ կարաւ: Երեխաները որոնեցին ամեն տեղ, թփերի տակ, անտառների մէջ ման եկան, բայց ոգնին չկար ու չկար:

Մանուկները տխրեցին և լաց եղան:

3.

—Եթէ կը խոստանաք ձեռք չառլ, ես ձեզ նրա և ձագերի

տեղը ցոյց կը տամ, անաց պարտիզպանը:

—Խոստանում ենք, ասացին մանուկները:

—Ահա այստեղ են. նրանք փոս են փորել, խոտ են բերել, տաք տեղ պատրաստել և քնել են. նրանք ամբողջ ձմեռը պէտք է քնեն, իսկ գարնանը էլի կը գարթնեն: Եկաւ գարունը. մանուկները շատ ուրախացան, երբ ոգնին իր ձագերով մօտեցաւ նրանց և սկսեց հետները նորից խաղալ:

42. Տղան և քոչնիկը

—Նախշուն թռչնիկ, ուր ես գնում, քո տունն ու բունն ում ես թողնում. կաց, ինձ համար երգիր երգեր, Ապրիլ ինձ մօտ ամբողջ ձմեռ:


—Ձեր աշխարհում աշուն, անձրև, Ծառ ու ճիւղեր առանց տերև, Ձկայ արև, տաք տաք օրեր, Ինչպէս երգեմ անուշ երգեր:

—Նախշուն տղայ, սիրուն տղայ, Ձեմ մոռանայ իմ տունն ու բուն. երբ որ կրկին գարունը գայ, Կը գամ, կերգեմ բեզ օրն ի բուն:

43. Չմեռ

Աշնան վերջին քամին եկաւ՝
Սրբեց դաշտեր, ձոր ու լեռ
Ու ամենքին համբաւ բերաւ,
Թէ գալիս է ցուրտ ձմեռ:

Ու մռայլեց երկինք, գետին,
Մէզը պատեց դաշտ ու սար:
Ցուրտն եկաւ, տիրեց երկրին,
Ճերմակ հագաւ մեր աշխարհ:
Մարդ, անասուն ծերուկ հիւրից
Վախենալով մտան տուն.
Փետն էլ լռեց ցրտի ահից,
Ախ, հեռու է դեռ գարուն...



Դիտեցէք, պատմեցէք և վերնագիրը դրէք:

44. Շողիկն ու պեծիկը

1.


Չմրան տաք իրիկուն էր: Ձիւն էր գալիս. ձիւնի սպի-
տակ փաթիլներն ընկնում էին մութ գետնի վրայ ու քնում:

Բոլոր փաթիլներն ամպերից իջան ու անուշ քնեցին
տաք գետնի վրայ,
միայն երկու փա-
թիլ ուշացել էին.
Նրանք էլ օդի մէջ
խաղ անելով, գալիս
էին ցած: Քոյր ու
եղբայր էին. քրոջ
անունը Շողիկ էր,
եղբորը՝ Պեծիկ:

Օդի մէջ պտուե-
լիս՝ մի պատուհան
տեսան, որից պայ-
ծառ լոյս էր երե-
ւում:

—Վա՛յ, ի՜նչ լաւ
լոյս է, ասաւ Շո-
ղիկն ու թուսւ դէ-
պի լոյսը, գնաց,
թառեց պատուհա-
նի երկաթի վրայ:

—Վա՛յ, ի՜նչ լաւ
լոյս է, ասաւ Պե-
ծիկն ու ինքն էլ մօտեցաւ, որ նստի երկաթի վրայ, բայց
տաքը սահեց, ընկաւ ցած մի թաց քարի վրայ:



—Շողիկ, ընկայ, ասաւ Պէծիկը:

—Դէ վեր բարձրացի, ասաւ Շողիկը վերեւից: Պէծիկն արաւ թէ թռչի՝ չկարողացաւ:

—Չեմ կարող, ասաւ արի մօտս, Շողիկ:

Հիմա կը գամ, իսկոյն, սպասիր տեսնեմ՝ ինչ են անում, պատասխանեց Շողիկն ու նայեց պատուհանից ներս: Ներսը մի սիրուն տօնածառ կար՝ կանաչ ճիւղքերը վառած մոմերով ու խաղալիքներով զարդարւած: Մոմերը վառւողւմ, պէծին էին տալիս ու փայլուն բոցերն ուրախ ուրախ շարժում զէս ու զէն: Սենեակը լիքը երեխայ էր: Ամենքը ուրախ պար բռնած ծառի շուրս կողմը պտուղում ու երգում էին. երգելիս էլ երբ գլարթ աչքերը զգում էին ծառից կախած ձիերին, կանֆէտներին, արջերին ու սկեզոծ ընկոյզներին՝ աւելի էին ուրախանում, ծափ տալիս, թռչկոտում:

Շողիկի աչքերը շլացան, երբ նայեց տօնածառին:

—Ի՞նչ լաւ տօնածառ է, մրմնջաց նա:

—Ես էլ եմ ուզում տեսնել, ձայն տւաւ Պէծիկը և էլի փորձեց վեր կենալ, չկարողացաւ:

—Շողիկ, արի:

—Հիմա կը գամ, Պէծիկ շան, հիմա:

—Դէ, շուտ արի:

—Այ, հիմա, ասում էր Շողիկն ու նայում ներս:

Պէծիկը թաց, մութ քարի վրայ դողում էր ու սպասում բրոշը:

Բայց Շողիկն այնքան տարւել էր տօնածառով, որ էլ մոռացել էր Պէծիկին: «Ի՞նչ լաւ բան է տօնածառը», մտածում էր նա:

Այդ միջոցին երեխաներն երգեցին նոր տարւայ երգը. Շողիկն էլ ուզեց նրանց հետ երգել, չկարողացաւ. միայն պայծառ շողշողաց ու ծիծաղեց:

—Շողիկ, դէ արի, ձայն տւաւ Պէծիկը լացակումած:

—Բայց Շողիկն էլ չէր լսում:

Շուտով երեխաներին միրգ բաժանեցին և վերջն էլ վիճակ գցեցին. տօնածառի ձիերը, արջերը, նապաստակը, կանֆէտներն ու սկեզոծ ընկոյզները տւին երեխաներին:

—Օխայ, օխայ, գոչում էին երեխաները և ուրախ ուրախ ծափ տալիս:

Շուտով տօնածառը վերջացաւ և երեխաները խաղալիքների հետ ցրւեցին իրենց տները. Յանկարծ Շողիկը յիշեց Պէծիկին...

—Պէծիկ, ձայն տւաւ անհանգիստ:

Բայց Պէծիկն էլ չկար...

Յաժ նայեց Շողիկը, տեսաւ, որ Պէծիկը թաց քարի վրայ այնքան լացել, լացել էր, որ հալւել, կորել էր:

«Վայ» արաւ Շողիկը, ծնկին տւաւ ու տխրեց՝ մնաց. պատուհանի երկաթին մենակ նստած տխրեց, տխրեց, վերջն էլ աչքերից արցունք վազեց ու նա էլ հալւեց, ընկաւ թաց քարի վրայ, կորաւ...

էն ինչն է՝

Ես մի վերմակ,

Սաստիկ ընդարձակ,

Եւ տաքացնում եմ,

Եւ մրսեցնում,

Դերձակներին էլ չեմ հարստացնում:

Մանուկները ծափ են տալիս,
Թռչկոտում են ու վազում.
Թռչկոտում են ուրախ, ուրախ,
Իրար բռնում ու ապում.

— Զան, ջան, ջան, շուտ կը վառեն
Կանաչ, կարմիր մոմերը
Ու ամենքիս կը բաժանեն
Տօնածառի նւէրը:

46. Նոր տարւայ նւերը

Ծերուկ պապին,, — Զան մանուկներ,
էն հին տարին, Թող ձեզ մրգեր
Գործը պրծած՝ Մայրիկը տայ,
Անցաւ գնաց: Ինձ մօտ չկայ.
Նրա ետքից Ես ձեզ համար
Իջաւ սարից Մի մի համար
էս նոր տարին Գիրք եմ բերել,
Նւէրն ուսին: Մէջը պատկեր,
— Այ նոր տարի, Սրա նման
Գալգ բարի, Ուրիշ մի բան
Դու մեզ նւէր էլ չգտայ
Ինչ ես բերել. Իբրեւ ընծայ:
Արդեօք խնձոր, Գիրքն է տալի
Զիր ու սալոր, Մտքեր բարի,
Թէ տանձ ու նուռ, Երգ, ցնծութիւն:
Զամիշ մի բուռ... Խաղեր սիրուն...

1.

— Մայրիկ, խանութի լուսամուտում մի գեղեցիկ, փոք-
րիկ, սպիտակ կոթով դանակ տեսայ. նրա լեզւակները կոկ-
լիկ, փայլուն, սիրուն էին. ան, եթէ ես մէկն ունենայի...

— Դանակն ի՞նչ պիտի անես, Սուրիկ.

— Մատիտի ծայր կը
հանեմ, սուլիչ կը շինեմ,
տանձ, խնձոր կը կտնւմ,



քեզ համար կարտոֆիլ կը մաքրեմ. գիտե՞ս, մայրիկ ջան,
նրա գինը շատ թանգ չէ, քսան կոպէկ է:

— Քսան կոպէկ, կրկնեց մայրը և տխրեց:

2.

Փոքրիկ տղայ, ինձ օգնիր, այս կապոցը հետս բեր, ա-
սաց փողոցում մի օտարական:

— Շատ լաւ, ասաց Սուրիկը և տարաւ կապոցը:

— Առ այս տասնհինգ կոպէկը քո աշխատանքի համար,
ասաց անծանօթը:

— Այդպիսի մի չնչին ծառայութեան համար տասնհինգ
կոպէկ. ո՛չ, ես չեմ կարող վեր առնել:

— Վեր առ, փոքրիկ, վեր առ, ասաց պարոնը և տուն
մտաւ:

Սուրիկն ուրախ-ուրախ տուն վազեց և ամեն ինչ մայ-
րիկին պատմեց:

— Ա՛յ, եթէ ես հինգ կոպէկ էլ ունենամ...

3.

Մի օր էլ սաստիկ ձիւն էր եկել: Սուրիկն իրենց դռան

ձիւնը քերել, մաքրել էր: Իսկ մեր ծեր հարեանի դուռը
ո՛վ պէտք է մաքրէ, ասաց Սուրիկը և այնտեղ էլ մաքրեց:

—Շնորհակալ եմ, որ ինձ օգնեցիր, ասաց ծերունին.
վերցրու այս տասը կոպէկը:

Սուրիկը շնորհակալ եղաւ, ծափ տալով վագեց բազար.
ես հիմա դանակ կ'ունենամ, դանակ, ասում էր նա:

Խանութի առաջ մի փոքրիկ աղջիկ դողդողալով լալիս
էր: Նրա ձեռքից մածնով լի ամանն ընկել, կոտրւել էր:

Սուրիկը մէկ նայում էր աղջկան, մէկ նայում էր դա-
նակին, յանկարծ աղջկայ ձեռքից բռնեց, տարաւ, մի աման
մածուն գնեց: Աղջիկն ուրախացաւ, Սուրիկն էլ ու-
րախ տուն վագեց:

48. Մկան ընտանիքը

1.

—Մայրիկ, այն ի՞նչ լոյս է, գնամ՝ մի տեսնեմ, ասաց
մկան ձագն իր մօրը:

—Չէ, բալիկս, սպասիր, երբ քոյրերդ մեծանան, նրանց
աչքերը բացւեն, այն ժամանակ ես քոյրիդ կը տանեմ:

—Մայրն ամեն օր ձագերին կաթ էր տալիս, մառանից
պանիր, ծեծած միս ու ճարպ բերում, կերակրում նրանց:
Մի օր էլ ասաց.

—Ձագուկներս, հիմա գուք մեծ էք, պէտք է ինքներդ
ձեզ համար կերակուր ճարէք. ես ձեզ ամեն ինչ ցոյց կը
տամ, սուս ու փուս եկէք իմ յետևից:


2.

Ի՞նչ մուկ ճանապարհ է, ասաց մէկը:

—Շատ ուր-մօլոր և նեղ է, վրայ բերեց միւսը:

—Լոյս, լոյս, գոչեց երրորդը:

—Ձգոյ՛շ, լոյսից միշտ զգոյ՛շ, ասաց մայրը. այս մեծ
սենեակը խոհանոցն է. այստեղից եմ միշտ ձեզ համար ճարպ,
միս, շաքար բերում: Տեսէք, այս ամանի մէջ որ մի լաւ
տապակած միս կայ. եկէք, կերէք: Ձագերը վրայ թափւե-
ցին ու սկսեցին ուտել:



—Այս շաքարն էլ:

Ձագերը քրուտ-քրուտ կրծեցին, բերանները քաղցրացրին:

3.

—Մայրիկ, այս ի՞նչ լաւ տեղ է. ինչո՞ւ միշտ այստեղ
չենք ապրում:

—Ի՞նչպէս կարելի է, ամեն օր մինչև ճաշ խոհարարն
այստեղ կերակուր է պատրաստում, շուտ-շուտ այստեղ է

գալիս մեր թշնամի կատունն նա, որ մկներին բռնում ու խեղդոտում է: Ձեր հօրն էլ նա խեղդեց:

Խոհանոց մտնելիս շատ զգոյշ եղէք, աչքներդ չորս արէք ու կառուին տեսնելուն պէս, իսկոյն փախէք, հեռացէք, իմացա՛ք:

Յանկարծ մի ծըծւոց լսւեց: Մայրը վագեց այն կողմը և ինչ տեսաւ՝ մի մեծ կաթսայ ջրով լի. ձագերից մէկն ընկել էր մէջը և խեղդւում էր. մայրն ինչքան աշխատեց, չկարողացաւ օգնել:

—Գնանք, գնանք, ասաց մայրը. ձեր քոյրերից մէկը խեղդւեց, թող այս ձեզ խրատ լինի:

Նրանք իջան ներքնատուն:

—Ճարպի կտոր, ճարպի կտոր, ծըծւաց ձագերից մէկը:

—Ո՛րտեղ, հրաեղ, լսւեց ամեն կողմից:

—Ա՛յ, ա՛յ, այն երկաթէ թելերով շինած տան՝ մէջ:

—Սպասեցէք, սպասեցէք, ասաց մայրը. դա թակարդ է, դրանով մկներ են բռնում, ոչ մի անգամ չսխալւէք ու մտնէք այդտեղ:

—Սա թնչ է, ասաց մի մուկ, գլուխը կոխելով փարջի մէջ:

—Փախէք, փախէք, կատուն եկաւ, գոչեց մայրը. բոլորն էլ անյայտացան:



49. Ի լ ի կ

Թելիկ-մելիկ, իմ իլիկ,

Ծէրդ բիզ ու սլուլիկ,

Թ՛մբուզդ կոր ու կլոր,

Շալկած թելդ միշտ կլոր:

Թելը տանեմ, աղին տամ,

Աղէն գթայ,

Սեւփող տայ,

Պարտաւորոջ հախին տամ:

Մանի, մանոցիդ մատանդ,

Ճարպիկ մանոցիդ մատանդ.

Մանդ մանի, թել արա:

Կոտրած սրտիս լոյս արա:

Մանդ մանի,

Թել հանի,

էն գլխից էս գլուխ

Մենք համկալ ենք, իլիկ ջան.

էս մատներա իմ կակուղ

Քեզ պըտտելուց կոշտացան.

Մանդ մանի, քանի կաս,

Իմ դարդերն են անպակաս:

Քողարք

Քակի ծայրի սենեակից չայն է
լաւմ: Քողարն անհանգիստ վազկում է
նրա չորս կողմը. կանգ է առնում, ականգ
դնում, մոտժում է ինքն իրեն.

— Եթ տէրս ինչպէս մտաւ, որ չտեսայ էս
նձ կարող է լինել...

Քողարի իտելը բան չի կորում. շուռ
ու մուռ է գալիս. հաշում հա հաշում է,
դուռն է չանկոռում, քոչկոտում է պա-
տը դէպի վեր, ուզում է լուսամուտից
ներս նայի, բան չի տեսնում:

— Աստուած ի՞նչ էլի ինչ փորձանք է գալու
գլխիս. մի ամիս առաջ մեր բակից ինչեր ա-
ւես չտարան. սիրուն գառնուկին կրօնքո-

ան իշուկին, հաւ ու էլէտին: Մեր տան
մեծը, էն սիրելի ծերունը, որիան բարկացաւ
միսս. ամօթից փչ էր մնում գետինը մոնէր:

Քողարը հաշում հա հաշում է. դուռն է
չանկոռում. չանկարժ դուռը բացւեց, դռան
միջին երեսաց իր տէրը:

• Եսկոյն փոխւեց Քողարը. փռւեց գետ-
նին, փորսող տալով ծոնցաւ տիրոգը. նայ-

ու՛մ էր արտասուակից ալիքով և ինքն իրեն
ասու՛մ: —

— Ես մեղք չունիմ:

Անկաւ մի շաբաթ, անկաւ էլի եօթն օր:
Քողարն էս բանը չի մոռանում ու չի մոռա-
նում. տիրոգը պատահեցիս փուլում է գետ-
նին ու ասում:

— Ես մեղք չունիմ, արդեօք ինչ է իմ սխա-
լը, իմ հասկանում:

51. Դատաւորը

Մի վաճառական քսակը կորցրեց: — Քսակիս մէջ երկու
հարիւր մանէթ կայ, ով գտնի, կէսը կը տամ իրեն, յայ-
տարարեց նա:

— Ես եմ գտել քո քսակն, ասաց մի խեղճ մարդ. վեր-
ցրու և տուր ինձ կէսը:

— Քսակիս մէջ մի թանկագին քար էլ կար, ասաց վա-
ճառականը. բեր էն էլ, որ տամ հարիւր մանէթը:

Խեղճ մարդն ինչ տեսակ դարձրեց՝ չեղաւ ու չեղաւ:
Վաճառականը խոստումը չկատարեց:

Գործը հասաւ դատի:

— Եթէ քո փողի հետ թանկագին քար էլ կար, նշանա-
կում է, այս քսակը քոնը չէ, վճռեց դատաւորը. փողը մը-
նում է գտնողին, իսկ դու գտիր քո քսակը:

52. Շիմօն

1.

— Շիմօ, եկ ինձ մօտ, ասում էր Նազիկն իր կապիկին:

Շիմօն վազում, նստում էր փոքրիկ տիրուհու մօտ,
նրա հետ խաղում, ուտում, խմում էր
և բոլոր ասածները կատարում:


— Շիմօ, տես, տիկնիկիս շորը կեղ-
տոտել է, ասում էր Նազիկը: Շիմօն
տանում, լւանում, չորացնում, ար-
թուկում և բերում էր:

Ամեն առաւօտ Շիմօն Նազիկի սե-
նեակը մաքրում, փոշին սրբում և ծաղկամանները ջրում
էր:

— Շիմօ, գնա, նաւթ բեր, ասում էր Նազիկի մայրը:
Շիմօն բազարից նաւթ էր բերում:

2.


Մէկ անգամ էլ Շիմօն մայրիկի ակնոցներն աչքերին



զրած, բազկաթողի մէջ բազմած գուլ-
պայ էր գործում:

—Մայրիկ, մայրիկ, եկ, տես Շի-
մօն ի՞նչ է անում, ծիծաղելով կանչեց
Նազիկը. մի տես, ի՞նչ լաւ է գործում:

Այս խօսքերի վրայ Շիմօն խփոյն
վեր թռաւ սեղից, մայրիկի շալը գլը-



խին գցեց և նազ անելով շորորաց:



Մէկ-մէկ անգամ էլ Շիմօն Նազի-



կի հետ սեղան էր նստում, անձեռոցի-
կը վզին էր կապում, գգալով ապուր
խմում, դանակով միս կտրում, իսկ պատառաքաղով ու-
տում:

Զիրով չլաժեղ .

Տե՛ս պատի երկու լսօրթին է: Միանում էր Ու-
կանի տանը մէկը մտնում, տասը դուրս է գա-
լիս. գնում էն շնորհաւոր պատ ասելու: Մի-
ղի տէրտէրը ներս մտաւ թէ չէ բոլորը ոտի-
կանգնեցին: Մուռն եկան Տե՛մն ու փոփրը, տէր-
տէրի ազը հաճութեցին: Ամենից վերջը ծ-
տեցաւ պատիկ հարսը: Զանկարծ լսեց Ու-
կանի ուժեղ չայեր:

—Հարս զան, Ուկեհաստ, տէրտէրը հապարից
մէկ է գալիս մեր տուն, իսպաւորդ է. մի խ-
նի չեով չլաժեղ արիւ րէր:

—Ինչ չլաժեղ, չէ որ պատ է, չայն տւին ա-
մեն կողմից:

—Իմ դէ լաւ. Ուկեհաստ պատւայ չլաժեղ
կանէ:

Ժաքար գնում, ինքն իրեն մտածում է



—Ո՞նց թէ պատւայ չլաժեղ. հիւ, իմացայ
իւղ չե՛մ անի, չէ՛քով կանէ՛մ. շտապե՛մ
շտապե՛մ չուն ու չէ՛քը պատրաստե՛մ



54. Ղարիբ մշեցի

Ղարիբ ախպէր, արի մեր տուն,
Բուք-բորանին ուր կերթաս,
Հերիք այդքան թափառելով,
Սեղադերդ քամուն աաս:
Անտուն ախպէր, արի մեր տուն,
էս էլ հայի օջախ է,
Իմ պաղ ջուրս, սե-չոր հացս,
Քեզ պէս ախպօր հալալ է:
Մշակ ախպէր, արի մեր տուն,
Դարդ ու ցաւդ ինձ պատմէ,
Լաց լացի տանք էս մեծ տօնին,
Սիրտս լացի կարօտ է...

Աղքատի տունը ամառն էլ բուք ու բորան է:

55. Խեղօք ծերունի

1.

Մի օր թագաւորն ու իր վէզիրը պտոյտի ելան ժողո-

վրդի մէջ. տեսան մի ծերունի մարդ՝ ոտները վեր քաշած
գետի մէջ կանգնել կտաւ էր լւանում: Թագաւորը մօտե-
ցաւ ծերուկին և հարցրեց.

— Ծերունի, շատ ես ապրել: շատ բան կը գիտենաս, ա-
սան, տեսնեմ, աշխարհն ինչպէս գտար:

— Աշխարհը գտայ ինձ պէս, պատասխանեց ծերուկը:

— Իննը ինչ արիւր, նորից հարց տուեց թագաւորը:

— Իննը տւի երեսուն երկուսին, բան չաւելացաւ, պա-
տասխանեց ծերուկը:

— Ջրադազդ ինչպէս է:

— Թագաւորն ապրած կենայ, սարը ձիւնը գրել է, ջու-
րը սառել է: Ջրադազս չի բանում:

— Լաւ, ծերունի, ասաց թագաւորը, հիմա երկուսումն
ես թէ երեքումը:

— Իմ բարի թագաւոր, երկուսը վաղուց երեք եմ արել,
պատասխանեց ծերունին:

— Խելացի ծերուկ, դու կարող ես սագ լաւ փետրել:

— Ինչպէս չէ, ինչպէս չէ, թագաւորն հտտատ մնայ,
դրա լաւ վարպետն եմ:

Այդ խօսքերից յետոյ թագաւորը ծերունուն մնաս բա-
րև ասելով, վէզիրի հետ հեռացաւ:

Մի փոքր ճամբայ կտրելուց յետոյ, թագաւորն ասաց
վէզիրին:

2.

— Հր՛, վէզիր, բան հասկացա՞ր ծերունու ասածներից:

— Ոչ մի բան չհասկացայ, թագաւորն ապրած կենայ,
ոչ մի բան, պատասխանեց վէզիրը:

Քեզ երեք օր ժամանակ եմ տալիս, որ այն ծերունու
պատասխանների միտքն իմանաս ու ինձ ասես. եթէ ոչ՝
գլուխդ կտրել կը տամ:

Վէզիրը մտածեց, մտածեց, տեսաւ՝ չի կարող գտնել,
ճարը կտրած, երկու գրպանն էլ ոսկով լիքը լցրեց և գնաց
ծերուկի մօտ:

—Այ խելացի ծերունի, այն օրը թագաւորն ինչ էր հարցնում քեզ, դու ինչ էիր պատասխանում. խնդրում եմ նրանց միտքը մէկ-մէկ ինձ ասես:

—Ո՛չինչ, վէզիր, պատասխանեց ծերունին, դատարկ բաներ էին:

Ի՞նչպէս թէ դատարկ. եթէ չկարողանամ իմանալ, թագաւորը գլուխս կտրել կը տայ. խնդրում եմ՝ ասես, կեանքս ազատես:

Այս խօսքերի հետ վէզիրը գրպանի մէկը դատարկեց ծերունու առաջ:

Ծերունին չտեսնելու տւեց:

3.

—Բարի ծերունի, նորից խնդրեց վէզիրը և միւս գրք-պանն էլ դատարկեց. խնդրում եմ՝ մի ուշացրու, ասա, օր չմնաց, երեք օր ժամանակ է տւել:

Ծերունին հաւաքեց ոսկիները և ասաց. — Թագաւորի հարցին թէ՛ աշխարհն ինչպէս գտար, ես էլ պատասխանեցի ինձ պէս, ասել կուզէի թէ՛ իմ կեանքի պէս աշխարհը տանջանք ու չարչարանք է:

Հարցրեց, թէ իննը ինչ արի. ես էլ ասացի. իննը տւի երեսուն երկուսին, բան չաւելացաւ. այդ էլ այն է՝ տարւայ ինն ամսւայ աշխատանքս տւի ատամներիս, բան չաւելացաւ:

Զրադացի մասին էլ որ հարցրեց. իմ խօսքն էլ այն էր, որ գլուխս սպիտակել է, արիւնս, սառել ատամներս չեն բանում:

Միւս հարցը՝ թէ երկուսումն ես, թէ երեքում, ես էլ պատասխանեցի թէ երեքում. ուղեցայ հասկացնել, թէ երկու ոտքիս հետ փայտ էլ եմ բանեցնում, երեքով եմ քայլում, այդ էր, էլ ուրիշ ոչինչ, վէզիր:

—Ծերունի, հապա չասիր թէ սազն ինչ էր:

Այդ սազն էլ դու ես, ան, եկար մօտս, մի լաւ փետրեցի:

Վէզիրի ճարն ինչ. շնորհակալութիւն տալով՝ հեռացաւ ծերունուց և երեք օրը լրացած ներկայացաւ թագաւորին

իր պատասխաններով:

Ապրիս, վէզիր, ասաց թագաւորը, բայց սազը մոռացար՝ դա ինչն էր:

—Թագաւորն ապրած կենայ, մեղքս ինչ թագցնեմ. այդ սազն էլ ես էի, որ երկու գրպան ոսկի տւի ծերունուն և գլուխս ազատեցի:

—Թագաւորը քահ-քահ ծիծաղեց վէզիրի միամտութեան և ճշմարտախօսութեան վրայ և ներեց նրան:

56. Փարիլները

Չարաճճի ու կոււարար
Փաթիլները պաղ ձիւնի
Ուրախ խաղում, զարկում իրար,
Հրհրում են մին մինի:

Ապա յոգնած իջնում գետին,
Գրկւում են իրար հետ
Ու ջուր կտրած, երգով ու ժգին
Առաջ վազում դէպի գետ:



Դիտեցէք, պատմեցէք և վերնազիր դրէք:



Արւուելը .

„Մակա ոսկի է ., Ժի օր փլամ
հպարտ հպարտ արւուելի սաւալ .

— Յերեմիք թէ

Առաւ, ածօր է .

Ժի պարծենալ գոնէ ինչ ծօռ ,
Եւստափորիկ կաւ է աւօր .

Որտեղից եւ՞ գալիս բա ես
Մակի կաւ է , թէկուզ հալիս :



58. Խորամանկ աղետը

Քաղցած աղւեսը շատ ման եկաւ, որ մի բան գտնի, փորը կշտացնի, բայց բան չգտաւ: Մէկ էլ տեսաւ մի խումբ ագռաւներ, խորամանկը փռւեց ձիւնի վրայ, ոտքերը մեկնեց ու ձկացաւ սատկած:

— Դ՛հ, դ՛հ, դ՛հ, գնանք աղւեսի աչքերը հանենք, նախաճաշ անենք, կռաւեցին ագռաւները:



— Միթէ նա սատկած է, հարցրեց մէկը:

— Ձգոյ՛շ կացէք, խորամանկը փորձանք կը բերէ:

— Բայց նա չի շարժուում:

— Տէս, շունչ էլ չի առնում:

— Իսկապէս, աչքերն էլ անշարժ են:

— Ձէ, նա սատկած է, ասաւ մի ագռաւ և վրայ հասաւ, պոչը պինդ կտցեց ու յետ յետ փախաւ:

Աղւեսը անշարժ պառկած էր գետնին:

— Սատկած է, սատկած, ասաց մի ուրիշը և վրայ հասաւ, որ աչքը հանէ:

Աղւեսը հնազ արաւ ու բռնեց:

56. Աղետը

Աղւեսն եկաւ լանջիկ լանջիկ,
Ոտներ ունէր կարճիկ կարճիկ,
Միտքն էր ընկել անուշ քարճիկ,
Ուզեց մտնել հաւի բնիկ:

Պատի ետքից յանկարծ ելայ,
էդ աղւեսի ոտքն առայ:

Ուզեց կծել՝ դունչը կսլայ
Ու քաշ տալով բակը տառայ:

— Հաչան, Վազան, Բօղալ, Շիրին,
Ձէն տւեցի մեր շներին:

Հիմա դու տես էս քաջերին,
Գողի գլխին ինչ օր դրին:



57. Ճպուռն ու մրջիւնը

Թրուի-վրուի մի ճպուռ

Ողջ ամառը շուռ ու մուռ

Երգեց, ճռաց,

Ճըռճռաց:

Մին էլ ըհը՝ ձմեռը

Փռեց իրա թևերը,

Բացեց գորգը սպիտակ,

Դաշտերն առաւ ձիւնի տակ:

Եկան օրեր ցրտաշունչ,

Ճպուռն ընկաւ լուռ ու մունջ:

Քաղցած փորին էլ ինչ երգ,

Յուրաք մարաւ ոտ ու ձեռք:

Ձընգըր-ղընգըր դողալով,

Ծանր ծանր սողալով,

Նա մըջիւնին ասում էր.

«Գլխիդ մատաղ, սանամէր,

Մի ճար արա, շունչ առնեմ,

Ճրտից, սովից չմեռնեմ:

Կերակրի, տաքացուր,

Մինչև զարուն ապրեցուր»:

— Ի՞նչ խաբար է, իմ սանիկ,

Ձարմանում եմ, ա ջանիկ,


Չաշխատեցիր ամառը,
Ասա, ինչ էր պատճառը:
— Էդպէս բանի, սանամէր,
էլ ո՞վ ժամանակ ունէր.
էն խոտերում բուրակէտ

Երգում էի մերոնց հետ:
— Երգում էիր, շատ բարի,
Այժմ էլ բռնի վերվերի,
Քամին ծափ տայ՝ դու պարի:

58. Մատնեմատ

1.

Մէկ անգամ մատնեմատը մի շատ թանկագին մատանի դրեց: Մատանին փայլում էր արեւինման, պէժ պէժին էր տալիս կարմիր ու կանաչ, գեղին ու կապոյտ: Մարդիկ հաւանում էին և շատ գովում:



Մատնեմատը մտածում էր, թէ ինքն բոլոր մատներին սիրունը և լաւն է: Մի օր էլ պարծենալով ասաց միւս մատներին.

— Երանի գիտենամ՝ դուք ինչո՞ւ համար էք իմ մօտ շարւած, ի՞նչ բանի էք պէտք. տեսէք, ես ի՞նչպէս փայլում եմ, մարդիկ միշտ ինձ են նայում և գովում:

2.

— Եթէ այդպէս է, հպարտ քոյրիկ, էլ մենք քեզ ընկեր չենք լինի. գնա՛, ապրիր, ինչպէս ուզում ես, ասաց բուժը:

Բոլոր մատները համաձայնեցին: Երկու օր յե-

տոյ մատնեմատը մի շատ գեղեցիկ վարդ տեսաւ և ուզեց պոկել:

Ոչ մի մատ նրան չօգնեց: Որչափ աշխատեց, չարչարւեց, չկարողացաւ վարդը պոկել:

— Մենք քեզ չենք օգնի, ասաց մեծ մատը: Մի երկու օր էլ դրա վրայ անցաւ, մատնեմատն ուզեց բալ քաղել: Միւս մատներն էլ ի՞նչ չօգնեցին. դէս ու դէն ընկաւ, շատ-շատ չարչարւեց, չկարողացաւ բալ քաղել:

— Մենք քեզ չենք օգնի, ասաց ցուցամատը: Մի օր էլ մատնեմատն իր տիկնիկին ուզեց զարդարել, որ հետը խաղայ, որչափ չարչարւեց, չկարողացաւ:

Մատնեմատը նոր հասկացաւ, որ ինքը մէն մե- նակ բանի պէտք չէ: Նա դիմեց միւս մատներին, որ իրեն օգնեն:

— Մենք քեզ չենք օգնի, ասացին բոլոր մատ- ները միասին:

Մատնեմատը մոլորւեց, գլուխը կախեց, մտա- ծեց և հասկացաւ իր սխալը. նա նորից դիմեց ըն- կերներին, որ իրեն ներեն, առաջւայ նման ընկել լինին:

Մատները ներեցին: Այն օրից դէսը ձեռքի մատ- ները մնացին սիրով և միշտ օգնում են մէկ մե- կու:

Մի ձեռքը ծափ չի տայ, ես աղա, դու աղա, մեր աղունը ո՞վ աղայ

59. Դարբին

1.

Կռանը ձեռքին, զնդանն առաջին,
Քիթ, երես մրոտ դարբնոցի միջին,
Կաշէ գոգնոցն առաջը կապած՝
Լոխկ կանգնած է մեր Խաչօ դարբին:

Փուքսը փռւն հա փռւն փչում է փչում,
Կայծեր ու մախիւր դէս ու դէն սփռում,
Երկաթի մի շերտ հնոցը կոխած՝
Սաստիկ տաքիցը կարմրում է, կակղում:

Խեչօն հանում է երկաթի շերտը,
Զնդանի վրայ կռանում, ծեծում,
Շինում նրանից պայտ, մեխ ու կացին
Եւ իսկոյն ջրի տաշտակը կոխում:

Թշոււմ է երկաթը ցուրտ ջրի միջին,
Ամպի պէս փռում տաք տաք գոլորշին,
Կրկին պնդանում, կրկին փափկանում,
Մինչև որ պատրաստ շարաւում գետին:

Այսպէս ամբողջ օր մեր դարբին Խեչօն,
Կրակի առաջ, այն կեղտ ու մրում,
Մի կտոր չոր հաց ճարելու համար,
Կուշ-ձիգ անելով իր կեանքն է մաշում:

Ժամանակով չարչու մէկը մի խանութպանի ծախում
է տասը ձու, փողը կանխիկ չի առնում, այլ գրում է ապա-
ռիկների գրքում:

Գրում է և մոռանում. մէջտեղն անցնում է տասը
տարի. մի օր էլ իր ապառիկների գիրքը թերթելիս մէկ էլ
աչքին է ընկնում, որ խանութպանը տասը ձւի գինը պարտք
է մնացել:

Միտք է անում՝ միտք ու վեր է կենում, գնում թագա-
ւորի մօտ գանգատ:

--Թագաւորն ապրած մնայ, ասում է չարչին. էսօրից
տասը տարի առաջ ես այս ինչ խանութպանին ծախել եմ
տասը ձու, բայց փողը չեմ առել: Հիմա դու տես, եթէ այդ
ձւերն իմ ձեռքիս մնային, ես թուխսի տակը կը գնէի.
տասը ձւից դուրս կը դար տասը ձուտ. այդ տասը ձուտը
թուխս կը գնէի, նրանցից ամեն մէկն էլ տասը ձուտ կը
հանէր, էդ բեզ կը լինէր հարիւր ձուտ. հարիւր ձուտն էլ
նորից թուխս կը գնէի, կստանայի հազար ձուտ, որ հաշ-
ւում եմ, տասը տարւայ մէջ ինչ մեծ հարստութիւն կը
բռնէ իմ տասը ձուն, էլ ասել չի լինի: Հիմա խնդրում եմ,
աղաչում եմ, իմ փողերը հաշւածիս պէս լրիւ առնես խա-
նութպանից՝ ինձ տաս:

Թագաւորն իսկոյն կանչել է տալիս խանութպանին,
խանութը ձեռքից խլում, յանձնում է չարչուն:

2.

Այս գէպքից մի քանի օր յետոյ թագաւորը հագուստը

փոխած՝ վէզիրի հետ ման է գալիս քաղաքում: Փողոցով անցնելիս նրանք պատահում են մի խումբ երեխաների, որոնք ընկոյզ են խաղալիս լինում:

Մանուկներից մէկն ասում է. — Ընկերներ, հերիք է ընկոյզ խաղանք, հիմա էլ արիք թագաւորի դատաստանը խաղանք: Եւ ես կը լինեմ թագաւորը, Մինասը չարչին, Օնիկն էլ խանութպանը, մնացածներդ էլ ժողովուրդ եղէք: Տեսէք, ես ինչպիսի դատաստան կը կտրեմ:

Թագաւորն ու վէզիրը հետաքրքրւում են և հեռու կանգնում, նայում:

Մանասը գալիս է մանուկ թագաւորի մօտ և ասում.

«Թագաւորն ապրած մնայ, խանութպան Օնիկը տասը տարի առաջ ինձ պարտ էր տասը ձու, եթէ այդ ձւերն իմ ձեռքին մնային, թուխսի տակ կը դնէի, տասը ձւից դուրս կը գար տասը ձուտ. այդ տասը ձուտն էլ թուխս կը նստէին, ամեն մէկը կը հանէր տասը ձուտ, այդ կը լինէր հարիւր ձուտ. ու այդպէս գնալով-գնալով մինչև օրս մեծ գումար կը բռնէր, խնդրում եմ դատ անես, Օնիկից փողերս լրիւ առնես, տաս ինձ.

3.

— Չայնդ կտրիր, անպիտան չարչի, բարկացած պատասխանում է մանուկ թագաւորն, այդպէս էլ բան լինի. գնա, մի պառաւի հարցրու, տես թէ ինչ կ'ասէ: Մի թուխսն իր տասը ձուտը տասը հաւ չի կարող դարձնել. չէ՞ որ կատու կայ, շուն կայ, ուրուր կայ, ցաւ կայ, դռան տակ մնալ կայ, հազար ու մի փորձանք, ես ռը մէկն ասեմ...

Ես էլ մեր թագաւորը չեմ, որ բան չհասկանամ, շատ-շատ առ քո տասը ձւի տասնապատիկը:

Մանուկ ժողովուրդն ուրախ-ուրախ ծափ է տալիս.

«Ապրած կենայ մեր թագաւորը, այ արդար դատաստան»: Այստեղ թագաւորը լեզուն կծում է ու վէզիրի հետ խօսիչն դառնում պալատ:

Միւս օրը թագաւորը պալատ է բերել տալիս իմաստուն մանուկին և նշանակում է իրեն խորհրդատու. խօսք չկայ, որ իր վճիռն էլ փոխում է, խանութպանին յետ է դարձնում խանութը, չարչուն էլ տալիս է հարիւր ձու:

Մարդ կայ հազար արժէ,
Հազար կայ մէկը չարժէ.
Էն մարդը որ հազար արժէ,
Անպէտքին քով փող չարժէ:



61.

Յորեկ եղաւ, ոչխարն եկաւ,
Ազիդ բալէս քնած մնաց.
Վեր ել, բալայ, անուշ ճղա՛,



Միտիկ արւն, ծիծիկ մանն,

Արիծիկ-ժիծիկ տոտիկ արւն.

Ժուպպա, բալիկ, խուլիկ անուլ,

Քափար ու նուլ, թուլիկ անուլ:

62. Տերն ու ծառան

1.

Աստուած բարի տայ ձեզ էլ, երկու ախպորն էլ: Լինում են չեն լինում, երկու ազրատ ախպէրէն լինում: Մտածում են՝ ինչ անեն, ոնց անեն, որ իրենց տունը պահեն: Վճռում են՝ փոքրը տանը մնայ, մեծը գնայ՝ մի ունեւորի ծառայ մտնի, ոռճիկ ստանայ, դրկի տուն:

Էսպէս էլ մեծը վեր է կենում, գնում մի հարուստի մօտ, ծառայ մտնում:

Ժամանակ նշանակում են մինչև մին էլ զարնան կրկւի ձէն ածելը: Էս հարուստը մի չլուած պայման է դնում ծառային: Ասում է. մինչև էն ժամանակը թէ դու բարկանաս, դու հազար մանէթ տուգանք տաս ինձ, թէ ես բարկանամ՝ ես տամ:

—Ես որ հազար մանէթ չունեմ, հրտեղից տամ, ասում է ծառան:

—Բան չկայ, փոխարէնը ինձ տասը տարի ձրի կը ծառայես:

Տղէն մին վախենում է էս տարօրինակ պայմանից, մին էլ մտածում է, թէ ինչ պէտք է պատահի: Ինչ ուզում են, անեն, ես եմ ու չեմ բարկանալ, պրծանք գնաց: Իսկ եթէ իրենք կը բարկանան, թող իրենք էլ տուգանք իրենց դրած պայմանով:

Ասում է լուս, համաձայնում է: Պայմանը կապում են ու մտնում է ծառայութեան:

Միւս օրը վաղ տէրը վեր է կացնում ծառային, դրկում է արտը հնձելու:

—Գնա, ասում է, քանի լուս է՝ հնձի, որ մութն ընկնի, կը գաս:

Ծառան գնում է, ամբողջ օրը հնձում, իրիկունը յոգնած գալիս է տուն: Տէրը հարցնում է.

—Էդ հըր եկար:

—Դէ արեւ մէր մտաւ, ես էլ եկայ:

—Ձէ, էդպէս չի: Ես քեզ ասել եմ, քանի լուս է՝ պէտք է հնձես: Արեւ մէր մտաւ, բայց տես, նրա ախպէր լուսնեակը դուրս եկաւ: Սա ինչ պակաս է լուս տալիս...

—Էդ ոնց կը լինի... զարմանում է ծառան:

—Հը՞, դու արդէն բարկանում ես, հարցնում է տէրը:

Ձէ, չեմ բարկանում... ես միայն ասում էի՝ յոգնած եմ... Մի քիչ հանգիստ սնամ... կը զկզկում է վախեցած ծառան ու գնում է նորից հնձելու...

Հնձում է, հնձում, մինչև լուսնեակը մէր է մտնում: Բայց լուսնեակը մէր է մտնում թէ չէ, զարձեալ արեգակն է դուրս գալիս: Ծառան ուժասպառ արտում վեր է ընկնում:

—Վայ, քու արտն էլ հարամ ըլի, քու հացն էլ, քու տուած ոռճիկն էլ... սկսում է հայհոյել յուսահատուած:

—Հը՞, դու բարկանում ես, կանգնում է զլխին հարուստը. երբ որ բարկանում ես, մեր պայմանը պայման է: Էլ չասես թէ քեզ հետ առանց իրաւունքի վարւեցին:

Ու պայմանի ուժով ստիպում է, ծառան կամ հազար մանէթ տուգանք տայ, կամ տասը տարի ձրի ծառայի:

Ծառան մնում է կրակի մէջ: Հազար մանէթ չունէր, որ տար, հոգին ազատ անէր. տասը տարի էլ էս տեսակ մարդու ծառայելն անկարելի բան էր: Միտք է անում՝ միտք, վերջը հազար մանէթի պարտամուրհակ է տալիս հարուստին, դառն ու դատարկ վերադառնում տուն:

2.

—Հը՛, ի՞նչ արիր, հարցնում է փոքր ախպէրը: Ու մեծ ախպէրը նստում է, գլխի եկածը պատմում, ինչպէս որ պատահել էր:

—Բան չկայ, ասում է փոքրը, դժուար մի անի, դու տանը կաց, հիմի էլ ես գնամ:

Վեր է կենում, հիմի էլ փոքր ախպէրն է գնում, ծասայ մտնում էլի նոյն հարուստի մօտ:

Հարուստը դարձեալ ժամանակը որոշում է մինչև կըկւի ձէն ածելն ու պայման է դնում, որ եթէ ծառան բարկանայ, հազար մանէթ տուգանք տայ կամ տասը տարի ձրի ծառայի. թէ ինքը բարկանայ, հազար մանէթ տայ ու էն օրից ծառան ազատ է:

Չէ, էդ քիչ է, հակառակում է տղէն: Թէ դու բարկանաս, դու ինձ երկու հազար մանէթ տաս, թէ ես բարկանամ, ես քեզ երկու հազար մանէթ տամ, կամ քսան տարի ձրի ծառայեմ:

—Լաւ, ուրախանում է հարուստը: Պայմանը կապում են, ու այժմ էլ փոքր ախպէրն է մտնում ծառայութեան:

Առաւօտը լուսանում է, էս ծառան վեր չի կենում տեղիցը: Տէրը դուրս է գնում, տուն գալիս, էս ծառան դեռ քնած է:

—Ս՛յ տղայ, դէ վեր կաց, է, օրը ճաշ դառաւ:

—Հը՛, բարկանում ես դու. գլուխը վեր է քաշում ծառան:

—Չէ, չեմ բարկանում, վախեցած պատասխանում է տէրը. միայն ասում եմ, պէտք է արտը գնանք հնձելու:

—Հա, որ էդ ես ասում, ոչինչ, կը գնանք, ի՞նչ ես վրձնում:

—Վերջապէս ծառան վեր է կենում, սկսում տրեխները հագնել: Տէրը դուրս է գնում, ներս է գալիս, սա դեռ տրեխները հագնում է:

Ս՛յ տղայ, դէ շուտ արա, հագի, է...

—Հը՛, հօ չեմ բարկանում:

—Չէ, ո՞վ է բարկանում, ես միայն ուզում էի ասել՝ ուշանում ենք:

—Հա, էդ ուրիշ բան է, թէ չէ պայմանը պայման է:

Մինչև ծառան տրեխները հագնում, մինչև արտն են գնում, ճաշ է դառնում:

—Էլ ինչ հնձելու ժամանակ է, ասում է ծառան. տեսնում ես՝ ամենքը ճաշում են, մենք էլ մեր ճաշն ուտենք՝ յետոյ:

Նստում են, ճաշ ուտում: Ճաշից յետոյ էլ ասում է. «Մշակ մարդիկ ենք, պէտք է մի քիչ քնենք, հանգստանանք՝ թէ չէ»: Գլուխը կոխում է խոտերի մէջ ու քնում մինչև իրիկուն:

—Տօ, վեր կաց, է, մթնեց, է. ուրիշները հնձեցին, մեր արտը մնաց.. Վայ քու դէսը դրկողի վիզը կոտրի, վայ քու կերածն էլ հարամ ըլի, քու արածն էլ: Էս ինչ կրակի մէջ ընկայ... սկսում է գոռգոռալ յուսահատւած տէրը:

Հը՛, չլինի՞ թէ բարկանում ես, գլուխը վեր է քաշում ծառան:

—Չէ, ո՞վ է բարկանում, ես ասում էի թէ, մթնել է, տուն գնալու ժամանակ է:

Հա, էդ ուրիշ բան է. գնանք, թէ չէ հօ մեր պայմանը գիտես. վա՛յ նրա մեղքը, ո՞վ բարկացաւ:

Գալիս են տուն: Տեսնում են հիւր է եկել:

Ծառային ղրկում է թէ՛ գնա ոչխար մորթի:

—Ո՛րը:

—Ո՛րը կը պատահի:

Ծառան գնում է. Մի քիչ յետոյ լուր են բերում հարուստին, թէ հասի, որ քու ծառան ամբողջ հօտը կոտորեց: Էս հարուստը վազում է, տեսնում է՝ ճիշտ որ, ինչ ոչխար ունի, բոլորը ծառան մորթել է: Գլխին տալիս է, գոռում:

—Էս ի՞նչ ես արել, ա՛յ անասուած. քո տունը քանդելի, ինչի՞ իմ տունը քանդեցիր...

—'Ի ու ասի՛ր՝ «որ ոչխարը պատահի մորթի», ես էլ եկայ, բոլորը պատահեցին, բոլորը մորթեցի. ուրիշ աւել պակաս ի՞նչ եմ արել, հանգիստ պատասխանում է ծառան. բայց կարծեմ, դու բարկանում ես...

—Չէ, բարկանում չեմ, միայն ափսոսս գալիս է, որ էսքան ապրանքս փչացաւ...

—Լաւ, որ բարկանում չես, էլ կը ծառայեմ:

3.

Հարուստը մտածում է՝ ի՞նչ անի, որ էս ծառայիցն ազատւի: Պայման է կապել մինչև մին էլ գարնան կըկւի ձէն ածելը, այն ինչ դեռ նոր են մտել ձմեռը. դեռ ո՞րտեղ է գարունն ու կըկուն...

Միտք է անում՝ միտք, մի հնար է մտածում: Կնոջը տանում է, անտառում մի ծառի վեր հանում ու պատւիրում, որ «կուկու» կանչի: Ինքը գալիս է ծառային տանում թէ՛ արի գնանք անտառը որսի: Հէնց անտառն են մտնում թէ

չէ՛ կինը ծառի վրայից կանչում է—«կուկու, կուկու»...

—Հը՛, աչքդ լուս, ասում է ծառային տէրը. կըկուն կանչեց, ժամանակդ լրացաւ...

Տղէն գլխի է ընկնում տիրոջ խորամանկութեանը:

Չէ, ասում է, ո՞վ է լսել, որ տարու էս եղանակին, ձմուռայ կիսին, կըկուն ձէն ածի, որ սա ձէն է ածում: Ես պէտք է էս կըկւին սպանեմ, սա ինչ կըկու է...

Ասում է՝ հրացանը քաշում դէպի ծառը:

Տէրը գոռալով ընկնում է առաջը:

—Վա՛յ, չգարկես, Աստծու սիրուն. սե լինի քո պատահելու օրը, էս ի՞նչ փորձանք էր, որ ընկայ մէջը...

—Հը՛, չլինի՞ թէ բարկանում ես...

Հա, ախպէր, հերիք է. արի՛ ինչ տուգանք տալու եմ, տամ, քեզից ազատւիմ: Իմ դրած պայմանն է՝ ես էլ պէտք է տուժեմ: Հիմի նոր եմ հասկանում էն հին խօսքը՝ թէ «մարդ ինչ անի, իրեն կ'անի»:

Էսպէս հարուստը խելօքանում է, իսկ փոքր ախպէրը մեծ ախպօր աւած պարտքի թուղթը պատռում է, հազար մանէթ տուգանքն էլ առնում ու վերադառնում տուն:

Ինչ որ ցանես, այն կը հնձես:

Ինչ որ բրդես, այն կը խրթես:

Ազահն է աղքատ:

Աղքատն աղքատ չէ:

Չարաճրճի մանուկի պէս
Արեն է միշտ ժպտերես,
Սարն ու դաշտը կանաչազարդ՝
Բացւել է և կարմիր վարդ:

Սիրուն է...

Նաշխուն ծառեր հազար ու բիւր
Չորս կողմից են եկել հիւր,
Թիթեռնիկներ, ճանճ ու բզեզ
Թռչկոտում են, ուր կուգես: -

Զան, շան, շան...

Պարտէզների բոլոր ծառեր
Ծաղիկներ են բաց արել,
Շուտով կը գայ կարմիր ամառ,
Միրգ կը բերէ մեզ համար:



1

— Ծառեր, ծաղիկներ, խոտեր ու բոյսեր, բաւական է
որչափ քնեցիք, ասաց արեգակը. գարուն է, օրերը տաք են,
շուտով արթնացէք, երկիրը զարդարէք:



— Բարև՝ քեզ,
բարև, սիրելի գա-
րուն, ասացին
խոտերը և կանա-
չեցին:

— Մենք շատ
ուրախ ենք, ան-
նման գարուն,
ձայն տւին ծա-
ռերն՝ արձակելով
հազարաւոր բող-
բոջներ՝ որ լսեն,
ինչ է ասում գա-
րունը:

— Մենք էլ
ուրախ ենք, սի-
րուն գարուն. մեր
պտուկները հա-
ղիւ տաքացան.
շուտով կը ծաղ-
կենք և քեզ կը
գովենք, ամեն

կողմից ձայնեցին պտղատու ծառերն ու ծաղիկները:

— Տը՛ գ, տը՛ գ, տը՛ գ... շնորհակալ ենք, նախշուն գարուն,

ասացին մեղուները, չաղիւ աղաւեցինք ծանր ձմեռից.
ամբողջ ձմեռը թմրած մնացինք:

Մեղունները խումբ խումբ թռան, գնացին խնձորենու մօտ, այս-
պէս ասացին.



— Կարժրածաղիկ խնձորենի,
Ծաղիկներդ բաց արա,
Մեզ բոլորիս տեղ արա:
Մենք ուզում ենք քո հիւթից
Ծծենք, ուտենք, կշտանանք,
Ուրախ, զւարթ տուն գտնանք:

— Ափսոս, շատ ափսոս, ծա-
ղիկներս դեռ դուրս չեն եկել, թէ
չէ՛՝ ձեզ պէս հիւրերին ես շատ սի-
րով կ'ընդունէի:

Գնացէք բալենու մօտ, նա շուտ
է ծաղկում:

Մեղունները թռան, գնացին
բալենու մօտ:

— Բարով եկաք, ժիր մեղուններ, հազար բարով, սիրուն-
ներ, ասաց բալենին. վաղն եկէք, ծաղիկներս դեռ քնած են:

3.

— Տը՛ դ, տը՛ դ, տը՛ դ... արտաշացին մեղունները. որ դուք
դեռ չէք զարթնել, բա ինչո՞ւ մեզ ձայն տւեց, քնից վեր-
կացրեց արեւը. ինչո՞ւ ասաց, թէ գարունն է ուղարկել իրեն,
տը՛ դ, տը՛ դ, տը՛ դ... էն կողմից ծիծաղեց նշենին ու ասաց.

— Էստեղ եկէք, էստեղ, սիրուն մեղուններ, իմ ծաղիկներս վա-
ղուց են սպասում ձեզ, բաժակներս անուշ հիւթով լի են:
Մեղուններն ուրախ ուրախ թռան դէպի նշենին:



65. Մանուշակ

Կապոյտ գլխով, կանաչ ոտքով,
Ես ծաղիկ եմ անուշ հոտով.
Թէև տունկս փոքրիկ է, ցած,
Արօտներում միշտ թագ կացած,
Բայց իմ փունջն ամենի տան,
Թէ աղքատի թէ մեծատան,
Իբրև գարնան առաջին զարդ,
Տեսնում է միշտ ամեն մի մարդ:
Ես եմ սիրուն գարնան զուլակ,
Իմ անունն է մանուշակ:


66. Խելացի սարդը

Բարեկէնը տեսաւ պատի անկիւնում, սարդն իր ոտտայնի շուրջը
դէս ու դէն է վազվզում: Քամին էլ սաստիկ շարժում է ոտտայնը
և քիչ է մնում պոկ տալ: Յանկարծ սարդն իր բարակ թելի վրայով
իջաւ յատակին, մի փայտի կտոր թելերով փաթաթեց և վերև քա-
շեց. մեծ դժւարութեամբ հասաւ ցանցին, բայց քամին կտրեց
թելը և փայտիկը վայր ընկաւ:

Սարդն չյուսահատուեց. կրկին իջաւ, բարձրացրեց, հասցրեց
ոտտայնին և ամուր կպցրեց. ոտտայնը ծանրացաւ և էլ չշարժուեց:

67. Սարգը

Տես, սարգը չար	Է՛յ տղազան
Ճանճի համար	Ու վազվզան
Ի՞նչ թակարդ է	Փոքրիկ ճանճիկ,
Պատրաստել,	Զգոյ՛շ կաց.
Ինքն էլ սոված,	Սարգը զինւած,
Շունչը քաշած,	Աչքը լարած՝
Նրա մօտին	Քեզ է նայում
Պահ մտել:	Տապ արած:



Քաճի

Նուշիկն ու Երանեսկը լռիկ-ճեղիկ
գրու՛մ նկարու՛մ էին սենեակու՛մ: Յան-
կարժ աշխտեղ ներս ընկաւ իրենց ծա-
նօթ ծրաւը:

— Երանեսկ, տես ով հիւր եկաւ, ու-
ռա՛ւ, ուռա՛ւ . . .

„Ա, բարով ծրաւ, ինչո՛ւ ես այդպէս դու-
նատուել, ինչո՛ւ ես այդպէս դողու՛մ ու
հեռու՛մ, ինչ կայ ”:

— Քաճու շտոֆից ե՛մ փախել. հապիւ հապ
արծայ, ծարդ է թռչնու՛մ, չէ՛ք լսու՛մ. . .

Բո՛ւ ո՛ւ, վո՛ւ ո՛ւ . . .

Մնչւեցին սենակի դռներն ու լուսա-
ծուռները:

— Ժողեսկ Նուշիկ, էս քաճուն ինչ իւ-
ղոտ սիրտ ունիս, նստել նկարու՛մ ես:

Անցած տարի քաճին աւելի գծութիւն
արաւ. շատ ծառեր հղակոտոր արաւ. թեր-
հարեանի այգու չարդախի սիւները զարդեց,
փուլ բերեց. գետի ջուրն էնպէս եռ էր տա-
լիս, էնպէս, որ ծարդ սիրտ չէր անի Ծօռե-
նայ. գիժ է քաճին, գիժ:

— Բա չես ասում, Մէջ մօտ երանեալք, քա-
մբն անառւայ շոգին մեզ արկայնում է

— Ասեմք, քաջին լաւութիւններ էլ է անում,
բա էդ գծութիւններին ինչ ասեմք :

ԲՈՒ ՈՒ, ՎՈՒ ՈՒ . . .



69. Չորս եղբայր

Չորս եղբայր են, ամեն տարի
Երկրի վրայ ման են գալիս,
Չորսն էլ ջուկ-ջուկ ունին հասակ,
Պարզեներն են հազար տեսակ:

Փոքր եղբայրն է պատանի, չ
Բողբոջ տերեւ, սաղարթ ունի
Պայծառ արեւ, կանաչ արօտ,
Որոնց տղայք են միշտ չկարօտ:

Երկրորդ եղբայրն երիտասարդ,
Տալիս է մեզ անձրեւ առատ,
Ծաղկունք ցանում է ամեն դի,
Յոյս է տալիս առատ հնձի:

Երրորդ եղբայրն է չափահաս,
Մրգերով լի ունի մի թաս,
Բաժանում է տղոց իր զանձ,
Ծիրան, խնձոր, խաղող, տանձ:

Չորրորդ եղբայրն է ծերունի,
Յուրտ ու խաւար շալկած ունի,
Այգի, անտառ ամայացած,
Գաշտ ու արօտ ձիւնով լըցւած:

70. Պահապան ճնճղուկը

Ճնճղուկների ձագերը նոր էին թռել ատել, նոր էին կանաչ-
ների մէջ թռչում, ուրախանում: Բիշ հեռու պահապան ծեր
ճնճղուկը ծառի բարձր ճիւ-
ղին թառած՝ չորս կողմն էր
նայում: Նա նայում էր, որ
բազէն, ուրուրը կամ ազու-
ւր յանկարծ վրայ շտան ձա-
գերին:

Մէկ էլ երեսոց բազէն:

— Ճիւ, ճիւ, ճիւ... ճը-
չաց ծեր ճնճղուկը. — փախէք,
հեռացէք, ձագուկներ: Չա-
ղուկները թռան, թփերի մէջ
թաղ կացան: Բարկացաւ բա-
զէն, սաստիկ բարկացաւ.
նրա սրատես աչքերը տեսան

թառած ծեր ճնճղուկին ու արագ յարձակեց վրան: Ճնճղուկը
քարի նման իրեն ձգեց թփերի մէջ, կորաւ:



— Հետաքրքիր է իմանալ, մայրիկ, հրտեղից են բերում թէյը:

— Թէյի թուփը բուսնում է շատ տաք երկրներում, ասաց մայրիկը. գլխաւորապէս նա շատ է լինում Չինաստանում և Հնդկաստանում: Թէյի թուփը շատ նման է բալենուն, կարող է մինչև երեք սաժէն բարձրանալ, բայց չինացիները չեն թողնում այդչափ բարձրանալու:

— Ինչո՞ւ չեն թողնում:

— Որովհետեւ թէյը պատրաստում են այդ թփի տերեւներից և տարեկան մի քանի անգամ հաւաքում են, դրա համար դժւար և անյարմար է բարձր ծառերի վրայից քաղել. այդ պատճառով չինացիք 1, 2 արշինից աւել չեն թողնում բարձրանալու: Թէյի թփից տարեկան երեք անգամ տերեւները հաւաքում են: Առաջին անգամ ապրիլ ամսին. այդ ժամանակ տերեւները հազիւ պտուկներից դուրս եկած են լինում: Այդ տերեւները շատ քնքոյշ և հոտաւէտ են. ամենալաւ թէյը դրանից են պատրաստում: Երկրորդ անգամ հաւաքում են յունիս ամսին. այս ժամանակ տերեւները աւելի մեծ են լինում և չունեն այն քնքշութիւնը, նուրբ ու դուրեկան հոտը: Երրորդ անգամ հաւաքում են օգոստոսին. այս տերեւներից հասարակ թէյ են պատրաստում:

— Ուրեմն, մայրիկ, հաւաքած տերեւները թէյ են լինում:

— Ո՛հ, գաւազ, բաւական շատ աշխատանք է պէտք, մինչև որ թէյը պատրաստ լինի: Թէյի տերեւները մի երկու անգամ փոքրիկ բովերի վրայ չորացնում են, փռում, մաղում են, տեսակների են բաժանում, մինչև որ ծախելու համար պատրաստ է լինում:



1.

Ի՜նչ լաւ է այստեղ դաշտում, ինչ ազատ է, օդը մաքուր, երկինքը պայծառ, ասաց կարմրահատ ցորենը գարուն:

— Ճիշդ է, ճիշդ, պատասխանեց գարին:

— Հազիւ ազատւեցինք այն մութ ամբարից, ամբողջ ձմեռն իրար վրայ էինք թափւած, ոչ օդ կար, ոչ լոյս, խեղդւում էինք:

— Իհարկէ, գիրուկ, այստեղ լաւ է: Տես ինչպէս գիւղացին գոգնոցի միջից սերմերն առած՝ շաւ է տալիս, ցանում է. բայց այդ ո՞վ է մեր կողքին ընկած, տես ինչպէս փոքրիկ, կլոր ու պսպղուն է:

— Գու՞ օ՞վ ես, հարցրեց գիրուկը:

Ես կորեկի հատիկ եմ, ասաց նա. ուրախ եմ, որ ձեզ մօտ ընկայ, ձեզ ընկեր եղայ:

— Այս ի՜նչ գաղան է, գիրուկ, ճյ, ճյ, ես վախենում եմ. տես, ինչպէս նա սերմեր հաւաքում, ուտում է, ասաց կարմրահատն ու կուշ եկաւ:

Լաւ էր՝ գիւղացին եկաւ, ագռաւը թռաւ.

թէ չէ՝ ցորենի սիրտը կը ճաքէր:

Մէկ էլ տափանն եկաւ, բոլոր սերմերը հողի տակ արաւ:

— Ես կորճյ, ես կորճյ, ասաց գիրուկը:

— Ես խեղդւեցի, ես խեղդւեցի, կանչեց

ցորենը:


— Ինչ մութն է, ինչ ցուրտ է, կանչեց

կորեկը:

Նրանք քնեցին:

2.

Անձրեւ մաղեց, երկիրը թրջւեց. պայծառ արևն էլ հողը տաքացրեց: Սերմի հատիկները քիչ քիչ թրջւեցին, ուռան՝ մեծացան: Նրանք



— Երբ չափ ստացան, որ բարակ կեղեր ձաքեց, պատառ-
ւեց, ծիլեր դուրս եկան:


— Բարե ձեզ, ծիլեր, ասաց քամին նրանց համբուրելով:

3.

— Որչափ ուրախ եմ, որ լոյս եմ տեսնում, մաքուր օդ շնչում,
ասաց գիրուկը:

— Ես էլ ուրախ եմ,
կանչեց ցորենը:

— Դու էլ դուրս ե-
կար, նոր ընկեր կորեկ,
ասաց ցորենը:



Այս շատ լաւ եղաւ, որ
մէկտեղ ծլեցինք, մէկտեղ
դուրս եկանք:

— Տես, ինչպէս սիրուն
է երգում արտուտը:

Տես, ինչպէս լորն իր
բունն է շինում:

Ինչպէս արե է, ինչ-
պէս լաւ տաք է:

Էլ մենք չենք մրսի,

մենակ չենք լինի. ինչպէս կանաչ է, ամեն տեղ կանաչ:

— Բարի լոյս ձեզ, ուրախ կանաչներ, ասաց ցօղիլը և նրանց
համբուրեց:

Արեի տակ ծիլերն ու ցօղը գոյն գոյն փայլեցին, գրկախա-
նեցին:

— Ի՞նչ լաւ է ծլել իմ ցանած արտը, ասաց գիւղացին:

Անցաւ գարունը, եկաւ ամառը: Գարին ու ցօրենը հասկեր
կապեցին, լցւեցին և մեծացան:

Կորեկն էլ շատ շատ հատիկներ շարեց:

— Առատ հունձ կը տայ, ասաց գիւղացին և ուրախացաւ:

Էն ինչն է՝

Ձուր է խմում սոսնձով,

Ձու է ամում բխերով:

Խաւով.

Լոյսը բացւում է. շուտ արտը գեամ,

Ախտոտա՛տուր խոփով ես կուրծիլ հողի.

Ի՞նչ սիրուն Խաւովի փայլուն պահ տա՛մ

Մինչև օրերն ամբան արեի:

Ժիր, կանաչի՛ր, ոսկէ սաւանով

Ժամկի՛ր ի՞մ արտը ողջ ալիքա՛ման,

Նոր այն ժամանակ անուշ լըլիւնով

Անուր զարդա՛մ արտիս մի փուն հանգստեան:

74. Գիւղացու ընկերը

1.

Գարունը բացւեց, գիւղացին դաշտ դուրս եկաւ, գետինը վա-
րեց, հողը փափկեցրեց:


Սարեակն էլ գնաց գութանի յետեից, որդեր հաւաքեց, ձա-
գերին կերակրեց:

Գիւղացին ցանեց իր արտը, տափանեց:

Սարեակը նրա մօտ ցատկեց, ճրղճղաց, մօեղներ հաւաքեց:

2.

Եկաւ ամառը, խոտերը հասան, գիւղացին ուրախ հանդը դուրս
եկաւ:



Գերանդին քաղում է, հնձած խոտերից դէզեր է դնում,
Սարեակն էլ ուրախ երգեր է երգում, խոտերի միջից թրթուր,
մօեղներ հաւաքում՝ տանում:

Ժիր գիւղացին սայլը լծած՝ գլարթ երգելով՝ հնձած ցորենը,
դարին, հաճարը իր կալն է կրում, կալսում, ձմեռայ համար
պաշար պատրաստում:

Զարթ սարեակն էլ իր ձագերի հետ երգելով, գովում է
գիւղացու դորձը, սուրբ աշխատանքը:

3.

Եկաւ աշունը, խուճ-խուճ գիւղացիք՝ սայլերը լծած, քաղաք
են գնում, քաղաք են գնում, ալիւր ու գարի, կորեկ ու կորկոտ,
բանջար, ուտելիք շուկայում ծախում, իրենց տան համար շորեր

են առնում, ցաւեր հոգում, էլի տուն դառնում:

Ժիր սարեակներն էլ խմբեր կազմելով՝ գիւղացոց համաբ-
երգում են անուշ, ճանապարհ դնում:

75. Աշխատանքի ախպէրը

Արի գնանք, եզը ջան,

Ամբարներս դատարկ են,

Համ վար անենք, համ էլ ցան,

Ոչ դարի կայ, ոչ ցորեն,

Աշխատանքի օրերը

Մերոնց բերնից կտրելով՝

Հրէս եկան, մօտեցան:

Յետ եմ գցել «Սերմորէնք»:

Գութանը դու կը քաշես,

Արի գնանք, ախպէր ջան,

Մաճկալդ էլ կը լինեմ ես,

Համ վար անենք, համ էլ ցան,

էն գլխիցը, էս գլուխ

Պարապ-սարապ մնալուց՝

էս փեշակն է պահել մեզ:

Ձեռս ու ոտս թուլացան:

76. Հարսի ճուտերը

Հարսն ամեն օր առաւօտից մինչև երեկոյ աշխատում էր.
վրան հալ չէր մնում, յոգնում էր: Փոքրիկ ճուտերն էլ փորձանք
էին դառել նրա զլխին:

— Գուտերիս լաւ նախիր, կեսրոզ էս խօսքերն
ականգին օղ արաւ, էլ չէր մոռանում:

Առաւօտը վեր կենալիս ամենից առաջ
նայում էր ճուտերին: Մի օր էլ տեսաւ, ճուտ-
երը հիւսնոյ են, չեն ճըտեցրտում: Ահրաւր դող-
ընկաւ. վազեց դրացի պառաւի թօտ. —

— Դամիր, այ Կանի, եռւտերս հիւանդ են. ինչ
անեմ, թի եսր արա, թի խելս անկրկնու :

— Ժարսիկ զան, թի աման զուր եռայրու, եռ
տերը մէկ մէկ մէզք կոխիր, հանիր ու արեւը
շարիր, կը լաւանան :

— Ժարսը գնաց, այդպէս էլ արա. երբ տեսաւ,
որ եռւտերը չեն շարժուում, վազեց էլի պառաւ
էի Բօտ :

— Կանի, եռւտերս ծած չեն գալիս. ինչ անեմ,
ինչ վայ տամ էս յիմար գլխիս :

— Ժարսիկ զան, բան չկայ, ինչ եմ, շուտով
կը վարքեմ, ասաց պառաւը :

77. Հետաքրքիր հանելուկ

1.

— Մայրիկ, մենք ուզում ենք մի ձեռնափայտ ընծայել հայ-
րիկին նրա տօնի օրը. այդ ձեռնափայտն արժէ երեք ուրբի, իսկ
մենք մի կողեկ չունինք :

— Եթէ ձեր անելիք ընծան երեք ուրբի արժէ և դուք մի
կողեկ չունիք, հապա ինչպէս կարող էք գնել ձեր ուզած ընծան :

— Ահա թէ ինչպէս, մայրիկ, պատասխանեց Աննան. եթէ մեզ
թոյլ տաս, մենք մի ամիս գինի չենք խմիլ, դու մեզ կը տաս այն
փողը, որ պէտք է ծախսելիւ մեր խմելիք գինու համար. Մի ամ-
սից յետոյ մենք կ'ունենանք ճիշտ այնքան, որքան արժէ ձեռնա-
փայտը :

Հա, բացականսնց մայրը :

— Համաձայնիր, ազաչում ենք, միաբերան խնդրեցին երե-
խաները :

— Ասենք՝ ես համաձայնեցի, սակայն ինչ կ'ասէ հայրիկը :

— Դու համաձայնիր, մայրիկ, մենք յոյս ունինք, որ հայրիկին
էլ կը համոզենք : Միայն թէ մեր գաղտնիքը հայրիկին չտեսնուի :

— Միշտ վախենալ՝ չեմ ասիլ :

2.

Երբ հայրը տուն եկաւ, սեղան նստեցին և սկսեցին ճաշել :

— Գէորդ, ասում է հայրը, բաժակդ տնւր, գինի ամեմ :

—Շնորհակալ եմ, հայրիկ, ես գինի չեմ ուզում:

—Ի՞նչպէս թէ չես ուզում. այդ ի՞նչ է նշանակում... Իսկ

դո՛ւ, Աննա:

—Ես էլ չեմ ուզում, հայրիկ, և եթէ թոյլ տաս, ես այլ ևս գինի չեմ խմել:

—Այդ ի՞նչ նոր բան է. դու ուզում ես բոլորովին ուժից քնկնել, հիւանդանալ:

Ո՛չ, ո՛չ, հայրիկ, աղաչեց Աննան. ես ու Գէորգը հաստատ վճռել ենք՝ էլ գինի չխմել, ուստի խնդրում ենք՝ մեզ թոյլ տաս գոնէ մի ամիս փորձել: Այսօր նոյնիսկ մեր վարժուհին ասում էր, թէ գինին և միւս խմիչքները շատ փնաս են երեխաներին:

—Ես մի դասընկեր ունիմ, որ ամենքիցս էլ ուժեղ է և շատ առողջ, վրայ բերաւ Գէորգը. իսկ նա անցեալ օրը ասում էր, որ իր օրումը գինի չի խմել, բացի մաքուր ջրից:

—Լաւ, ասաց հայրը, փորձեցէք:

3.

Անցաւ մի ամիս. ճաշի ժամանակ հօր աթոռի մօտ դրած էր սպիտակ թղթի մէջ փաթաթած մի կապոց, որի վրայ խոշոր տառերով գրած էր.

«Իրենց սիրելի հայրիկին առողջութիւն և երկար օրեր են մաղթում ջուր խմող երկու փոքրիկները»:

Ներս եկաւ հայրը և նստեց իր տեղը. մէկ էլ նկատելով կապոցը՝ հարցրեց.

—Ի՞նչ է այս, ու սկսեց շուռ ու մուռ տալ և կարգաց վրայի գրածը:

—Ա՛յ դուք չարածճիներ, այս էր պատճառը, որ գինի չէիք խմում...

Հայրն ուրախացաւ իր փոքրիկների արածից. նրա աչքերը

լցւեցին ուրախութեան արտասուքով և նա սիրով գրկեց նրանց:

—Շնորհակալ եմ, անճշ գաւազներս:

Գիտէ՞ք, այժմ դուք զւարթ էք երևում:

—Որովհետեւ նրանք այժմ աւելի ախորժակով են ուտում և աւելի հանգիստ են քնում, ասաց մայրը, այն ինչ առաջ այդպէս չէր:

—Շատ լաւ, սիրելիք. քանի որ ձեր փորձն այդպէս լաւ հետեանք ունեցաւ, շարունակեցէք նոյն կերպ ապրել, ասաց հայրը:

—Այո, հայրիկ, թող կորչեն բոլոր խմիչքները. կեցցէ մաքուր, առողջարար ջուրը, ասացին մանուկները:

78. Մեղու

Գարուն, ամառ ամեն օր

Ես գնում եմ դաշտ ու ձոր,

Աշխատում եմ միշտ անվերջ,

Մեղր եմ փնտրում ծաղկանց մէջ:

Իսկ երբ փչէ ցուրտ քամին,

Ծաղիկներն էլ թառամին,

Ես իմ ժողոված պաշարով

Կ'ապրեմ ձմեռն ապահով:



Կռանը չեռփին, վերանն առազին,
 Բիր, երես մրոր դարբնոցի միգին,
 Կաշէ գոգնոցն առազը կապած
 Զոիկ կանգնած է մեր յւէջո դարբին:

Փուխը փռի, եւ փռի փչում է փչում:
 Կայծեր ու մոխիր դէս ու դէն սփռում:
 Երկաթի մի շերտ հնոցը կոխած՝
 Ասարիկ փափիցը կարծրում է կակղում:

80. Կեռասը

1.

— Բարձր եկար, սիրուն թռչնիկ, հազար բարով անուշիկ, երգի՛ր մեզ համար, ասաց ծառի ծայրին օրօրուղ կեռասը:

— Այս գիշեր շատ ցուրտ էր, ես մրսեցի, այնչափ մրսեցի, որ քիչ մնաց սառչէի, մէջ ընկաւ մի ուրիշը. այս մէկ թշկա ինչպէս կարմրել է. իսկ այս մէկը դեռ սպիտակ է. ախ, քանի բանի անգամ այս տերեւին խնդրել եմ, որ՝ արեւիս առաջը չառնէ, նա չի լսում:

— Բան չկայ, փոքրիկ կեռաս, ասաց թռչնիկը. արեւ այդ մէկ թշկիդ էլ կը կարմրցնէ:



Թռչնիկն երգեց. բոլոր կեռասները հանգիստ լսում, ուրախանում էին:

— Այ, այ, օգնեցէք, օգնեցէք, աղաչեց մի կեռաս. այս թրթուրն ինձ ուզում է սւտել:

Թռչնիկը հասաւ, կոցեց թրթուրին ու կերաւ:

— Շնորհակալ եմ, բարի թռչնիկ, շնորհակալ, դու իմ կեանքս ազատեցիր. այդ թրթուրներն իմ քոյրերից շատերին կերան, չորացրին. ես ուզում եմ մեծ, սիրուն կարմիր կեռաս դառնալ:

2.

Փոքրիկ կեռասը քիչ քիչ մեծացաւ, կաս կարմիր դարձաւ. նա ուրախ ուրախ չորս կողմն էր նայում, կարմիր թշիկներն ամենքին ցոյց աւելիս: Մի օր էլ եկաւ պարտիզպանը, սանգուլքը զրեց և կեռասները քաղելով՝ կոտորել լցրեց:

— Ինչո՞ւ են քաղում, այս ո՞ւր են տանում իմ քոյրերին, դարմացած ասում էր կեռասը: Ես ամենաբարձր ճիւղի վրայ եմ, ինձ ոչ ոք չի հասնի:

— Քիչ յետոյ ծառի վրայ կեռաս չմնաց:

— Մենակ տխուր է, մտածեց կեռասը, էլ չարժէ ապրել:

3.

— Բարե քեզ, բարե, ասաց թռչնիկը, ինչպէս տեսնում եմ, մենակ ես մնացել:

— Այո, տխուր է, ասաց կեռասը, ես շատ ուրախ եմ, որ եկար, մի ասա՛ տեսնեմ, ես գեղեցիկ չեմ, միթէ ինձ չես հաւանում:

— Ես սիրում եմ քեզ, դու շատ լաւն ես, ասաց թռչնիկը:

— Որ այդպէս է, կոցիր ինձ, թող իմ թշիկները քեզ բաժին լինին. դու ինձ կեանք տւիր, քո լաւութիւնը չեմ մոռացել:



Բայց գիտե՛ս՝ ինչ կայ, սիրելի թռչնիկ, մի խնդիր ունեմ, այն էլ կատարիր:

— Ես քեզ համար ամեն բան կ'անեմ, ասաց թռչնիկը:

— Կորիզիս մէջ մի բան եմ զգում. նա պիտի աղբի, ծլի, մեծանայ, մեծ ծառ դառնայ: Երբ դու ինձ ուտես, տար, իմ կորիզը պարտիզում անկիր:

Պարտիզում դու չես կարող մեծանալ, պատասխանեց թռչնիկը, խոտը հնձելիս քեզ էլ կը կտրեն: Յանկապատի մէջ մի լնւ տեղ գիտեմ, այնտեղ կը աճնկեմ, որ դու մեծանաս, սիրուն ծառ դառնաս:

Փայտի կտոր փեսայ փաշած,

Կարմիր շորեր վրան ես դաժ,

Քորն ալիւրով է լցրած,

Ինձը պարուղ փշից փաշած:

81. Հաւի ընտանիքը


1.

— Կը՛րթ, կը՛րթ, կը՛րթ... Թուխս նստել եմ ուզում, բարձր կանչում եր բակի մէջ հաւը:

Պառաւ տատը հաւանոցի մի անկիւնում յարդից ուշխոտից մի բուն պատրաստեց, մէջն էլ ձւեր դրեց:

Հաւը վրան նստեց, տաքացրեց: Նա ամեն օր համբերութեամբ սպասում էր և երբեմն իր ձուտերի մասին էր մտածում: Արդեօք ամեն ձւից ձագ պէտք է դուրս գայ. արդեօք նրանք վառեկներ

են լինում, թէ աքաղաղներ. ինչպէս կ'ուզէի, որ մի քանիսը



սիրուն աքաղաղներ լինէին, որ ամենքն էլ ասեն, տեսէք, ինչ գունաւոր փետուրներ, կարմիր, սիրուն կատար ունին:

Քսան օր անցաւ. ձւերը շարժւում էին, բայց ձուտերը դուրս չեն գալիս. ինչ անել, նա կձեպն էր ուզում կոտրել, վախենում էր միջի ձագին փնտսել:

Մեծերից լսել էր, թէ երբ ձագերն ոյժ ունենան, իրենք էլ կձեպը կը ծակեն: Չէ, էլի պէտք է համբերել:

2.

Քսան մէկ օր անցաւ. հաւը խոր քնած էր. յանկարծ թևի տակ մի բան շարժւեց: Նա ուրախութիւնից վեր թռաւ, փոքրիկ ձագը դուրս էր ելել ձւից. մայրը սիրով թևի տակն առաւ:

Երբ լուսացաւ, նա տեսաւ իր առաջին ձագը, գեղին, փափիկ փետուրներով, սև սև փոքրիկ աչքերով. ինչ գեղեցիկ է իմ ձագը, բայց ահա դուրս եկաւ երկրորդը, երրորդը...

Մայրը չէր խմանում, թէ քանի կտոր լինի, որ կողմը շարժւի: Նա վախենում էր, չլինի թէ ոտներով ձագերը կոխւտէ: Պառաւ տատը օգնութեան հասաւ. նա ձագերը դրեց բրդով սարքած դամբիւղի մէջ:

Միւս օրը հաւի թևերի տակից փոքրիկ ձագերը գլխիկները դուրս հանած նայում էին:

3.

Տատիկը նրանց համար ձաշ պատրաստեց:— Կը՛րթ, կը՛րթ,

կըրթ, եկէք, ճաշեցէք, ձագուկներս, եկէք, կերէք, ճուտիկներս,
ասում էր մայրը և կացով կրակը տացնում:

— Հիանալի է, կըրթկըրթում էր մայրը, ձու և փափուկ խմոր,
դէհ, եկէք, կերէք:

Այ, այդպէս կըտոցէր: Մէկ էլ փորձեցէք, էլի, էլի, դու էլ
փորձի՛ր, փափիկս, դու էլ, դու էլ, այդպէս: Ճաշը վերջացաւ,
ճուտիկները ջուր խմեցին, կրկին մտան մօր թևերի տակ:

— Ձագուկներս, այսօր լաւ եղանակ է, արևն էլ տաք է, եկէք,
ձեզ դբօնեկու տանեմ:

— Ծիկ, ծիկ, ծիկ, ծըլ-ըլացին ճուտիկները:

— Լաւ, լաւ, ասաց մայրը և հպարտ հպարտ նրանց տարաւ
բակը:

Ո՛վ է միշտ չեպի

Արու՛մ. փայփայում.

Զեր մասին հոգում.

Քայրիկը սիրուն,

Յոգնած ու անխուճ էն ո՛վ է սիրուն

էն ո՛վ է նայում հէփխթներ ասում,

Միշտ եօծի մօրին, Մալխ խաղալիք,

Օրօրում բալին. Արգեր անուշիկ.

Քայրիկը փայփայիկ: Քայրիկն անգին:

«Ծիփ-ծիփ, ծիփ-ծիփ, այ թխսամէր,
ճուտիկներիդ առ դէսը բեր,
կուտ եմ տալու ընտրած կորեկի՝
եկէք, կերէք ու շուտ կորէք»:

Թուխն եկաւ՝ կըրթկալէ,
Ձագուկները ծըւծըւալէ,
եկան նանի դուռը դառան,
ծըւծըւոցով գլուխ տարան:

Նանը նրանց կորեկ տաւ.
Տես թէ ինչպէս աքլոր ու հաւ,
Մէկ միւսին կըսկըտալի,
Մեծ մեծ կուտին են վազ տալի:

Իսկ թռուները՝ աղայ ու աղջիկ,
Թընգթընգում խուռջիկ մուռջիկ,
Որ նանն իրենց մէկ մէկ ընծայ
Ձագուկներից բռնի ու տայ:

«Տես էն ճուտիկ՝ կըշմբշտուրիկ,
Գեղ եմ տալիս, սիրուն Սուրիկ.
Իսկ Գիսակին՝ սպիտակ ձաղը,
էն կուտարար գիծ որձակը:

«Ձալտիկ ճուտն էլ, էյ Գայիտնէ,
Լաւ պահպանիր, էն քո փայն է.
Սևուկ մեուկ աքլորիկն էլ՝
Թող Իսկուհուն լինի նւէր:

«Իսկ ինձ մնայ թխսամէրը
Ու էն մարիկ ճուտիկները,
Որ մեծանան և ձու ածեն,
Նորից մէկ մէկ թուխը նստեն»:

կռուկները շարան — շարան
 „ կըռռ , կըռռ „ կանկին ու եկան .
 „ Գարունն եկաւ , գարունն եկաւ „
 Անուշ կանկին ու եկան

85. Կարմրախայտը

1.

Կարկաչահոս գետակի մէջ մի փոքրիկ ձուկ էր ապրում. նա սիրուն էր, գեղեցիկ էր, այնչափ սիրուն, որ՝ ամեն մարդ կը ցանկանար նրան տեսնել. արևի տակ երբ լողում էր, ամբողջ մարմնի թեփիկները փայլում էին:

2.



Գեղարքունի,՝ սիրուն ձկնիկ, ասաց մի օր կարմրախայտը. արի լողանք մի քիչ՝ հեռու, խոր-խոր տեղեր առաջ գնանք, տեսնենք, ի՞նչ կայ այն ջրում:
 — Ինձ էլ տարէք, ասաց մուրձան,
 փոքրիկ բեխերը ցցելով:

— Երկուս չլինենք, երեք լինենք:
 Երեքով մէկտեղ առաջ գնացին.

բայց մէկ էլ յանկարծ մի մեծ գայլաձուկ վրայ հասաւ, ուզեց բռնել, նրանց կուլ տալ:

3.

— Այդ փոքրիկներն ինձ են պատկանում, չհամարձակես կուլ տալ, ասաց մի կապուտ բորերի տակից և գայլաձուկի հետ կռիւ բռնեցին:

— Ոչ, նրանք իմն են, ասաց մի կողակեծ վրայ պրծաւ:
 — Յանկարծ շրմբալով ուռկանն ընկաւ նրանց զլխին: Բոլոր ձկները շփթւեցին, իրար անցան:
 Մենք կորանք, մենք կորանք, ասացին ամենքը:

4.

— Այս ի՞նչ ծանր է, ասաց ձկնորսը, ուռկանը քաշելով:

— Այս ի՞նչ շատ որս է, ասաց ընկերը և ուռկանի միջից ձկները հանեց: Կարմրախայտն էլ նրանց մէջ էր, նա ազաշելով ձկնորսին ասաց:



— Ձկնորս, այ ձկնորս, թող մի քիչ ապրեմ, ես գեա շատ փոքր եմ, մի բանի պէտք չեմ, ես ապրել կուզեմ, խաղալ, մեծանալ, երբ քիչ մեծանամ, ես կը դամ քեզ մօտ:

— Հաւատամ խօսքիդ, ասաց ձկնորսը:

— Այո, հաւատա, պատասխանեց ձկնիկը. ես խօսքիմ ապիս:

— Մի տարի քեզ կեսնք, ասաց ձկնորսը և ազատ թողեց:

5.

Անցան շատ օրեր: Կարմրախայտն ուրախ խաղում էր, քիչ քիչ մեծանում. մի օր էլ յիշեց, որ տասներեւ ամիսն արդէն լրանում է, ձկնորսի տւած ժամանակն հասել է:

Կարմրախայտը մտածեց, տխրեց:

— Ինչո՞ւ ես տխուր, հարցրեց մի սևուկ: Կարմրախայտը ամեն ինչ պատմեց:

— Ի՞նչ ես դարդ անում, ասաց սևուկը. գնանք, հեռանանք, ազատ՝ լաւ ապրենք. ինչ անխելքութիւն, գնաս, ձկնորսի ուռիւնը մտնես:

— Ես խօսք եմ տւել, ասաց ձկնիկը:

Գառարի բան է, ասաց սևուկն ու պոչով շրջումիաց, լողաց զէպի գետի խորը:

Իսկ Կարմրախայտը լողաց, գնաց, ձկնորսին կանչեց:

Ձկնորսն իմացաւ և շատ զարմացաւ:

— Կարմրախայտ, ասաց ձկնորսը, քանի որ հաստատ պահեցիր տւածդ խօսքն, ես քեզ ներում եմ. գնա, քեզ համար ուրախ կեանք վարիր և ազատ ապրիր:

Ապրի ապրեցնողը, ծագկի ծագկեցնողը:

Չուկը գցեմ, ձուկն ուտեմ,

Մուկը գցեմ, ձուկն ուտեմ:

Ինչ կանես՝ արաւ. փղայ,

Զար ընկերի հետ մի մնար.

Ինչ կանես՝ արաւ. փղայ,

Լաւ ընկերից չետ մի մնար:

87. Գող կաշաղակը

1.

— Վայ, կուրանամ, դլխին տալով լալիս էր ջահել հարսը. ինչ եղան իմ ոսկիներս, ով տարաւ, ով գողացաւ մեր բակիցը:

Պառաւ նանն էլ խիստ զարմացաւ, դէս դէն ընկաւ, ամբողջ բակը տակն ու վրայ արաւ, շատ ման եկաւ, ոսկիները չգտաւ:



— Էս թշնամու արած բան է, փընթփընթալով ասաց նանը. ինչէր ասես՝ մեր բակիցը չգողացան, էլ մոտանի, բորոցներ, ասեղներ, գեռ երէկ էր, որ Լուսիկի մեծ շարանով հուլունքները թոցրին: Ա՛յ անիծւիս դու, թշնամի, էս չափ փառս ով մեզ կը տար, որ դու տւիր:

2.

Ներքնայարկում մի պուտուկի չորս կողմում կաշաղակը ոսկի, արծաթ, հուլունք, մատնոց, ասեղ, կոճակ և շատ բաներ առաջն ածած զընդզընգացնում, կտցով վերցնում, վեր գցում, ուրախ, զլարթ խաղ էր անում: Երբ մի օր ներքնայարկի դուռը բանալով պառաւր յանկարծ ներս մտաւ, կաշաղակն արագ արագ պուտուկն ածեց գողացածները, լուսամուտից իսկոյն թռաւ, ծառին թառեց, դա՛ դա՛ կանչեց:

Վայ, անիծւիս, գող աւագակ... Հար չաշանակ, ասաց նանը և կորած իրերն ուրախ ուրախ բերեց՝ հարսին, թոռին աչքալոյս տւաւ:

Գող սիրտը դող:

88. Կաշաղակ

Այ չաշանակ,	Մէկ էլ յանկարծ
Կաշաղակ,	Չայրացած՝
Սիրուն թռչնակ,	Սուգի խոտ
Սարսափակ,	Սնահաղիտ,
Ի՞նչ ես բնիկ գոնէգուն,	Երկար պոչդ շարժելով,
Բակ ու պարտէզ ու կտուր	Ի՞նչ ես բացում կտուցդ
Եւ մաքումդ էդ ի՞նչ կայ.	Եւ վրդոված հոգուցդ
Քանի ճըշաս,	Չայն ես տալի
Կըշ-կըշաս՝	Վշտալի՝
— Զրկւ— Զրկւ,	— Զրկւ— չէ— չէ,
Զրկւ— Զրկւ...	Զրկւ— չէ— չէ...

Եւ չոռ ուտե՞մ.

Կէսօրւայ հացի ժամանակն անցել էր։ Երեքամեքը շատ խաղցած են, անհամ—
բեր դէս դէն են ընկնում։ Վեց չարս
ծրէի երեքամեք տունը ոտի տակ են առել
— Եղիշ, Լապիւր, տես, Աւարիկն ինչպէս է
երեսը թրւեցրել, բժ . . .

փորիդ, հանափետր եւս անում. դու էն
աւան, Տայրիկն երբ հաց կը տայ :

— Երանի լեզ, Աւարիկ, որ դեռ ուտե—
լու Տաւիկն եւս մտածում :

Վեց երեքայ, տամն էլ, վեց չու կար. Տայրը
վեց չուն խաշեց ու բերեց. երեքամեքը ու—
րախուլութիւնից վեր վեր թռան :

Տայրն ամեն ժէկին մի մի չու տուց հաց
տուց . . .

— Վայ, վայ, Տայրիկն բաժին չուաց. Տայրի—
կն բաժին չուաց, ամեն կողմից կանչեցին .
փոխքիկեքը :

Բան չկայ, բալիկներս. ի՞նչ երաժը զուր է.
ի՞նչ երաժը կորած է. եւ չոռ ուտե՞մ. ամեն
ժէկդ կէս կէս չու տալ, ինչ եղիթ է :

1.

—Ի՞նչ կայ, Բողար, հարցրեց հաւր շանը:

—Այսօր երկու նոր թռչուն են բերել այստեղ:

—Ի՞նչ թռչուն, ի՞նչ բան, հարցրին հաւերը. հետաքրքիր է տեսնել:

Այդ ժամանակ ծառան գամբիւղից հանեց հայր ու մայր բաղերին: Հաւերը զարմացած նայում էին:



—Մարդը կնոջից աւելի սիրուն է, ասաց մի հաւ, տեսէք, նրա գլուխը որչափ գեղեցիկ է ներկւած:

Իսկ կինը մեզ նման մոխրագոյն փետուրներ ունի, ասաց միւսը:

—Տեսէք, ի՞նչպէս անշնորհք են ման գալիս, ասացին մի քանիսը:

—Մայրիկ, տես, նրանց ոտքերի մասների տրանքում կաշի կայ, նկատեց մի ճուտ:

—Մատների արանքում կաշի... ծիծաղելի է, կրկնեց մայրը. ինչո՞ւ համար է այդ կաշին. չէ՞ որ էդպէս նրանք չեն կարող քջուջ անել:

—Հապա ա՛յն անճոռնի տափակ կտուցները, վրայ բերաւ ուրիշը, կարծես իրար վրայ դրած երկու գգալ լինին:

2.

Բաղերը գնացին բակի աւազանը և ջուրը մտան:

—Կը խեղդւէք, կանչեց աքաղաղը. ո՞ւր էք գնում:

Հաւերը զարմացած նայում էին:

—Զարմանալի է, ասաց մի վագեկ. ո՞վ կարող էր մտածել, որ թռչունները կարող են լողալ:

—Դա երկար չի քաշի, ասաց ուրիշը. շուտով նրանք՝ ջրի մէջ գլխինձի կը տան:

—Տեսէք, տեսէք, գլուխը կոխեց ջրի մէջ. էն ի՞նչ է անում:

—Ա՛յ, ա՛յ, օգնեցէք, մարմնի կէսը ջրի տակն անցաւ, կանչեցին մի քանիսը:

Բաղը գլուխը հանեց, նա կտցումն ունէր խոտ. իսկոյն իրար մէջ բաժնեցին:

—Ուտում են, ուտում, ասաց մի հաւ. տես, Կիմա էլ որդ հանեց, ա՛յ, էլի հանեցին, կերան:

Բաղերը բաւական լողացին և գուրս եկան:

3.

—Շատ ուրախ եմ, որ ողջ առողջ յետ դարձաք, ասաց աքաղաղը. արևի տակ եկէք, թրջւած էք, կարող էք մրսել:

—Հանգիստ կաց, պատասխանեց բաղը. մենք ամեն օր իւրդուում ենք մեր փետուրները. ջուրը չի կարող մեզ թրջել:

Աքաղաղն ու հաւերը զարմացած նայում են իրար:

—Կարճիկ ես մեզ քնելու տեղ ցոյց տալ խնդրեց մի բաղ:

—Ուրախութեամբ, պատասխան տւեց աքաղաղը և տարաւ նրանց հաւանոց:

Այ, այստեղ ձեզ համար է պատրաստուած, ասաց աքաղաղը և բարի գիշեր մաղթեց:

Բաղերը գլուխները կոխեցին թևերի մէջ և հանգիստ քնեցին:

Բաղի ճուղը որ ձւից դուրս գայ՝ դէպի ջուրը կը վազէ:

Մի լինիր ուրազի պէս, միշտ դէպի խեղ
միշտ դէպի մեզ: Նապա եղիր սղոյի
պէս, մէկ դէպի խեղ, մէկ դէպի մեզ:

91. Նանի հրաւերը

«Բնւի-բնւի, բուլի-բուլի,

Իմ բալիկներ,

Եկէք, կերէք ախորժալի

Ձեր հատիկներ:

Հերիք ինչքան սառը ջրում

Հոդ-լըղացիք,

Թե թափ տալով դուք անդադրում

Ճրդ-ճըղացիք»:

Բազ ու բազիկ կարմրաթաթիկ,

Նաշխուն փետուր, գիփ խատուտիկ,

Ձւագլուխ երկայնավիզ,

Տափակ կտուց, բայց կարմրամիտ,

Տուն գնացին օրօրւելով,

Ազիկ-մազիկ շորորւելով:

Տուն գնացին, գտան նանին,

Տանջանք դառան նանի ջանին:

—Չը՛ր-ճը՛րտ, ճը՛ր-ճը՛րտ, դա՛, դա՛, դա՛, դա՛,

Բա՛ մեր կուտը էս սրտեղ ա...»:

Նանը գնաց, ցորեն բերեց,

Առատ, առատ գետին փռեց,

Նրանք կերան լիք լիք բերան,

Կշտացան ու՝ հայդէ, կորան:

92. Ո՞վ է ուժեղ

Ես եմ անտառի տէրը, ես եմ ամենից ուժեղը, պարծեցաւ բրդոտ արջն անտառի զազանների մօտ:



—Ո՛հ, մարդն է, ճշաց աղէսը:

—Ի՞նչպէս ես համար-
ձակում այդպէս խօսել,
աղէս. ես մարդուն թաթիս
մի հարւածով ջարդ ու փշուր
կ'անեմ, ասաց արջը:

—Իսկ ես նրան պատառ
պատառ կ'անեմ, վրայ բերեց

գայլը:

—Կը տեսնենք, փրնթփրնթաց աղէսը:

—Ես կը թռչեմ բարձր, շատ բարձր, ամպերին կը հասնեմ,
ասաց թռչունը. մարդը թևեր չունի, որ ինձ հասնի:

—Ես էլ կը լողամ, ջրի խոր տեղը կ'իջնեմ, ասաց ձուկը.
մարդը չի կարող ջրի մէջ ապրել, նա ինձ չի հասնի:

—Ես հողի մէջ հանգիստ կը պառկեմ, ասաց որդը, մարդն
ինձ չի տեսնի և ոչինչ չի կարող անել:

Մարդը գուրս եկաւ հրացանն ուսին, մի ձեռքում թակարդ՝
միւսում ուռիան. ինչ արաւ մարդը:


Յշխարհը խելքով են կերել:

էն ինչն է՝

Սև ու մութ տուն, ստաւանան մէջը քուն:

Դաւանի վարդը .

ժողովիկ տղան Դի վարդ տեսաւ .
Աիրուն վարդը դաւանի միգին .
Ուրախ ուրախ շուտ Ըօտեցաւ ,
Որ լաւ նայէ սիրուն վարդին :
Այ ի՞նչ վարդին , կարմիր վարդին ,
կարմիր վարդը դաւանի միգին :



94. Սարդն ու շերամը

1.


— Ինչ գանդաղկոտ ան-
շնորհքն ես, ասաց սարդը շե-
րամին. մի ինձ նայիր, տես,
ինչպէս եմ գործում, ինչ-
պիսի բարակ ու երկար
թելեր եմ շինում, ես վա-
զում եմ այդ թելերով վեր,
վար, աջ, ձախ:

— Տես իմ գործած ստաւանը


ինչ սիրուն է. իսկ դու նստած
հազիւ հագ ես շարժում.

2.

Ինչ ես պարծենում, ինչո՞ւ
է պէտք քո ստաւանը. ամեն
մարդ էլ նրանից զգւում է, սե-
նեակները մաքրելիս քո ստաւ-
անը գուրս են գցում: Իմ հիւ-
սածը մեռաքս է: Հարուստ,
աղքատ, մեծ ու փոքր սիրում
են մեռաքան ու նրանից լաւ լաւ
շորեր կարում. թող, բարեկամ,
ինձ անւանեն գանդաղկոտ ու
անշնորհք. միայն թէ գործածս
լինի մեռաքս:



Ա ա Բ բ Գ գ Դ դ Ե ե Զ զ Է է Ը ը
Թ թ Ժ ժ Ի ի Լ լ Խ խ Ծ ծ Կ կ Ժ պ
Ձ ձ Ղ ղ Ծ ծ Ր Ր Յ յ Ն ն Ծ լ Ո ո
Չ չ Մ մ Շ շ Ռ ռ Ա ա Վ վ Ս ս
Ք Ք Յ յ Ժ ժ Փ փ Ք ք Օ օ Ֆ ֆ



95. Հըմա կերանք

Իշխս բարձած տանձ, խնձոր,
 Ես գնացի Գոմաձոր.
 Վերադարձիս մէկ էլ օր
 Ճամփին զարկի մի մեծ լոր.
 Էզ ահագին մեծ թռչնին
 Մի կերպ բարձի իմ իշին,
 Ուրախ ուրախ եկայ տուն,
 Կնուէք արի իմ որդուն:
 Էլ տիրացու, էլ տէրտէր,
 Կնքահէր ու կնքամէր,
 Քեօխւակին ու քեօխւամէր,
 Դուռ ու դրկից, խնամի,
 Էլ խնչ թւեմ միտումի,
 Եօթը հէրանք, եօթը մէրանք
 Թափանք՝ էզ լորը կերանք,
 Հըմա կերանք, հըմա կերանք:

96. Այ բաղնիք արին հա՛...

Էրանն ու Սիրանը սագերն առաջ արին, քշին զիւղից դուրս:
 —Էրան, քշենք Մօսնանց ջրաղացը, նաւի պըտըտանումը լաւ բաղանիք կ'անեն, առաց Սիրանը:
 —Հա, Սիրան, ամա կը լողանան հա:
 Սագերը ջուրը մտան ու առանց իմանալու, որ վտանգ կայ, իրար ետևից թափւեցին նաւը, ուր ջուրը պտտեց, խեղդեց ու ներքևի անիւի թևերին տալով, էս ու էն կողմը փռեց:
 Էրանի ու Սիրանի սիրտը պատռեց, նոր հասկացան իրենց սխալը ու լալով, գոռալով վագեցին տուն:
 Մայրիկ, սագերը ջրաղացի նաւը մտան ու էլ դուրս չեն գալիս, գանգատեց Սիրանը:

—Իրանք գնացին, այ մայրիկ, մենք բան չարինք:

—Վա՛յ, քոռանաք դուք, սագերս կոտորել էք հա, ճչաց մայրիկն ու վագեց դէպի ջրաղացը:

Գրիգոր պապն էլ, որ սրահի թախտի վրայ քնած էր, էս աղմուկի վրայ զարթնեց ու երեխաների հետ շտապեց փորձանքի տեղը:

Մայրիկը մէկ-մէկ հանեց սատկած սագերը չարիսի մօտերքից և բարկացած ետ դարձաւ, որ Էրանին ու Սիրանին մի լաւ դմփի, բայց Գրիգոր պապը չթողեց ու այնուհետև քէփի լաւ ժամանակ միշտ ծիծաղելով ասում էր.

—Երեխէք, ձեր սագերն ամա բաղնիք արին հա՛...

Մանուկը չորում

Ասրի ցակից խլիւլով

Չուրն է վազում ոլոր մոլոր.

Չուրն աղբիւրի վծիւր ու ցով.

Գնում. քափուում ծաղկունանց ծով:

Ջէյ, աղբիւրի սիրուն գրեք,

Ես էլ Լինեմ չեպ հեպ ընկեր

Սեպէ, չեպ հեպ ծաղկաչորում

Խնչպէս եմ ես ուրախ պարում:

Չուրիկ-մուրիկ, անուշ փուրիկ,

Սխալէրդ եմ ես, սիրում եմ փայ.

1.

Մի կառք փողոցով արագ գնալիս տակովն է անում մի շուն, անիւն անցնում է խեղճ շան ոտքի վրայով:

Շունը՝ բերնի մէջն առած վիրաւոր թաթը՝ վրնգվրնգում է ցաւից ու դողդողում: Մի բժիշկ տեսնելով նրան, խղճում է, վերցնում, տանում տուն:

Տանում է տուն, դեղ է դնում վերքի վրայ, խնամում, պահում պահպանում այնքան ժամանակ, մինչև որ շան ոտքը բոլորովին լաւանում է. յետոյ նրան բաց է թողնում:

2.

Մի քանի ժամանակից յետոյ բժիշկն իր տանը հասած լսում է, որ մէկը բակի դուռը չանկոտում է:

— Գնամ, տեսնեմ ի՞նչ բան է, ասում է բժիշկն ինքն իրան ու դուռը բաց է անում:


Բաց է անում, ի՞նչ է տեսնում՝ իր բժշկած շունը մի ուրիշ շան հետ:

Երախտագէտ շունը բժշկին տեսնելուն պէս ընկնում է նրա ոտքերը, լիզում, փայփայում է...

Բարև, բարև, ծիծաղելով ասում է բժիշկը:

Այդ ժամանակ ծանօթ շունը մօտենում է իր հետը բերած շանը և նրա թաթը ցոյց է տալիս:

— Հա, ուրեմն ինձ հիւանդ ես բերել, ապրիս, ապրիս, ուրախացած ասում է բժիշկը և երկու ընկերներին ներս հրաւիրում:



I

Վարպետ աղէսը մի օր Չափշփորեց դաշտ ու ձոր, Տուն դառնալու ժամանակ Ճամբին ընկած մի սպիտակ Թուղթ նկատեց. առնելով Ծոցը դրեց ասելով.

«Սա ծոցումս թող մնայ, Գուցէ մի օր պէտքը գայ»:

Հէնց էս խօսքը բերանին

Տեսաւ՝ եկաւ գէլ քեռին:

— Բարև, բարև, գէլ ընկեր,

Ի՞նչ ես էսպէս մոլորել,

Սոված հօ չեմ, սիրելի,

Հը՞, ինչի՞ չեմ ձէն տալի:

— Անտէր մնայ էսպէս կեանք,

Սմեն օր ցաւ ու տանջանք.

Էս հինգ օր է, ճիշտ հինգ օր՝

Բան չեմ կերել մի կտոր.

Ի՞նչ կլինի՞ մտածես,

Թովի ձեռքից ազատես:

— Վայ, քոռանամ, գէլ ընկեր,

Ի՞նչ վատ օրի ես եղել.

Հիմի էլ որ քեզ չօղնեմ՝

Կողներն ի՞նչ կասեն:

Հազար ու մի հնարքով,

Անասելի տանջանքով,

Մարդ ու կաշառք, միջնորդներ

Մէջ եմ գցել ու առել

Մեծ իշխանից հրաման,

Որ այսուհետև անխափա

էս գիւղերի տներից

Ամիսը մի հաւ տան ինձ,

Բայց սոված չեմ ես հիմի,

Գնա գիւղն էն դէմի,

Տար իմ թուղթը, թող կարդան

Հաւեր ժողվեն ու քեզ տան:

— Դէ, աուր թուղթը իշխանի,

Տանեմ՝ փորիս դեղ անի:

— Ա՛ռ, ընկեր ջան, թուղթը տար,

Շուտ գնա, իմ հարկն առ:

II

Թուղթը ձեռին նա հպարտ

Գիւղը մտաւ լուռ, հանդարտ:

«Լսէք, մարդիկ, տանուէր,

Գղիւր, քեօխաւայ ու տէրտէր,

Գիւղի ջոջեր պատուական,

Մեծ իշխանի հրաման:

Ա՛յ, գրւած է էս թղթում,

Որ անխտիր ամեն տուն

Մի հաւ տայ ինձ ամսական»:

— Ի՞նչ իշխան, ի՞նչ հրաման,

Ասին մարդիկ ու ելան՝

Առան մահակ ու կոպալ,

Էլ մի հարցնի քեռու հալ.

Շներն էլ էս աղմուկից

Դուրս վազեցին բակերից,

Գէլին մի լաւ գզեցին,

Տարան՝ գիւղից հանեցին:

«Տէս, էսպէս էլ մարդ ու շուն,
Իշխանին էլ չեն լսում»:
Մէկ էլ աղւեսը դէմից
Դէպի քեռին է գալիս.
— Իմ բաժինը, գէլ ընկեր,
Ի՞նչ ես էղպէս չափ ընկել.
— Տօ ի՞նչ բաժին ու ի՞նչ հարկ.
Գիւղում եղայ խայտառակ.

Պատիւ տալու փոխարէն
Քիչ մնաց որ սպանեն:
— Ի՞նչ... Քեզ ծեծեց գիւղացի՞ն...
Բա թղթին ի՞նչ ասացին:
— Այ անիծւի էղպէս գիւղ.
Ոչ ա՛հ ունեն, ոչ երկիւղ:
Հազար մարդ կայ, հազար շուն,
Բայց բոլորն էլ անուսում:
Մէկը չեղաւ, որ կարգայ,
Հասանելիք հարկը տայ:

ԷՆ ԻՆՉՆ Է

Ոչ ցորեն եմ, ոչ գարի,
Որ հողագործն ինչ ցանի
Սոսնայ չեռի հունցած եմ.
Սոսնայ կրակ թխած եմ.
Թուիր, զաղայ ցեւած չեմ,
Չեր ամենիդ սիրածն եմ:

Բռնեմ ափովս, շող տամ թաթովս,
Մեռնի տարով, ապրի բարով:



Նապաստակն ու աղւեսը

Անտառի մէջ բարձր տեղում,
Որտեղ քամին պար էր խաղում,
Նապաստակը բուն էր շինել
Ու աղւեսին ընկեր եղել:
Տուն էր շինել այն էլ փայտից,
Պաշտպանում էր տաքից—ցրտից:

«Լաւ, ներս արի, դրկից աղւես,
Բայց խնդրում եմ ինձ հետ
վարենս,
Կոխ, ուշուց ես չեմ սիրում,
Հին բաներն էլ չեմ քրքրում»:
Ու աղւեսը մտաւ տունը,
Ճաշը կերաւ, առաւ քունը:
Քնից զարթնեց, դէս դէն նայեց,
Տան տիրոջը խիստ հայնոյեց.
— Այ վայր տամ էդ քո գլխին.
Դու տան տէրը, ես աղախին,



Աղւեսինը թէն լայն էր,
Թէն երկու աչքանի էր,
Բայց շատ ցուրտ էր՝ ողջը ձիւնից:
Մի օր եկաւ հախըլոցը,
Տունն առաւ կաթկըթոցը.
Դեռ չհասած մարտի կէսը,
Անտուն մնաց մեր աղւեսը:
— Ոտքդ պաչեմ, այ Շահգաղէ,
Ցրտի ձեռքից ինձ աղաատէ,
Մի անկիւն տուր տանդ միջին,
Ծառայ արա քո առաջին:

Տան մեծ մասը քեզի պէսին,
Դռան տակը խան աղւեսին:

Դէհ, շուտ կորի,
Ծուռ աչք շրտիկ.
Պոչ էլ չունի,
Սրան մտիկ:

Նապաստակն ու աղւեսը

Նապաստակն իրանն առաւ,
Տունը թողեց ու դուրս թռաւ,
Յետ չնայեց վազեց, լացեց,
Քեռուն գտաւ, ցաւը պատմեց.
— Այ իմ քեռի, այ արջ ախպէր

էն աղւէսը՝ չար սրտամեռ,
 Փայտէ տունս ձեռքէս առաւ,
 Դուռը փակեց իրանն արաւ:
 —Քրոջ որդի, է, ամօթ չէ,
 Որ դու կուլաս, քեռիդ սաղ չէ:
 Արի գնանք, ես էն փչին
 Մի լաւ դաս տամ տանը միջին:
 Սրտոտ քեռին դուռը ծեծեց
 Ու աղւէսին հերսոտ կանչեց:

—Տօ փուշ աղւէս, տսաւ, ինչո՞ւ
 էս իմ որբիկ քրոջ տղի
 Փայտէ տանը տէր ես դառել
 Ու իրան էլ դուրս ես արել:
 —Լաւ եմ արել,
 Տէր եմ գառել:

Ու աղւէսը դռան ծակից
 Վառարանի թէժ կրակից
 Բերեց, ցանեց արջի վրան,
 Մի լաւ խանձեց դունչն ու բերան:
 Փախաւ արջը դունչն այրած,
 Քրոջ որդին հետն առած:

Նապաստակն ու գայլը
 Անտուն, անտէր նապաստակը
 Գնաց, նստեց ծառի տակը,
 Մազիկ մազիկ մզկտալով,
 Ցաւն էր պատմում բարձր լալով:
 Լացը լսեց գայլը դանդաղ,
 Եկաւ ասաց. «Այ քեզ մատաղ,
 Ինչի՞ կուլաս մազիկ-մազիկ,
 Կտրատելով սիրտ ու աղիք»:
 —Է՛, գայլ եղբայր, բանս բուրդ է,

Վրէս բարակ, օրը ցուրտ է.
 Էն աղւէսին թող չմնայ,
 —Գնանք, ցոյց տուր էն աղւէսին.
 Դայլ, նապաստակ ընկան ճամբայ,
 Եկան, եկան, մին էլ ահա
 Հասան,
 Տեսան
 Մի վառ կրակ
 Վրան կաթսան:

Ծեր աղւէսը գոգնոցն հագին,
 Վրէն մաքուր արգին-կարգին,
 Դունդունալով ճաշ էր եփում,
 Շերեփով խառնում, քեափը
 Կերակուրը իւղոտ-սոխոտ
 Հոտ էր բերում, մի անուշ հոտ,
 Որ ծեր գայլին կալեց, կապեց,
 Ախորժակը խիստ գրգռեց:

—Կորիք, քաւթան,
 Մե ցաւը քեզ,
 Նապաստակի պաշտպանին տես:
 —Մի բարկանայ, պարոն աղւէս,
 Քո ցեղակից գայլիկն եմ ես.
 Նապաստակի հետ ինչ ունեմ,
 Եկայ քեզ մօտ, որ ճաշ անեմ:
 —Քիչ սպասի, ճաշը հասնի,
 Խնդրեմ մի գաս, տակը փչես,
 Դիտեմ, որ դու հպարտ էլ չես:
 Դայլը իսկոյն կրակը փչեց,
 Ու աղւէսը կաթսան շրջեց,
 Յիմար գայլի գլուխը խաշեց:
 Դայլը սաստիկ ունաց, գոռաց,

Պոչի վրայ շատ ֆրոֆրոաց,
 Գլխի ցաւից ելաւ թռաւ՝
 Մի շորս ոտ էլ դեռ փոխ առաւ:
 Նապաստակն ու ախարաղը
 Անտուն անտէր նապաստակը
 Դարձեալ եկաւ ծառի տակը.
 Մազիկ-մազիկ մզկտալով,
 Ցաւն էր պատմում
 Բարձր լալով.
 «Ինձ լաւ խաբեց կեղծաւորը,
 Դուրսը թողեց էսպէս օրը.
 Անտուն, անտէր ես ի՞նչ անեմ,
 Մի տեղ չկայ, միջին քնեմ»:



Չայնը լսեց աքաղաղը,
 Իսկոյն թողեց իրա խաղը,
 Վազեց՝ եկաւ ծառի տակը,
 Որտեղ կուլար նապաստակը:
 —Ինչի՞ կուլաս, այ իմ շրլաիկ,
 Մի լար, մի լար, չարդ տոնեմ.
 Պատճառն ասա, մի ճար անեմ:
 Նապաստակը տքաղաղին
 Պատմեց եղածն իրա տեղին:

—Որ այդպէս է;
 Մի սպասէ,
 Էլ մի աղգա,
 Հետս վզգա,
 Տան տէր դառի,
 Ինձ մի վառի:
 —Միջին պէս նրան կտցեմ.
 Աղւէսն ինչ է՝ հետը մրցեմ:
 Մութը մութին,
 Ժամը ութին
 Արագ, արագ
 Առանց՝ ճրրագ
 Հերոսները
 Տունը հասան
 Ու անսասան

Քաջը գոչեց ձայնը փոխած,
 Ալ արիւնը աչքը կոխած.
 —Ես ոչ արջն եմ, ոչ էլ գայլը,
 Աշխարհք կ'առնէ շորիս փայլը.
 Ես իշխանն եմ Մեծ Վարդերես,
 Սուր եմ կախել հինգ գաղ ու կէս:
 Էլ չի պրծնի գող աղւէսը,
 Թէ որ գտնեմ նրան ներսը:
 —Այ, էս ո՞վ է Վարդերեսը:
 Դուռը բացեց խան աղւէսը
 Ու էն մթնով
 Դիպաւ գեանով,
 Լեղատառտաւ
 Ընկաւ անտառ:

Աքաղաղն ու նապաստակը,
 Որ քաշում էր տան փափագը,
 Տուն ներս մտան, սեղան նստան,
 Հաշտ ու բարիչ լաւ ընթրեցին
 Ու էդպէս էլ միշտ ապրեցին:

Անտառի պէս պճնասէր
էլ ուրիշը կլինի՞.

Ունի սիրուն հագուստներ

Ու զարդարանք գեղանի:

Մէկ էլ տեսար՝ նա կանաչ

Շորեր հագած զարդարուն,

Նազ ու տուգով ձախ ու աջ

Տատանւում է, սլւլում:

Մէկ էլ գեղին շոր մտած,

Տեղ-տեղ կարմիր ու նախշուն,

Ապա տկուր, գլխաբաց

Օրօրւում է, հառաչում:

Նորահարսի պէս սպիտակ

Մէկ էլ տեսար՝ հագաւ շոր:

Կախած փայլուն գինդ, մանեակ,

Կանգնեց անշարժ ու մոլոր...

Ու ողջ տարին պճնասէր,

Սիրուն անտառ հա էսպէս

Փոփոխում է իր շորեր

Եւ զարդարանքը պէսպէս:

102. Սալթան թագաւորի հէքիաթը

1.

Հէնց այս խօսքերն ասաց,

Հասաց՝

Սենեակի դուռն հանդարտ ճուռաց,

Ու ներս մտաւ այն աշխարհի

Քաջագօր արքան բարի:

Վերջին խօսքին հաւան կացած՝

Երրորդ քրոջ դիմեց, ասաց.

«Բարո՞ւ, նախշուն գեղեցկուհի,

Գնանք, եղբր դու թագուհի»:

Հայրախնամ արքան երաւ,

Երեքին էլ հեռը տարաւ:

Էլ չսպասեց թագաւորը

Ու պսակւեց հէնց նոյն օրը:

Այն ժամանակ պատերազմ

Սալթան արքան պիտի գնար.

Նա հեծնելով իր նժոյգ ձին՝

Հրաժեշտ տւաւ իր սիրածին:

Երբ տիկինն արքայական

Ծնեց մանուկ հսկայական,

Մի սուրհանդակ զրկեց, երթայ,

Երեխի հօր աչքալոյս տայ:

Քոյրերը նենդ ու գիւային

Եւ Բաբարիս չար խընամին՝

Նրան կորցնել կամենալով,

Սուրհանդակին բռնել տալով՝

Ուղարկում են այլ սուրհանդակ,

Հաղորդի լուրն այս դժնդակ,

Թէ ծնւել է մի երեխայ,

Ոչ աղջիկ է, ոչ էլ տղայ:

Հէնց որ լսեց մեր Սալթանը

Սուրհանդակի տաճ բանը,

Խիստ կատաղեց ինքն իրան,

Ուղեց իսկոյն կախել նրան.

Բայց մեղմացաւ նա այս անգամ.

Ու այսպիսի գրեց պատգամ.

«Ըստասեցէք մինչև գալըս,

Դատաստանով վճիռ տալս»:

Իսկ նենդ քոյրերն իսկոյնեթ

Չար Բաբարիս պառաւի հեա՝

Խմեցնում են սուրհանդակին,

Թուղթը փոխում կռան տակին:

Եւ նա ահա բերաւ հարբած

Կեղծ պատգամն այսպէս գրւած.

«Իշխանների Սալթան արքան

Ուղարկում է սաստիկ հրաման,

Որ թագուհուն երեխի հեա

Ծովը ձգեն իսկոյնեթ»:

Եւ թագուհուն իսկոյնեթ

Նստեցնելով իր որդու հեա՝

Տակաւի մէջ պինդ կալեցին,

Ովկիանոսը գլորեցին:

2.

Հէք թագուհին տակաւի մէջ

Իր սե օրը լալով անվերջ,

Որդուն պահում ու պահպանում,

Մեծացնում էր, սրնուցանում:

Մեծանում էր ոչ թէ օրով,

Մեծանում էր նա ժամերով:

Մթնեց օրը. մայրը լալիս,

Որդին ներսից ձայն է տալիս.

«Է՛յ, ալիքներ, իմ ալիքներ,

Ըզրօսասէր կայտառ ջրեր,

Տարէք ու մեզ ցամաք հանէք»:

Ալիքները ականջ արին,

Չարնըւեցին մեծ տակաւին,

Յորձանք տալով՝ հանդարտ նրա՝

Դուրս հանեցին, ցամաք տարան

«Ի՞նչպէս անենք, որդին ասաց,

Որ պատրաստենք իրիկնահաց»:

Կաղնուց մի ճիւղ նա կտրելով,

Ամուր աղեղ պատրաստելով՝
Բարակ ճիւղոտ կտրեց, սրեց
Ու աղեղի նետ պատրաստեց,
Ապա գնաց հովտից հեռու
Ծովի ափին որս անելու:

Հէնց որ գնաց դէպի առաջ,
Ծովի կողմից լսեց հառաչ...
Նայեց—տեսաւ ծփող ջրում
Դի կարապ է ահով լողում,
Ժափ է տալիս իր թևերը,
Գեծում ջրի ալիքները:
Իսկ վերև մի ցին գիշակեր՝
Յցած ահեղ իր սուր ճանկեր,
Հսպառնալով խեղճի կեանքին՝
Խառնում է ուղիղ գլխին...
Տես, նա արդէն կարապի մօտ,
Երեց կտուցն իւր արիւնոտ...
Խակայն նետն այդ միջոցին
Ի պաւ ցինի պարանոցին...
Իննով ներկեց ծովի ջուրը,
Յինը գնաց մահաւան դուռը:
Ներմակ կարապն արդէն փրկւած՝
Ի ազաւորի որդուն ասաց.
Արքայորդի, դու իմ փրկիչ,
Հաջահօր իմ ազատիչ.
Քեզ չեմ մոռնալ յաւիտեան ես,
Իւր կամենաս, ինձ կը գտնես.
Իսկ առ այժմ՝ վերադարձիր,
Նա, պառկիր, հանգստացիր»:

3.

Կարապը գնաց: Մայրն ու որդին
Գիշերեցին ծովի ափին:
Ահա բացաւ նա աչքերը,
Ու իր առաջ տեսաւ շքեղ
Մի նոր քաղաք հրաշագեղ:
Մայր ու որդի ոտքի ելան,
Հէնց քաղաքի դռնով անցին,
Ձանգակները ղողանջեցին.
Մեծ ու պստիկ բազմութիւնով,
Առօք-փառօք ու թափորով,
Շքեղ խմբով պալատական
Նրանց առաջ ահա եկան
Ու օրհնելով բարձր ձայնով՝
Պալատ տարան շուք ու փայլով:
Թագաւորի որդու գլխին
Իշխանական գլխարկ դրին
Ու անունը դրին Գւիգօն:
Նաւերն եկան նաւահանգիստ,
Հիւրերն իջան, առնեն հանգիստ.
Իշխան Գւիգօն կանչել տրւաւ
Ու հիւրերին պալատ տարաւ.
Նրանց մի լաւ հիւրասիրեց,
Պատիւ տաւ, ապա հարցրեց.
—Էդ ո՞ւր բարով, ո՞ւր էք գնում:
—Մեց Սալթանի հոգն ենք գնում:
Այն ժամանակ իշխանն ասաց.
«Բարի ճամբայ տայ ձեզ Աստուծ».

Տարէք Սալթան թագաւորին «Ծովի միջին մի ժամանակ
Ինձնից բարև, յարգանք խորին»:
Իսկ Գւիգօնը տխուր, մոլոր՝ Սալթան հիմա մի հրաշագեղ
Դեռ կանգնած է ծովի ափին. Նոր քաղաք է բնել այնտեղ՝
Յանկարծ տեսաւ իր կարապին, Ոսկեզմբէթ տաճարներով,
Ջրի միջին նա լող տալով՝ Պալատներով, այգիներով:
Բարև տաւ մօտենալով: Կղզու Գւիգօն իշխանը մեծ
«Է՞ր ես, իշխան իմ աննման, Քեզ շատ ու շատ բարև արեց»:
Տխուր՝ ամպած օրւայ նման»:
Գւիգօնն ասաց. «Սիրտս վէրքոտ Շատ զարմացաւ թագաւորը
Միշտ քաշում է հօրս կարօտ»:
Կարապն ասաց. «Մի վշտանար, Գւիգօնի մօտ հիւր կը գնամ»,
Ճար կը գտնեմ ցաւիդ համար:
Արի, իշխան, մոծակ դարձիր, Ձուհակի հետ խոհարարը
Թո՛ւր, գնա, նաւին հասիր»:
Ու թևերը թափահարեց, Ու արքային խելքից հանեն:
Ծովի ջուրը չըփչըփացրեց, «Ձարմանալու ինչ կայ այդտեղ,
Ոտից գլուխ թըջեց նրան, Թէ քաղաք էք տեսել այնտեղ:
Պատկացրեց կէտի նման: Հրճք ասեմ, որ զարմանաք,
Արդէն փոքրիկ մոծակ դարձած՝ Աչքով տեսնէք, սքանչանաք.
Թուաւ տեղից ու տրդտրդաց, Անտառի մէջ կայ եղենի,
Սըլանալով նաւին հասաւ: Եղենու տակ սկիւռ կայ մի,
Հիւրերն ահա ծովափ ելան. Ըսկիւռը միշտ խաղ է տաում,
Տուն հրաւիրեց նրանց արքան: Ընկոյզներ է անվերջ կրծում:
Մեր մոծակն էլ իսկոյն և եթ Ընկոյզներն էլ չեն հասարակ,
Մտաւ պալատ հիւրերի հետ: Ինչպէս որ կան առհասարակ,
«Ո՞րտեղ էիք, ման եկաք շատ, Այլ դուռ ոսկէ կճեպներով
Ծովից այն կողմ լաւ է թէ վատ. Ու գմբուխտէ միջուկներով»:
Ինչ տեսակ են այնտեղ ապրում, Գւիգօն նորից ծովի ափին
Ուրիշ ինչ հրաշք կայ աշխարհում: Ըսպասում է իր կարապին:

Նա լող տալով ահա ջրում՝
 Մօտենում է ու բարեկում.
 «Է՞ր ես, իշխան իմ աննման,
 Տխուր՝ ամպած օրւայ նման»:
 — Ասում են, որ կայ եղենի,
 Եղենու տակ ըսկիւռ կայ մի,
 Ըսկիւռը միշտ խաղ է ասում,
 Ընկոյզներ է անվերջ կրծում.
 Ընկոյզներն էլ չեն հասարակ,
 Ինչպէս որ կան առհասարակ,
 Այլ գուտ ոսկէ կճեպներով
 Դւ գմբուխտէ միջուկներով:
 Եւ իշխանին կարապն ասաց.
 «Բաւական է, մի վշտանար,
 Ճար կը գտնեմ ցաւիդ համար»:
 Կէնց նա ոտքը դրաւ շէմքին,
 Եեսաւ բակում ծառի տակին
 Մի սկիւռիկ, որ անընդհատ
 Կրծում ոսկի ընկոյզ հատ հատ
 Միջից հանում գմբուխտները,
 Իզում, շարում է կոյտերը:
 Գլիզոն նայեց, ապշած Ֆնաց.
 «Շնորհակալ եմ», ուրախ ասաց:
 Իշխան Գլիզոն հէնց այն օրից
 Ի տուն շինեց բիւրեղներից,
 Սկիւռիկն պատսպարեց
 Եւ նրա մօտ պահակ դրեց:

Նաւակն եկաւ նաւահանգիստ,
 Իւրերն իջան, առնեն հանգիստ.
 Ընկոյզներն էլ չեն հասարակ,

Իշխան Գլիզոն կանչել տաւ
 Ու հիւրերին պալատ տարաւ,
 Նրանց մի լաւ հիւրասիրեց,
 Պատիւ տաւ, ապա հարցրեց.
 — Էդ ո՞ւր բարոյ. ո՞ւր էք գնում:
 — Մեծ Սալթանի հողն ենք գնում:
 Այն ժամանակ իշխանն ասաց.
 «Բարե ճամբայ տայ ձեզ Աստած.
 Տարէք Սալթան թագաւորին
 Ինձնից բարե, յարգանք խորին»:
 Եւ Գլիզոնին հրաժեշտ տալով
 Հիւրերն ելան իրանց նաւով:
 Հիւրերն ահա ծովափ եկան,
 Տուն հրաւիրեց նրանց արքան:
 «Ո՞րտեղ էիք, ման եկաք շատ,
 Ծովից այն կողմն լսւ է թէ վատ,
 Ի՞նչ տեսակ են այնտեղ ապրում,
 Ու ի՞նչ հրաշք կայ աշխարհում»:
 «Ա՛յ, ինչ հրաշք կայ աշխարհում.
 Ծովում կղզի կայ փառաւոր,
 Կղզու վրայ քաղաք մի նոր՝
 Ոսկեգմբէթ տաճարներով,
 Պալատներով, այգիներով.
 Ապարանքի առաջ կայ մի
 Մշտագալար մեծ եղենի.
 Եղենու տակ՝ բիւրեղէ տուն,
 Միջին սկիւռ մի ձեռնասուն.
 Ըսկիւռը միշտ երգ է ասում

Ու անդադար ընկոյզ կրծում.
 Ընկոյզներն էլ չեն հասարակ,

Ինչպէս որ կան առհասարակ,
 Այլ գուտ ոսկի կճեպներով
 Ու գմբուխտէ միջուկներով.
 Կճեպներից փող են կտրում
 Ու գործածում սաղ աշխարհում:
 Կղզու Գլիզոն իշխանը մեծ
 Քեզ շատ ու շատ բարե արեց»:
 Երբ որ լսեց այդ բոլորը,
 Շատ զարմացաւ թագաւորը
 Ու որոշեց. «Թէ սաղ ֆնամ,
 Գլիզոնի մօտ հիւր կը գնամ»:
 Զուհական ասաց մեծ արքային.
 «Զարմանալու ի՞նչ կայ այստեղ.
 Հրաշք ասեմ ու զարմացէք.
 Ծովը յուզում, ալեկոծում,
 Աղմկում է ու փոթորկում.
 Ալիքների ուժգին թափը
 Դուրս է բերում դէպի ափը
 Երեսներեք դիւցազուններ,
 Թեփազրահ քաջ հսկաներ՝
 Երիտասարդ, սիրունատես,
 Հսկաները մէկ-մէկու պէս:
 Ա՛յ թէ ուր է իսկ զարմանքը,
 Բուն հրաշքն ու արմանքը»:

Գլիզոն դարձեալ ծովի ափին
 Ըսպասում է իր կարապին:
 Ահա ջրում նա լող տալով՝
 Բարե տաւ մօտենալով.
 «Է՞ր ես, իշխան իմ աննման,

Տխուր՝ թխպած օրւայ նման»:
 — Զարմանալի հրաշք կայ մի,
 Որ ուզում եմ մօտս լինի:
 — Ի՞նչ հրաշք է, ասա տեսնեմ,
 Գուցէ դարդիդ ճարը գտնեմ:
 «Չգիտեմ ուր, ծովը յուզում,
 Աղմկում է, ալեկոծում.
 Ալիքների ուժգին թափը
 Դուրս է բերում դէպի ափը
 Երեսներեք դիւցազուններ,
 Թեփազրահ քաջ հսկաներ՝
 Երիտասարդ, սիրունատես,
 Հսկաները մէկ-մէկու պէս»:
 «Դարդ մի անիլ, գնա, իշխան,
 Նրանք քեզ մօտ շուտ հիւր
 կը գան»:

Ահա յանկարծ ծովը յուզեց,
 Աղմկելով ալեկոծեց:
 Ալիքների ուժգին թափը
 Բերաւ դէպի ծովի ափը
 Երեսներեք դիւցազուններ,
 Հրեղէն թափով քաջ հսկաներ.
 «Մենք կարապի կողմից զրկւած՝
 Եկել ենք, որ արթուն հսկենք,
 Քո քաղաքը միշտ պահպանենք»:

Նաւակն եկաւ նաւահանգիստ,
 Հիւրերն իջան, առնեն հանգիստ:
 Իշխան Գլիզոն կանչել տաւ
 Ու հիւրերին պալատ տարաւ,

Նրանց մի լաւ հիւրասիրեց,
Պատիւ տւաւ, ապա հարցրեց.
— Էդ ո՞ւր բարով, ո՞ւր էք գնում: Խոհարարն ու շուկահէն խալառ.
— Մեծ Սալթանի հողն ենք գնում: Մընացել են լուռ, անբարբառ.
Ս.յն ժամանակ իշխանն ասաց. Իսկ Բաբարիխ սեահոգին
«Տարէք Սալթան թագաւորին Ծիծաղում է քթի տակին.
Ինձնից բարեւ, յարգանք խորին»: «Միթէ զարմանք կայ այդ
բանում».

Հիւրերն ահա ծովափ եկան. Ծովից այն կողմ թագաւորի
Տուն հրաւիրեց նրանց արքան: Աղջիկ կայ մի հիւրի-փէրի,
«Ո՞րտեղ էիք, ման եկաք շատ, Որ էլ չուտես, էլ չխմես,
Ծովից այն կողմ լաւ է թէ վատ. Նստես նրան մտիկ անես.
Ի՞նչ տեսակ են՝ այնտեղ ապրում, Օրւայ լոյսն է նսեմացնում,
Ու ի՞նչ հրաշք կայ աշխարհում»: Գիշերն աշխարհ լուսաւորում,
«Ծովում կղզի կայ փառաւոր, Աստղ է վառւում լայն ճակատին,
Կղզու վրայ բաղաք մի նոր. Լուսնեակ շողում ծամի տակին.
Ամենայն օր ծովը յուզւում, Դուրս է լողում ջրից հանդարտ
Աղմկւում է, ալեկոծւում. Սիրամարգի պէս՝ սէզ, հպարտ-
Ալիքների ուժգին թափը Երբ խօսում է, ձայնն աննման
Դուրս է բերում դէպի ափն Կրկրում է առի՛ նման:
Նրեաներեք զիւցազուններ, Ա՛յ թէ ուր է բուն՝ զարմանքը,
Փայլուն թեփով քաջ հսկաներ՝ Բուն հրաշքն ու արմանքը»:
Ներտասարգ, սիրունատես,
Հսկաները մէկ-մէկու պէս,
Որ այն կղզու վրայ հսկեն,
Նրան պահեն ու պաշտպանեն.

Կղզու Գւիգօն իշխանը մեծ
Քեզ շատ ու շատ բարեւ արեց»:
Երբ որ լսեց այդ բոլորը,
Շատ զարմացաւ թագաւորը
4.

Գւիգօն դարձեալ ծովի ափին
Ըսպասում է իր կարապին:
Նա լող տալով ահա ջրում՝
Մօտենում է ու բարեւում.
«Է՛ր ես, իշխան իմ աննման,

Տխուր ամառած օրւայ նման»:
«Ասում են, որ թագաւորի
Աղջիկ կայ մի հիւրի-փէրի,
Որ էլ չուտես, էլ չխմես,
Նստես, նրան մտիկ անես.
Օրւայ լոյսն է նսեմացնում,
Գիշերն աշխարհն լուսաւորում»:
— Իբրեւ անկեղծ խորհրդատու
Առաջարկում եմ քեզ, որ դու
Դրա մասին լաւ միտք անես,
Որ վերջումը չփոշմանես»:
Գւիգօն իշխանն սկսեց երգել,
Թէ արդէն լաւ միտք է արել,
Որոշել է պսակւելս,
Կեանքի ընկեր ունենալու:
Կարապն այստեղ հոգոց հանեց
Ու Գւիգօնին պատասխանեց.
«Թագաւորի աղջիկն եմ ես,
Նա եմ, որին դու փնտռում ես».
Թափահարեց իր թևերը,
Թողեց ցածում ալիքները,
Թաւ վերեւ եթերի մէջ,
Իջաւ ափը թփերի մէջ

Ու ինքն իրան պինդ թափ առաւ,
Թագաւորի աղջիկ դառաւ:
Աստղ էր վառւում լայն ճակատին,
Լուսնեակ շողում ծամի տակին.
Ընթանում էր վեհ ու հանդարտ.
Սիրամարգի նման հպարտ.
Նրանց մի լաւ հիւրասիրեց,
Պատիւ տւաւ, ապա հարցրեց.
— Էդ ո՞ւր բարով, ո՞ւր էք գնում:
— Մեծ Սալթանի հողն ենք գնում:
Ս.յն ժամանակ իշխանն ասաց.
«Տարէք Սալթան թագաւորին
Ինձնից բարեւ, յարգանք խորին,
Յիշեցրէք, որ խօսք է տրւել
Մեզ մօտ հիւր գալ, բայց չի
եկել»:
Հիւրերն ահա ծովափ եկան.
Տուն հրաւիրեց նրանց արքան:
«Ո՞րտեղ էիք, ման եկաք շատ,
Ծովից այն կողմ լաւ է թէ վատ.
Ի՞նչ տեսակ են այնտեղ ապրում,
Ու ի՞նչ հրաշք կայ աշխարհում»:
— Ա՛յ ինչ հրաշք կայ աշխարհում.

Ծովում կղզի կայ փառաւոր,
 Կղզու վերայ քաղաք մի նոր.
 Այնտեղ կայ մի ուրիշ զարմացք,
 Զտեսնւած ուրիշ հիացք,
 Իսկ իշխանը մի կին ունի,
 Որ աշխարհում հատը չունի,
 Որ էլ չուտես, էլ չխմես,
 Նստես, նրան մտիկ անես.
 Օրւայ լոյսն է նսեմացնում,
 Գիշերն աշխարհ լուսաւորում,
 Աստղ է վառւում լայն ճակատին,
 Լուսնեակ շողում ծամի տակին:
 Կղզու Գիւղօն իշխանը մեծ
 Քեզ շատ ու շատ բարե արեց.
 Նեղացել է, խօսք ես տւել,
 Որ հիւր գնաս, չես գնացել»:
 Էլ Սալթանը չհամբերեց
 Ու նաւատորմ շուտ պատուիրեց:

5.

Նաւատորմը լող է տալիս,
 Սալթան արքան հիւր է գալիս:
 Իշխան Գիւղօն ուրախացաւ,
 Տեղից թռաւ ու ձայն տւաւ.
 «Ե՛կ, հարազատ անգին մայրիկ,
 Ե՛կ, ամուսինս էլ սիրունիկ.
 Շուտով ելէք, նայէք այն կողմ,
 Հիւր է գալիս հայրիկն այս կողմ»..
 Թնդանօթներ որոտացին
 Ու զանգերը ղողանջեցին.
 Գիւղօն ծովի ափն է գնում,
 Թագաւորին զիմաւորում.
 Եւ պալատի դռների մօտ
 Արքան տեսաւ անվհեւրոտ
 Երեսներեք զիւցազուններ,
 Իսկ լայն բակում նա տեսաւ մի
 Մշտադալար մեծ եղևնի,
 Տակին սկիւռ, որն երգում,
 Ոսկէ ընկոյզ է կրծոտում,
 Միջից հանում զմրուխտներն
 Ու լքցնում տուպրակները.
 Հիւրերն շտապ մէկ էլ նայում
 Զէր Աստուած, ինչ են
 տեսնում,
 Մի հրաշալի իշխանուհի՝
 Հիւրի փէրի գեղեցկուհի,
 Աստղ էր վառւում լայն ճակատին,
 Լուսնեակ շողում ծամի տակին
 Ընթանում էր վեհ ու հանդարտ
 Սիրամարգի նման հպարտ,
 Հետը բերում իր ըսկեսրոջ...
 Ճանաչում է արքան կնոջ...
 «Այս ի՞նչ բան է, ի՞նչ եմ
 տեսնում,
 Արցունքն աչքին բացականչում
 Ու գրկում է նա թագուհուն,
 Զահէլ հարսին ու իր որդուն...
 Ամենքն ապա սեղան նստան,
 Սկսեցին խինդ ու խրախճան

Զուհակի հետ խոհարարը
 Ու Բաբարիխ խռովարարը
 Փախան, քունջ ու պուճախ մտան
 Եւ նրանից ամեն մէկը
 Խոստովանեց արած մեղքը,
 Սմենայն բան պատմեց մէկ-մէկ:
 Լացեց զառն ու յուսաբեկ:
 Բայց այդ ուրախ օրւայ համար՝
 Սալթան արքան գտաւ յարմար՝
 Երեքին էլ իսպառ ներել
 Ու դէպի տուն ճանապարհել:



Երկու խօսք	2	20 Մանուկը ձորում, Պետր.	26
I. Աշուն		21 Խելացի դատաւորը	27
1 Վեր կաց, ոտ. Դ. Մելոյեան	3	22 Կռունկներ, ոտ. Պետ. Մոճոռեան	29
2 Քաջ մանուկներ	4	23 Խելօք մարդը, ձեռագիր, (այ, ւ.)	30
3 Աշուն, ոտ. Յ. Աղաբաբ	4	24 Աքաղաղի ընտանիքը	31
4 Արևն ու ծիածանը	5	25 Աքլորն ու մարգարիտը, ոտ. Աթ. Խնկոյեան	33
5 Գիւղացու ձին, ժողովրդ.	6	26 Խելօք մըջիւններ	33
6 Կլէկէի Կարօն	7	Պատկեր դիտելու և պատմելու համար	34
7 Զութակահարը	8	27 Զրիկ տօլման, ժողովրդ. ձեռագիր (իկ. եկ. ներ.)	35
8 Մարօի տնակը, ձեռագիր (ակ.հ.)	9	28 Ուղտն ու էջը, ոտան.	36
9 Խուլի այծերը, Աթ. Խնկ.	11	29 Մոլլի գրազը, ժողովրդ.	38
Պատկեր դիտելու և պատմելու համար	12	30 Մայրը	39
10 Ծառերի վէճը	12	31 Կապիկն ու ակնոցը, ոտան. Աթ. Խնկոյեան	40
11 Խոզն ու կաղնին, ոտան. Աթ. Խնկոյեան	14	32 Ձեռագիր նամակ, (իկ. եր. ներ.)	42
12 Չար մկնիկը, փոխադր.	14	33 Քեռի կառապանը	43
13 Հովւի ցուպը, Սրւանձտեան	16	34 Ռ՝վ է ցանում	45
Կատու, ոտան. ժողովրդ. ձեռագիր (եր. ներ.)	17	Պատկեր դիտելու և պատմելու համար	47
14 Տերենները, նմանողութ.	19	35 Հօտաղ վարդան, ձեռագիր (վ, ւ, օ.)	48
15 Հանելուկ	19	36 Մոլլի մեղրը, ժողովրդ.	49
16 Որամիտ մոլլան	20	37 Իժը	50
Պատկեր դիտելու և պատմելու համար	21	38 Աշուն, ոտան. Հ. Հայրապետեան	52
Ուռնի, ոտան. ձեռագ. (ենի. ել.) Աթ. Խնկոյեան	22	39 Անձրեկ, ձեռագ. (ոյ, այ)	52
17 Ծանձը	22	40 Ժամկոչը և ուխտաւորը, ոտ. Պետ. Մոճոռեան	54
18 Ծանձը, ոտան. Աթ. Խնկ.	24	41 Ողնին, փոխադր.	55
19 Արծուի սէրը	25		

42 Տղան և թռչնիկը, ոտան. 2.
 Զիլինկարեան 57

II.

43 Զմեռ, ոտ. Հ. Հայրապետեան 58
 Պատկեր դիտելու և պատմե-
 լու համար 58
 44 Շողիկն ու Պէծիկը, Դ. Դեմիր-
 ճեան 59
 45 Տօնածառ, ոտան. Հ. Հայրա-
 պետեան 62
 46 Նոր տարւայ նւէրը, ոտ. Հ. Հայ-
 րապետեան 62
 47 Դանակը 63
 48 Մկան ընտանիքը 64
 49 Իլիկ, ոտան. Յ. Աղաբաբ 67
 50 Բողբոջ, ձեռ. (ուկ, եօ) 68
 51 Դատաւորը 70
 52 Շիմօն (կապիկը) 71
 53 Զիթով ձւածեղ, ժողովր. ձե-
 ոագիր (ո, ով, ւ) 72
 54 Դարիւր մշեցին, ոտան. 74
 55 Խելացի ծերունին 74
 56 Փաթիլները, ոտան. Հայրա-
 պետեան 77
 Պատկեր դիտելու և պատմե-
 լու համար 78
 57 Պուտուկը, ոտան. ձեռագիր
 (մեծատառերի և կէտադ.
 համար), Աթ. Խնկոյեան 79
 58 Խորամանկ աղւէսը 80
 56 Աղւէսը, ոտան. Հ. Հայրապե-
 տեան 81
 57 Ծպուռն ու մըջիւնը, ոտան.
 Աթ. Խնկոյեան 81
 58 Մատնէմատ 82
 59 Դարբին, ոտան. Կ. Մ. Շահ-
 նազարեան 84
 60 Իմաստուն մանուկը 85

61 Յորեկ եղաւ, ոտան. (ա, իկ) 87
 62 Տէրն ու ծառան, Յովհաննէս
 Թումանեան 88

III.

63 Դարուն է, ոտան. Յ. Աղաբաբ 94
 64 Դարնան հրաւէր 95
 65 Մանուշակ, ոտան. Դողոթեան 97
 66 Խելացի սարգը 97
 67 Սարգը, ոտան. Հ. Հայրա-
 պետեան 98
 68 Քամի, ձեռ. (իւ, եա) 98
 69 Զորս եղբայր, ոտան. 100
 70 Պահապան ճնճղուկը 101
 71 Թէյ 102
 72 Յորեն ու գարին 103
 73 Հատիկ, ոտան. ձեռագիր,
 (ւ, ով), Յով. Յովհաննիսեան 105
 74 Գիւղացու ընկերը 106
 75 Աշխատանքի ախպէրը, ոտ.
 Յ. Աղաբաբ 107
 76 Հարսի ճուտերը, ձեռ. (օ, յ,
 բառասկզբին) ժող. 107
 77 Հետաքրքիր հանելուկ 109
 78 Մեղու, ոտան. 111
 79 Դարբին, ոտ. ձեռագիր, մի
 մասը (ոց, ած) Կ. Մ. Շահ-
 նազարեան 112
 80 Կեռասը 112
 Փայտի կտոր տեսայ տաշած,
 ձեռ. (ած), ժող. 114
 81 Հաւի ընտանիքը 114
 82 Մայրիկ, ոտ. ձեռագիր Հ.
 Հայրապետեան 116
 83 Նանի նւէրները, ոտան. Յ.
 Աղաբաբ 117
 84 Կռուկները, ոտան. ձեռա-
 գիր (ւ) 118
 85 Կարմրախայտը 118

86 Ինչ կանես արա, ձեռագիր
 (ա, յ բառավերջին, հետ,
 յետ), ժողովրդական 120
 87 Գող կաշաղակը, ժող. 121
 88 Կաշաղակ, ոտան. Յ. Աղա-
 բաբ 122
 89 Ես չու ուտեմ, ձեռագ. (ե
 բառասկզբին և միջին),
 ժողովրդական 122
 90 Բաղի ընտանիքը 124
 Մի լինիր ուրագի պէս,
 ձեռագիր (պէս, դէպի,
 քեզ, մեզ), ժողովրդ. 126
 91 Նանի հրաւէրը, ոտան.
 Յ. Աղաբաբ 126
 92 Ո՞վ է ուժեղ 127
 93 Դաշտի վարդը, ոտան.
 ձեռագիր (մեծատառերի
 վարժ.) Յովհ. Յովհան. 128
 94 Սարգն ու շերամը, փոխա-
 դրութիւն 128

Ձեռագիր փոքր և մեծա-
 տառեր 129
 95 Հըմա կերանք, ոտան.
 Աթ. Խնկոյեան 130
 96 Այ բաղնիք արին հա,
 Սիմակի 130
 97 Մանուկը ձորում, ոտան.
 մի մասը ձեռագիր (ով,
 իկ, եմ) 131
 98 Ընկերասէր շունը 132
 99 Գէլը հարկահան, ոտան.
 Հ. Հայրապետեան 133
 Էն ինչ է, ձեռագիր
 (ած, ով) ժողովրդական 134
 100 Նապաստակի տունը, ոտ.
 Աթ. Խնկոյեան 135
 101 Անտառը, ոտան, Հ. Հայ-
 րապետեան 138
 102 Սալթան թագաւորի հէ-
 քիաթը, ոտ. Յար. Թու-
 մանեան 138

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1 Երկինք ու աստղեր	6	7 Օձ	52
2 Դիր	8	8 Զիւն	61
3 Արագիւ	10	9 Յորեն, դարի	105
4 Աչք	26	10 Փշատ	114
5 Երազ	33	11 ա) Մեղր	134
6 Մեղր	50	12 բ) Յորեն	134



16-16
12-08

4159
2013



